

F I S C A L   A F F A I R S   D E P A R T M E N T

## Հայաստանի Հանրապետություն

# Ֆիսկալ թափանցիկության գնահատում

Տեխնիկական զեկույց | Հունվար, 2019թ.



I N T E R N A T I O N A L   M O N E T A R Y   F U N D

Ֆ Ի Ս Կ Ա Լ    Հ Ա Ր Ց Ե Ր Ի  
Վ Ա Ր Չ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

---

## Հայաստանի Հանրապետություն

## Ֆիսկալ թափանցիկության գնահատում

Յոհան Սայվալդ, Ֆազիր Շեյբ Ռահիմ, Վիերա Կառուլովա, Ջոն Զոհրաբ, Վահրամ Զանվեյան եւ Էյվինգ  
Թանդերգ



Տեխնիկական գեկույց

Հունվար, 2019թ.

Սույն գեկույցը պարունակում է տեխնիկական աջակցության («ՏԱ») վերաբերյալ Հայաստանի իշխանությունների («ՏԱ ստացող») ներկայացրած դիմումին ի պատասխան Արժույթի միջազգային հիմնադրամի («ԱՄՀ») աշխատակազմի կողմից ցուցաբերվող տեխնիկական խորհրդատվությունը: Սույն գեկույցը (ամբողջությամբ կամ մասամբ) կամ դրանից ֆալվաժֆներ կարող են ԱՄՀ-ի կողմից տրամադրվել ԱՄՀ-ի գործադիր տնօրեններին և վերջիններին աշխատակազմի անդամներին, ինչպես նաև՝ ՏԱ ստացողի այլ մարմիններին և կառույցներին, իսկ նրանց խնդրանքով՝ նաև Համաշխարհային բանկին և տեխնիկական աջակցություն ցուցաբերող այլ կառույցներին և իրավաչափ շահ ունեցող այլ դոնորներին, բացառությամբ երբ ՏԱ ստացողն ուղղակիորեն առարկում է այդ տրամադրմանը (տե՛ս Տեխնիկական աջակցության սեղեկությունների տարածման վերաբերյալ գործառնական ուղեցույցը՝

<http://www.imf.org/external/np/pp/eng/2013/061013.pdf>):

Սույն գեկույցը (ամբողջությամբ կամ մասամբ) կամ դրանից ֆալվաժֆներ ԱՄՀ-ից դուրս հրապարակելու համար, բացառությամբ ՏԱ ստացողի կառույցների և մարմինների, Համաշխարհային բանկի և տեխնիկական աջակցություն ցուցաբերող այլ կառույցների և իրավաչափ շահ ունեցող այլ դոնորների, պահանջվում է ՏԱ ստացողի և ԱՄՀ-ի Ֆիսկալ հարցերի վարչության անմիջական համաձայնությունը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ</b>	<b>8</b>
<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>10</b>
<b>ԱՄՓՈՓԱԳԻՐ</b>	<b>12</b>
<b>I. ՖԻՍԿԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ</b>	<b>20</b>
1.1. Ֆիսկալ հաշվետվությունների ընդգրկումը	23
1.2. Ֆիսկալ հաշվետվությունների հաճախականությունը և յուրաժամությունը	33
1.3. Ֆիսկալ հաշվետվությունների որակը	35
1.4. Ֆիսկալ հաշվետվությունների ամբողջականությունը	38
Առաջարկություններ	41
<b>II. Ֆիսկալ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎարՈՒՄ</b>	<b>46</b>
2.1. Բյուջետային փաստաթղթերի համապարփակությունը	48
2.2. Կարգավորվածությունը	57
2.3. Քաղաքականության կողմնորոշումը	58
2.4 Արժանահավատությունը	65
Առաջարկություններ	73
<b>III. Ֆիսկալ ՌԻՍԿԵՐԸ</b>	<b>78</b>
3.1. Ռիսկերի հրապարակումը և վերլուծությունը	80
3.2. Ֆիսկալ ռիսկերի կառավարումը	85
3.3. Ֆիսկալ համակարգումը	100
Առաջարկություններ	1095
<b>ՏԵՔՍՏԱԹԻՆ ՆԵՐԴԻՐՆԵՐ</b>	
Տեքստայի ներդիր 1.1. Վիճակագրական վերանայումները	38
Տեքստայի ներդիր 2.1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության ծառայության ծրագիրը	62
Տեքստայի ներդիր 2.2. Շվեդիայի ֆիսկալ քաղաքականության խորհուրդը՝ արդյունավետ է, չնայած փոքր բյուջեին	66
Տեքստայի ներդիր 2.3. Կանխատեսումների համադրումը	71

**ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ**

Գծապատկեր 1.1. Հայաստան. Հանրային հատվածի հաստատությունների ընդգրկումը ֆիսկալ հաշվետվություններում \_\_\_\_\_ 25

Գծապատկեր 1.2. Հայաստան. հանրային հատվածի հաշվեկշռի ընդգրկումը ֆիսկալ հաշվետվություններում, 2016 թ. \_\_\_\_\_ 28

Գծապատկեր 1.3. Հանրային հատվածի համախառն պարտավորությունները որոշ պետություններում (ՀՆԱ-ի տոկոս) \_\_\_\_\_ 29

Գծապատկեր 1.4. Հանրային հատվածի զուտ ակտիվները որոշ պետություններում (ՀՆԱ-ի տոկոս) \_\_\_\_\_ 30

Գծապատկեր 1.5. Հարկային ծախսերը ընտրված երկրներում \_\_\_\_\_ 32

Գծապատկեր 1.6. Բյուջետային հաշվետվությունների հաճախականությունը և յուրաժամությունը, ըստ SDDS-ի բաժանորդների \_\_\_\_\_ 34

Գծապատկեր 1.7. Տարեկան ֆիսկալ հաշվետվությունների յուրաժամությունը \_\_\_\_\_ 35

Գծապատկեր 1.8. Հայաստան. պաշար-հոսք ճշգրտումը, 2016 թ. \_\_\_\_\_ 37

Գծապատկեր 1.9. Հայաստան. ընդհանուր կառավարության զուտ վարկավորումը/փոխառությունը՝ ըստ GFSM2001 և SNA 2008 հաշվետվությունների \_\_\_\_\_ 40

Գծապատկեր 2.1. ԱԲՀ-ների եկամուտների կազմը \_\_\_\_\_ 49

Գծապատկեր 2.2. Սեփական աղբյուրից եկամուտները \_\_\_\_\_ 49

Գծապատկեր 2.3. Իրական ՀՆԱ-ի կանխատեսումները \_\_\_\_\_ 51

Գծապատկեր 2.4. Գնաճի կանխատեսումները \_\_\_\_\_ 51

Գծապատկեր 2.5. Հայաստանում իրական ՀՆԱ-ի կանխատեսման սխալմունքը, ըստ կանխատեսման հեղինակի \_\_\_\_\_ 51

Գծապատկեր 2.6. Բյուջեի առավելագույն սահմանաչափը և նույն տարվա ՄԺԾԾ-ի առավելագույն սահմանաչափը \_\_\_\_\_ 53

Գծապատկեր 2.7. Միջնաժամկետ ֆիսկալ կանխատեսման միջին սխալմունքը ընտրված երկրներում, 2007–16 թթ. \_\_\_\_\_ 54

Գծապատկեր 2.8. Հանրային ներդրումները ընտրված երկրներում \_\_\_\_\_ 56

Գծապատկեր 2.9. Ֆիսկալ կանոնների Էվոյուցիան Հայաստանում \_\_\_\_\_ 60

Գծապատկեր 2.10. Դեֆիցիտները և դեֆիցիտի կանոնը \_\_\_\_\_ 61

Գծապատկեր 2.11. Պարտքը և պարտքի կանոնները	61
Գծապատկեր 2.12. Իրական ՋՆԱ-ի կանխատեսումների համեմատություն	67
Գծապատկեր 2.13. Բյուջեի վերանայումներ (բացառությամբ ԱԲՀ-ների)	68
Գծապատկեր 2.14. Հայաստան. Բյուջեից դուրս թուլատրված ծախսեր	68
Գծապատկեր 2.15. Հավելյալ բյուջեների միջին թիվը ընտրված երկրներում	69
Գծապատկեր 3.1. Երկրների համեմատություն. անվանական ՋՆԱ-ի, փոխարժեքի և պետական եկամուտների տատանողականությունը	82
Գծապատկեր 3.2. Հանրային հատվածի պարտքի փոփոխությունը պայմանավորող գործոնները	82
Գծապատկեր 3.3. Հանրային պարտքի մակրոզգայնության վերլուծություն	83
Գծապատկեր 3.4. Առողջապահության կանխատեսվող ծախսերը	86
Գծապատկեր 3.5. Կենսաթոշակային կանխատեսվող ծախսերը	86
Գծապատկեր 3.6. Պահուստային ֆոնդի հանրագումարային օգտագործումը	87
Գծապատկեր 3.7. Խոշոր և մանր ծախսային հոդվածները	87
Գծապատկեր 3.8. Փոխարժեքի տատանողականությունը և արտարժույթով պարտքը ընտրված երկրներում	89
Գծապատկեր 3.9. Կառավարության երաշխիքները որոշ պետություններում (2014 թ.)	92
Գծապատկեր 3.10. ՊՄԳ կապիտալի պաշարը տարբեր երկրներում (2014 թ.)	93
Գծապատկեր 3.11 Երկրների համեմատություն. ֆինանսական հատվածի ոչ բաժնեմասային պարտավորությունները ընտրված երկրներում	96
Գծապատկեր 3.12. Բանկային կայունության քարտեզ	96
Գծապատկեր 3.13. Չաշխատող վարկերը շուկայի հատվածներում	96
Գծապատկեր 3.14. Բնական աղետների պատճառած միջին տարեկան կորուստը (AAL) և հավանական առավելագույն կորուստը (PML) ընտրված երկրներում	100
Գծապատկեր 3.15. ՏԻՄ-երի չափերը և ֆինանսական ինքնուրույնությունը ընտրված երկրներում	102
Գծապատկեր 3.16. Պետական ընկերությունների շահույթը (2016 թ.)	104
Գծապատկեր 3.17. Կառավարության օժանդակությունը պետական ընկերություններին	104
Գծապատկեր 3.18. Հայաստանի պետական ընկերությունների պարտավորությունները	105
Գծապատկեր 3.19. Որոշ երկրների պետական ընկերությունների պարտավորությունները	105

**ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ**

Աղյուսակ 0.1. Հայաստան. ամփոփ գնահատում ըստ Ֆիսկալ թափանցիկության կանոնագրի _____	17
Աղյուսակ 0.2. Հայաստան. հանրային հատվածի ֆինանսների մասին ամփոփ տեղեկատվություն, 2016 թ. _____	18
Աղյուսակ 1.1. Հայաստան. ֆիսկալ հաշվետվությունների ցանկ _____	23
Աղյուսակ 1.2. Հայաստան. հանրային հատվածի կառույցները եւ ֆինանսները, 2016 թ. ____	24
Աղյուսակ 1.3. Ծախսերն ըստ տնտեսական տեսակի՝ ՊՈԱԿ-ներով և առանց դրանց _____	36
Աղյուսակ 1.4. Գնահատման ամփոփումը. Ֆիսկալ հաշվետվություններ _____	45
Աղյուսակ 2.1. Բյուջետավարմանն առնչվող հիմնական օրենքները _____	48
Աղյուսակ 2.2. Հայաստան. բյուջետավարմանն առնչվող հաշվետվությունները _____	48
Աղյուսակ 2.3. Բյուջեի նախագծի ներկայացման և հաստատման ամսաթվերը, 2014 – 2018 թթ. _____	58
Աղյուսակ 2.4. Իրական ՀՆԱ-ի կանխատեսման սխալմուկքը _____	66
Աղյուսակ 2.5. ՄԺԾԾ-ների և տարեկան բյուջեների միջև համախառն ծախսերի ցուցանիշներն համադրող աղյուսակի օրինակ _____	71
Աղյուսակ 2.6. 2018 թվականի կանխատեսման սխալմուկքի բացվածքը _____	73
Աղյուսակ 2.7. Գնահատման ամփոփումը. ֆիսկալ կանխատեսումները և բյուջետավարումը _____	76
Աղյուսակ 3.1. Հայաստան. ֆիսկալ ռիսկերին վերաբերող հաշվետվություններ _____	79
Աղյուսակ 3.2. Ֆիսկալ հատուկ ռիսկերը _____	83
Աղյուսակ 3.3. Կենտրոնական կառավարության ֆինանսական ակտիվները և պարտավորությունները (միլիոն դրամ) _____	89
Աղյուսակ 3.4. ՊՄԳ գործող պայմանագրերը _____	92
Աղյուսակ 3.5. Ֆինանսական հատվածի ֆինանսական ցուցանիշները _____	94
Աղյուսակ 3.6. Գնահատման ամփոփումը. ֆիսկալ ռիսկերը _____	109

**ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

I. Հայաստան. Կառավարության ֆիսկալ թափանցիկության գործողությունների ծրագիրը (2018–21 թթ.) _____	112
II. Տեխնիկական տեղեկանք աղյուսակ 0.2-ի վերաբերյալ _____	125
III. Հատուկ ֆիսկալ ռիսկերի հաշվարկ _____	131

# ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

ԱՀՍ	Ազգային հաշիվների ստանդարտներ
ԱՍՀՆ	Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՀՕ	Բյուջետային համակարգի մասին օրենք
ԲՄԱՕ	Բյուջեի մասին ամենամյա օրենք
ԳՄՀ	Գանձապետական միասնական հաշիվ
ՀԶՌ	Հայաստանի գարգացման ռազմավարություն
ՀՀԴ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՖԿ	Հանրային ֆինանսական կառավարում
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ԶԱՎ	Զախտառոյ վարկ
ՊԲՊԿՎ	Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչություն
ՊԳԿՎ	Պետական գույքի կառավարման վարչություն
ՊԿՀ	Պարտքի կայունության հաշվետվություն
ՊՄԳ	Պետական-մասնավոր գործընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՊՕ	Պետական պարտքի մասին օրենք
ՎՀՊ	Վերահսկիչ պալատ
ՎՊ	Վերստուգիչ պալատ
ՎԶԵԲ	Վերակառուցման եւ գարգացման եվրոպական բանկ
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՖՀՎ	Ֆիսկալ հարցերի վարչություն
ՖՌԳԲ	Ֆիսկալ ռիսկերի գնահատման բաժին
ՖՌՏ	Ֆիսկալ ռիսկերի մասին տեղեկանք
ՖԹԿ	Ֆիսկալ թափանցիկության կանոնագիրք
ՖԹԳ	Ֆիսկալ թափանցիկության գնահատում
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
APSAS	Հայաստանի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներ
COFOG	Կառավարության գործառույթների դասակարգում



DEG	Deutsche Investitions-und Entwicklungsgesellschaft
EITI	Հանճարայլունահանող ոլորտների թափանցիկության նախաձեռնություն
GFSM 2001	Կառավարության ֆինանսների վիճակագրության ձեռնարկ, 2001
GIZ	Gesellschaft für Internationale Zusammenarbeit
INTOSAI	Առաջիտի պետական կառույցների միջազգային կազմակերպություն
IPSAS	Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ
ISA	Առաջիտի միջազգային ստանդարտներ
UNISDR	Միավորված ազգերի կազմակերպության աղետների ռիսկի կրճատման գրասենյակ

## ՆԱԽԱԲԱՆ

Ֆինակալ թափանցիկության գնահատում (ՖԹԳ) իրականացնելու նպատակով 2018 թվականի մարտի 28-ից ապրիլի 10-ը Երևան այցելեց Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Ֆինակալ հարցերի վարչության (ՖՀՎ) տեխնիկական առաքելությունը: Առաքելության ղեկավարն էր պրն. Յոհան Սայվալդը (ՖՀՎ), անդամները՝ պրն. Ֆազիր Շեյբ Ռահիմը (ՖՀՎ), տկն. Վիերա Կաուլսկան (ՏԱ), պրն. Ջոն Ջոնսոնը (տարածաշրջանային խորհրդատու), պրն. Վահրամ Ջանվելյանը (ԱՄՀ-ի տեղի գրասենյակ) եւ պրն. Էյվինգ Թանդերգը (կարճաժամկետ վարձագետ):

Առաքելությունն հանդիպեց Ֆինանսների նախարար պրն. Վարդան Արամյանին, Նախարարի առաջին տեղակալ պրն. Ատոմ Ջանջուզյանին եւ նախարարի տեղակալ պրն. Արմեն Հայրապետյանին, ինչպես նաեւ Ֆինանսների նախարարության այլ բարձրաստիճան պաշտոնյաների՝ ներառյալ Մակրոտնտեսական ֆազաբանության վարչությունից, Բյուջետային բյուրոյից, Բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչությունից, Ֆինակալ ռիսկերի գնահատման բաժնից (ՖՌԳԲ), Պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչությունից (ՊԲՊԿՎ), Բյուջեի կառավարման հաշվետվությունների վարչությունից, Պետական պարտքի կառավարման վարչությունից եւ Պետական հատվածի հաշվապահության մեթոդաբանության եւ հաշվետվությունների մոնիտորինգի վարչությունից:

Առաքելությունը նաեւ հանդիպեց Խորհրդարանի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ պրն. Գ. Մինասյանին, Վերահսկիչ պալատին, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը (ԱՄՀՆ), ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) Ֆինանսական համակարգի կայունության եւ զարգացման վարչությանը, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը, Պետական գույքի կառավարման վարչությանը, Ազգային վիճակագրական ծառայությանը (ԱՎԾ), Պետական եկամուտների կոմիտեին, Ներդրումների ներգրավման եւ համակարգման վարչությանը եւ Էլեկտրոնիկայի նախարարությանը:

Առաքելությունն իր եզրակացությունների եւ Առաջարկությունների վերաբերյալ տեղեկություններ հաղորդեց Համաշխարհային բանկի, GIZ-ի (Gesellschaft für Internationale Zusammenarbeit) եւ ԱՄՆ ՄՁԳ-ի (USAID) ներկայացուցիչներին:

Առաքելությունը ցանկանում է բաց ֆինանսականության եւ հարգալիք վերաբերմունքի համար շնորհակալություն հայտնել իշխանություններին՝ մասնավորապես պրն. Էդվարդ Հակոբյանին առաքելության ողջ ընթացքում ցուցաբերած օժանդակության համար: Առաքելությունը շնորհակալություն է հայտնում նաեւ Հայաստանում ԱՄՀ-ի մշտական ներկայացուցիչ տկն. Յուլիա Ուստյուգովային եւ նրա գրասենյակի անձնակազմին՝ մասնավորապես գրասենյակի կառավարիչ տկն. Մարինա Ալեքսանյանին, առաքելության աշխատանքին բովանդակային մասնակցության եւ խիստ

կարևոր կազմակերպչական օժանդակության համար: Առաքելությունը ցանկանում է նաև բանավոր և գրավոր թարգմանության գերազանց ծառայությունների համար երախտագիտություն հայտնել պրն. Խաչատուր Ադունյանին և սկն. Լիլիթ Սիմոնյանին:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Վերջին տասնամյակում պետական ֆինանսների կառավարման բարեփոխումները նպաստավոր են եղել Հայաստանի ֆիսկալ թափանցիկության գործելակերպերի համար, և նախատեսվող որոշ բարեփոխումներ հետագա առաջընթաց կապահովեն:** Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ), բարելավված ֆիսկալ նպատակների և ծրագրային բյուջետավարման համակարգի ներդրմամբ՝ ֆիսկալ կանխատեսումները և բյուջեներն ավելի ապագայամետ և ֆազաբաշխության կողմնորոշում ունեցող են դարձել: Ֆիսկալ ռիսկի բացահայտումը, թեև հատվածական է, սակայն աստիճանաբար բարելավվել է, մասնավորապես մակրոֆիսկալ ռիսկի գնահատման ուղղությամբ, և մեակվում է ՊՄԳ օրենք: Հաշվեգրման հիմնունով հաշվապահական հաշվառման բարեփոխման շնորհիվ զգալորեն կբարելավվի բյուջեի կառավարման հաշվետվությունների և ֆիսկալ վիճակագրության ընդգրկումը և որակը, որոնք արդեն կառավարության ֆինանսական վիճակի վերաբերյալ տրամադրում են ժամանակի և հաճախակի տեղեկություններ:

**Հետևաբար, առկա են ֆիսկալ թափանցիկության առողջ գործելակերպի տարրերից շատերը:** Հաշվետվությամբ ներկայացվում է ֆիսկալ թափանցիկության գործելակերպի գնահատումն՝ ըստ ԱՄՀ-ի Ֆիսկալ թափանցիկության կանոնագրի (ՖԹԿ): Հայաստանը 36 սկզբունքներից 16-ի դեպքում բավարարում է լավ կամ առաջադեմ գործելակերպի չափանիշը, իսկ ևս 14 սկզբունքների դեպքում՝ նվազագույն գործելակերպի չափանիշը (Այլուսակ 0.1): Հայաստանի ֆիսկալ թափանցիկության գործելակերպերն ուժեղ և թույլ կողմեր ունեն ՖԹԿ բոլոր ոլորտներում՝ ֆիսկալ հաշվետվությունների ներկայացում, ֆիսկալ կանխատեսումների իրականացում և բյուջետավարում և ֆիսկալ ռիսկի բացահայտում և կառավարում: Մի քանի հիմնական ուժեղ կողմերն են.

- Մեկ ամսվա ընթացքում տարբեր դասակարգումներից կազմված բյուջեի կառավարման ամսական հաշվետվության և 4 ամսվա ընթացքում պետական կառավարման հատվածի ֆինանսական վիճակագրության հրատարակումը.
- Միջնաժամկետ ծախսերի ծրագրի և տարեկան բյուջեի ներկայացումը՝ մակրոտնտեսական համապարփակ կանխատեսումներով, ֆիսկալ նպատակներով և կատարողականի մասին տեղեկություններով, որոնք խորհրդարանին են ներկայացվում սահմանված ժամկետում՝ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի դրույթների համաձայն.
- Պետական ֆինանսների մակրատնտեսական այլընտրանքային սցենարների ազդեցության վերլուծությունը և ֆիսկալ առանձին ռիսկերի վերաբերյալ տարբեր վաստաթղթերում ֆիսկալ ռիսկի բացահայտումը.
- Պետական կորպորացիաների ֆինանսական կատարողականի մանիտորինգի կիսամյակային հաշվետվություններն արտացոլում են հանրագումարային և ընկերությունների բացվածքով տվյալներ պետական կորպորացիաների մեծ մասի վերաբերյալ, իսկ կառավարության և պետական կորպորացիաների միջև իրականացվող առանձին տրանսֆերտները բացահայտվում են բյուջեի վաստաթղթերում: ՊՈԱԿ-ները ֆիսկալ ռիսկերի կարևոր ուղղություններից մեկն են՝ հաշվի առնելով այն, որ այս հատվածի պարտավորությունները (ՀՆԱ-ի 15 տոկոսը) բարձր են, իսկ շահութաբերությունը՝ ցածր:

**Միևնույն ժամանակ գնահատմամբ ընդգծվում են մի շարք ոլորտներ, որտեղ առկա է Հայաստանի ֆիսկալ թափանցիկության գործելակերպերի հետագա բարելավման հնարավորություն.**

- Որևէ առանձին ֆիսկալ հաշվետվությամբ պետական կառավարման հատվածի գործունեության ամբողջական պատկերը չի ներկայացվում, և անհրաժեշտություն կարող է առաջանալ Հայաստանում վնասով աշխատող մի շարք պետական ընկերություններին (որոնց բաժին է ընկնում ՀՆԱ-ի մոտավորապես 2 տոկոսը) պետական կառավարման հատվածում վերադասակարգելու համար, սակայն ներկայումս չի կատարվում դրանց շուկայական կամ ոչ շուկայական լինելու ստուգում:
- ԿԳՎԶ 2014 (GFSM 2014)-ի և ԱՀՀ 2008 (SNA 2008) վրա հիմնված վիճակագրական հաշվետվություններում բյուջետային մնացորդային գումարների միջև տարբերությունները զգալի են և կազմում են 2.5 տոկոս, իսկ շեղումները չեն բացատրվում:
- Ֆիսկալ կանոնների համակարգի վերջին փոփոխությունները, որոնք նպատակաուղղված են դրանք ավելի նկուն դարձնելուն, պահանջում են արժանահավատության ամրապնդման և համապատասխանության ապահովման ջանքեր: Խորհրդարանի բյուջետային գրասենյակը կառավարության ֆիսկալ կանխատեսումներին և ֆիսկալ ֆայնանսականության նպատակներին համապատասխանության անկախ գնահատումների կատարման գործառնայթ չունի: Միևնույն տարվա ՄԺԾԾ-ի և տարեկան բյուջեի միջև խոշոր տարբերությունները (ՀՆԱ-ի 0.6 տոկոսը) լավ չեն բացատրվում և համապնդման աղյուսակի տեսքով պատճառներն չեն գրանցվում:
- Բյուջետային հատկացումներում տարվա ընթացքում զգալի փոփոխությունների ներկա գործելակերպը կարող է նաև խթանել բյուջեի արժանահավատությունը: Միջին հաշվով ծախսերի 8.6 տոկոսը օրենսդիր մարմնի կողմից բացահայտարեն չի հաստատվում: Այն ներառում է արտաբյուջետային հաշիվներից կատարվող ծախսերը, որոնք բյուջեում նախատեսված չեն, Կառավարության պահուստային ֆոնդը և տարվա ընթացքում բյուջետային հատկացումների վերանայումները:
- Ֆիսկալ առանձին ռիսկերի վերաբերյալ տեղեկությունները հատվածական են, ներկայացվում են ՄԺԾԾ-ի տարբեր բաժիններում, տարեկան բյուջետային և մի շարք այլ փաստաթղթերում: Թեև ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ (պետական կառավարման հատվածի 65 տոկոսը) հրապարակվում է ռիսկերի համապարփակ վերլուծություն, ֆինանսական ակտիվների վերաբերյալ ռիսկերի հրապարակված վերլուծություն առկա չէ, թեև վերավարկավորումը, միջպետական վարկերը և բյուջետային վարկերը (26 տոկոս) ենթակա են զգալի, մասնավորապես՝ արժեքի գնահատման ռիսկերի:
- Պետություն-մասնավոր հատված 4 գործընկերություններից (ՊՄԳ-ներ), որոնց կապիտալի պաշարը կազմում է ՀՆԱ-ի 10.2 տոկոսը, միայն 2-ի համար է ներկայացվում ռիսկերի գնահատում, թեև այնպիսի կարևոր տեղեկություններ, ինչպիսիք են ընդհանուր իրավունքները և պարտավորությունները, բացակայում են: ՊՄԳ օրենքը նախապարաստման ընթացքում է, որով պետ է ուղղորդվի նախատեսվող շատ ծրագրերի կառավարումը:

**Սույն գնահատման հիման վրա հաշվետվությամբ ներկայացվում է տաս Առաջարկություն՝ նպատակաուղղված առաջնահերթ համարվող ոլորտներում ֆիսկալ թափանցիկության հետագա բարելավմանը:** Մասնավորապես, դրանք են՝

1. Բյուջեի կատարման ինստիտուցիոնալ ընդգրկման ընդլայնումը՝ կենտրոնական կառավարությունը ներառելու, իսկ վիճակագրական հաշվետվությունների դեպքում՝ կառավարման պետական հատվածը, այդ թվում՝ ոչ շուկայական պետական կազմակերպությունները և համայնֆային ոչ առևտրային կազմակերպությունները ներառելու համար.
2. Կենտրոնական կառավարության հաշվեկռի հրապարակումը և դրա ծածկույթի ընդլայնումը՝ պետական կառավարման հատվածի ներառմամբ.
3. Ֆիսկալ հաշվետվությունների համապատասխանության, համադրելիության և ամբողջականության բարելավումը՝ ներկայացնելով հիմնական ֆիսկալ ամփոփ տվյալների համադրումը.
4. Հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրմամբ ֆիսկալ հաշվետվությունների համապարփակության, որակի և համեմատելիության բարելավման ապահովումը.
5. ՄԺԾԾ և բյուջետային փաստաթղթերի ամրապնդումը՝ ՄԺԾԾ-ում և բյուջեի ուղերձում ներառելով ֆիսկալ կանոններին համապատասխանության մասին հայտարարությունը և եկամուտների և ծախսերի համադրման աղյուսակները.
6. Անկախ գնահատման ուժեղացումը՝ ապահովելով ֆիսկալ կանոնների փաստացի համապատասխանության աուդիտը Հաշվեհանիչ պալատի կողմից, և Խորհրդարանի Բյուջետային գրասենյակում տեխնիկական կարողությունների ստեղծումը՝ Խորհրդարանական բյուջետային գրասենյակի միջնաժամկետ դերակատարմանը՝ բյուջեի նախագծի նախնական համապատասխանության գնահատմանը նախապատասխանելու համար.
7. Տարվա ընթացքում բյուջեի վերանայումների կրճատումը՝ արտաբյուջետային հաշիվները ներառելով տարեկան բյուջեում, և կառավարության պահուստային ֆոնդի հասանելիության հստակ չափանիշների սահմանումը.
8. Բյուջետային փաստաթղթերում համախմբված ֆիսկալ ուսույթի ամփոփագրի (ՀՌԱ) ներկայացումը և ՖՆ ստորաբաժանմանը ՀՌԱ համակարգման պատասխանատվության վերապահումը.
9. ՊՄԳ-ների իրավական դաշտում ՊՄԳ-ների հստակ և համապարփակ սահմանման նախատեսման, և Հայաստանի ֆիսկալ կանոնին համապատասխան ՊՄԳ կուտակված այլ պարտավորությունների մասով օրենքով սահմանաչափի նախատեսման ապահովումը, և
10. Պետական ընկերությունների վերաբերյալ հաշվետվությունների ընդլայնումը՝ դրանց ֆինանսական արդյունքների, շահերի բախման և բյուջետային ազդեցությունների ավելի ամբողջական պատկերը ներկայացնելու համար:

**Առաջարկությունների իրականացումը որոշ ջանքեր կպահանջի, և կառավարության համար կարող է օգտակար լինել կարողությունների գարգացման խնդրում ԱՄՆ-ի և այլ ՏՄ սրամադրողների աջակցությունը:** Հավելված 1-ում Առաջարկությունները ներկայացվում են ըստ առաջնահերթության և 2018-21թթ. ժամանակահատվածում հաջորդականությամբ դասակարգված գործադրությունների ծրագրի տեսքով:

**Ֆիսկալ թափանցիկության գնահատմամբ հաշվարկվում է նաև Հայաստանի հանրային հատվածի ֆինանսական դիրքը՝ հանրային ֆինանսների վերաբերյալ ավելի համապարփակ տեսակետ ներկայացնելու համար:** Հստ դրա հաշվարկի՝ հանրային հատվածի համախմբված ծախսերը 2016 թ. կազմում են ՀՆԱ-ի 45.7 տոկոսը, հանրային հատվածի տիրապետման տակ գտնվող ակտիվները և պարտավորությունները՝ ՀՆԱ-ի 108.8 և 109.1 տոկոսը, իսկ հանրային հատվածի զուտ ակտիվները՝ ՀՆԱ-ի 0.3 տոկոսը (Աղյուսակ 0.2): Թեև կառավարման հատվածի պակասուրդը և զուտ ակտիվներն էականորեն չեն տարբերվում կենտրոնական կառավարության մասով ներկայացված ամփոփ ցուցանիշներից, ընդհանուր հանրային հատվածի գործունեության ցուցանիշները շատ ավելի բարձր են:

**Սույն հաշվետվության մնացած բաժիններում ներկայացվում է Հայաստանի ֆիսկալ թափանցիկության գործելակերպերի մանրամասն գնահատումն՝ ըստ ՖԹԿ չափանիշների և բերվում են հիմնական թերությունների վերացմանն ուղղված մի խումբ Առաջարկություններ: Այն ունի հետևյալ կառուցվածքը.**

- Գլուխ I-ում գնահատվում են ներկայացվող ֆիսկալ հաշվետվությունների ընդգրկումը (ծածկույթը), յուրաժանությունը, սրակը և ամբողջականությունը.
- Գլուխ II-ում գնահատվում են ֆիսկալ կանխատեսումների և բյուջետավարման համապարփակությունը, կանոնավորությունը, բաղափականության կողմնորոշումը և արժանահավաստությունը.
- Գլուխ III-ում գնահատվում են ֆիսկալ ռիսկերի հրապարակման և կառավարման մեխանիզմները:

Աղյուսակ 0.1-ում ներկայացվում է Հայաստանի կատարողականն՝ ըստ ՖԹԿ-ի, աղյուսակ 0.2-ում տրվում է 2016թ. Հայաստանի հանրային հատվածի ամփոփ ֆինանսական նկարագրի նախնական և մասնակի գնահատականը:

Գործելակերպի մակարդակ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ			
	Զի բավարարվում	Նվազագույն	Լավ	Առաջադեմ

Կարևորության մակարդակ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆ		
	Բարձր	Միջին	Ցածր

**Աղյուսակ 0.1. Հայաստան. ամփոփ գնահատում ըստ Ֆիսկալ թափանցիկության կանոնագրի**

I. Ֆիսկալ հաշվետվությունների ներկայացում	II. Ֆիսկալ կանխատեսումներ և բյուջետավարում	III. Ֆիսկալ ռիսկերի վերլուծություն և գնահատում
Հաստատությունների ընդգրկում	Բյուջեի միասնականություն	Մակրոտնտեսական ռիսկեր
Պաշարների ընդգրկում	Մակրոտնտեսական կանխատեսումներ	Ֆիսկալ հատուկ ռիսկեր
Հոսքերի ընդգրկում	Միջնաժամկետ բյուջետային շրջանակ	Երկարաժամկետ ֆիսկալ կայունություն
Հարկային ծախսերի ընդգրկում	Ներդրումային ծրագրեր	Բյուջեով չնախատեսված ծախսեր
Տարվա ընթացքում հաշվետվությունների ներկայացման հանրաժանություն	Ֆիսկալ օրենսդրություն	Ակտիվների և պարտավորությունների կառավարում
Տարեկան հաշիվների յուրաժանություն	Բյուջետային փաստաթղթերի յուրաժանություն	Երաշխիքներ
Դասակարգում	Ֆիսկալ ֆաղափականության նպատակներ	Պետական-մասնավոր գործընկերություն
Ներքին համապատասխանություն	Կատարողականի վերաբերյալ տեղեկություններ	Ֆինանսական հատված
Պատմական տվյալների վերանայումներ	Հանրային մասնակցություն	Բնական պաշարներ
Վիճակագրության ամբողջականություն	Անկախ գնահատում	Շրջակա միջավայրի ռիսկեր
Արտաքին աուդիտ	Հավելյալ բյուջե	ՏԻՄ-եր
Ֆիսկալ տվյալների համեմատելիություն	Կանխատեսումների համադրում	Պետական ընկերություններ



**Աղյուսակ 0.2. Հայաստան. հանրային հատվածի ֆինանսների մասին ամփոփ տեղեկատվություն, 2016 թ. (ՀՆԱ-ի տոկոս)**

	General Government					Public corporations			Consolidation	Public Sector
	Central Government	o / w: State Budget	Local Government	Consolidation Gen. Govt.	Consolidated Gen. Govt.	Nonfinancial	Financial	Central bank		
<b>Transactions</b>										
Revenue	23.5	23.1	2.6	-1.2	24.9	9.4	0.0	0.6	-0.1	34.8
Expenditure	30.2	29.8	2.5	-1.2	31.6	13.6	0.0	0.7	-0.1	45.7
Expense	25.6	25.2	2.5	-1.2	27.0	8.8	0.0	0.6	-0.1	36.3
Investment in NFA	4.5	4.5	0.0	0.0	4.6	4.8	0.0	0.1	0.0	9.4
<b>Net operating balance</b>	<b>-2.2</b>	<b>-2.2</b>	<b>0.1</b>	<b>0.0</b>	<b>-2.1</b>	<b>0.6</b>	<b>0.0</b>	<b>-0.1</b>	<b>0.0</b>	<b>-1.5</b>
<b>Net lending/borrowing</b>	<b>-6.7</b>	<b>-6.7</b>	<b>0.1</b>	<b>0.0</b>	<b>-6.6</b>	<b>-4.1</b>	<b>0.0</b>	<b>-0.1</b>	<b>0.0</b>	<b>-10.9</b>
<b>Stocks</b>										
<b>Assets</b>	<b>60.6</b>	<b>56.8</b>	<b>10.8</b>	<b>0.0</b>	<b>71.4</b>	<b>21.5</b>	<b>0.3</b>	<b>32.3</b>	<b>-16.3</b>	<b>109.1</b>
Nonfinancial	34.2	31.7	10.8	0.0	45.0	16.4	0.0	2.0	0.0	63.5
Financial	26.4	25.2	0.0	0.0	26.4	5.0	0.3	30.3	-16.3	45.7
<b>Liabilities</b>	<b>71.1</b>	<b>68.1</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>71.1</b>	<b>21.5</b>	<b>0.3</b>	<b>32.3</b>	<b>-16.3</b>	<b>108.8</b>
Liabilities, other than equity	71.1	68.1	0.0	0.0	71.1	15.4	0.2	32.2	-10.0	108.8
Equity	0.0	0.0	0.0	0.0	0.0	6.1	0.1	0.1	-6.3	0.0
<b>Net worth</b>	<b>-10.4</b>	<b>-11.3</b>	<b>10.8</b>	<b>0.0</b>	<b>0.3</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>0.3</b>
<b>Net financial worth</b>	<b>-44.7</b>	<b>-42.9</b>	<b>0.0</b>	<b>0.0</b>	<b>-44.7</b>	<b>-16.4</b>	<b>0.0</b>	<b>-2.0</b>	<b>0.0</b>	<b>-63.1</b>
<b>Net fin.worth incl. pension liabilities</b>	<b>-96.2</b>	<b>-94.5</b>			<b>-96.2</b>					<b>-114.7</b>

*Notes: estimated non-financial assets and liabilities from PPPs of 10.2 percent of GDP; estimated explicit military pension liability of 6.1 percent of GDP; estimated implicit pension liabilities of 51.5 percent of GDP*

Աղբյուրը՝ GFSM 2014 գեկույց, Հայաստանի իշխանություններ (Գանձապետարան, ՖՆ-ի պարտքի վարչություն, Պետական գույքի կառավարման վարչություն, Բաժնետոմսերի վարչություն, Պարտավորությունների վարչություն), 207 պետական ոչ ֆինանսական կորպորացիաների, Կենտրոնական բանկի, այդ թվում նրա 10 մասնաճյուղերի, Հայաստանի Զարգացման և ներդրումներ կորպորացիայի, Հայաստանի Արտահանման ապահովագրական գործակալության ֆինանսական հաշվետվություններ, ԱՄՇ-ի անձնակազմի հաշվարկներ:

Նշումներ՝ Կենտրոնական կառավարությունը ներառում է բյուջետային կենտրոնական կառավարության համախմբված տվյալները, այդ թվում սոցիալական ապահովության գործունեությունը և արտաբյուջետային միավորները: Կենտրոնական կառավարության տվյալները ներառում են ՊՄԳ-ների ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք, հաշվարկների համաձայն, կազմում են ՀՆԱ-ի 10.2 տոկոսը, ինչպես նաև զինծառայողների գծով կենսաթոշակային ուղղակի պարտավորությունները, որոնք, ըստ գնահատման, կազմում են ՀՆԱ-ի 6.1 տոկոսը: Բաշխողական հիմունքով գործող կենսաթոշակային սխեմայի ենթադրվող պարտավորությունները (ՀՆԱ-ի 51.5 տոկոս) ներառված չեն պարտավորությունների տվյալներում, բայց արտացոլված են «Զուտ ֆինանսական կապիտալ, ներառյալ կենսաթոշակային պարտավորությունները» ծանոթագրային հոդվածում: Հավելված II-ում ներկայացված են լրացուցիչ մանրամասներ տվյալների աղբյուրների և կիրառված մեթոդների մասին:

Այս հաշվարկների միջոցով փորձ է արվել ներկայացնել Հայաստանի պետական հատվածի ֆինանսների լայն պատկերը՝ բյուջետային տարբեր հաշվետվություններում հրապարակված տվյալները փոխլրացնելով տվյալների ամենաէական բացերի առկայությանը ԱՄՇ-ի անձնակազմի կատարած հաշվարկներով, որոնք կատարվել են՝ հղում անելով «GFSM 2014»-ին:

«GFSM 2014»-ը և պետական հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտները դեռևս չեն իրականացվում պետական հատվածի բոլոր միավորների կողմից: Տվյալների աղբյուրների սահմանափակության և դրանց կազմման համար անհրաժեշտ ժամանակի սղության պայմաններում այս վարժության արդյունքը պետք է դիտարկվի որպես Հայաստանի պետական հատվածի ֆինանսների մոտավոր պատկեր:

## I. ՖԻՍԿԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

**1. Ֆիսկալ հաշվետվությունները պետք է համապարփակ, ժամանակին, արժանահավատ, համադրելի և հասանելի կերպով ամփոփ ներկայացնեն կառավարության ֆինանսական կատարողականը, ֆինանսական դիրքը և դրամական հոսքերը:** Այս գլխում Հայաստանի ֆիսկալ հաշվետվությունների ներկայացման գործելակերպի որակը գնահատվում է ԱՄՆ-ի Ֆիսկալ քափանցիկության կանոնագրի համեմատությամբ՝ հետևյալ չափումներով.

- Հանրային հատվածի հաստատությունների ընդգրկում, պաշարներ և հոսքեր
- Հաշվետվությունների հանախականության և յուրաժանության,
- Ֆիսկալ հաշվետվությունների որակ, հասանելիություն և համադրելիություն, և
- Հաշվետվություններում ներկայացվող ֆիսկալ տվյալների արժանահավատություն և անբողջականություն:

**2. Հայաստանը զգալի քայլեր է կատարել վերջին տասնամյակի ընթացքում բյուջեի կատարողականի մասին հաշվետվությունների ներկայացումը և ֆիսկալ վիճակագրության բարելավելու ուղղությամբ:** Կարևոր առաջնություններից կարելի է նշել.

- Կառավարության ֆինանսների վիճակագրության 2001 թ. ձեռնարկի (GFSM 2001) ընդունումը 2008 թվականին՝ բյուջեի տնտեսական դասակարգման համար,
- Բյուջեի կատարողականի մասին ամսական և եռամսյակային հաշվետվությունների հրատարակումը՝ դրամարկային սկզբունքով,
- Ազգային հաշիվների թվականի համակարգի (SNA) ընդունումը 2008 թվականին և ընդհանուր կառավարական հատվածի համար տարեկան ազգային հաշիվների հրատարակումը, և
- Նախարարությունների մակարդակում Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (IPSAS) հիման վրա հաշվապահական հաշվառման նոր ազգային համակարգի մեկնարկը, որն ավարտին է հասցվելու 2025 թվականին:

**3. Հայաստանի հիմնական ամփոփ ֆինակալ հաշվետվությունները ներառում են հետևյալը.**

- **Բյուջեի կատարողականի մասին ամսական և եռամսյակային հաշվետվությունների** կազմումը Գանձապետարանի բյուջեի կատարման վարչության կողմից: Ամսական հաշվետվություններում ներկայացվում են պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման փաստացի ցուցանիշները՝ դրամարկղային սկզբունքով: Եռամսյակային հաշվետվություններում պետական բյուջեի և ՏԻՄ-երի վերաբերյալ առավել մանրակրկիտ տվյալներ են ներկայացվում՝ ըստ եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման տնտեսական խմբերի:
- **Պետական պարտքի տվյալները և սեղեկագրերը** կազմվում են ՖՆ-ի Պարտքի վարչության կողմից ամսական, եռամսյակային և տարեկան կտրվածքով: Հաշվետվությունները պետական պարտքի վերաբերյալ մանրամասներ են պարունակում՝ ըստ ռեզիդենտության, արժույթի, ժամկետայնության և սովորապես ստեղծված խմբերի:
- **Տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը**, որը պատրաստվում է Գանձապետարանի բյուջեի կատարման վարչության կողմից և ներկայացնում է դրամարկղային եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման ամփոփ փաստացի ցուցանիշները՝ ընդգրկելով պետական բյուջեի և ՏԻՄ-երը: Տվյալները ՊՈԱԿ-ների մասին (որոնք օգտագործում են հաշվեգրման հաշվապահական համակարգ) բյուջեի կատարման հաշվետվությունների մեջ համախմբվելու են այն ժամանակ, երբ իրականացված կլինեն հաշվապահական բարեփոխումները:
- **Ֆինակալ վիճակագրությունը** պատրաստվում է ՖՆ-ի Պարտքի վարչության կողմից ըստ GFSM 2014-ի, ինչպես նաև Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից՝ ըստ SNA 2008 մեթոդաբանության: Երկու հաշվետվություններն ընդգրկում են ընդհանուր կառավարական հատվածի մեծ մասը: Թեպետ SNA-ի վրա հիմնված տարեկան ոչ դրամարկղային ազգային հաշվերն հրապարակվում են կանոնավոր կերպով, կանխիկով GFSM 2014 տվյալներ տրամադրվում են միայն ԱՄՆ-ին և ազգային մակարդակով չեն հրապարակվում:

**4. Թեպետ Հայաստանը մեծ ծավալի ֆինակալ տվյալներ է ներկայացնում հաշվետվություններում,**

**հաշվետվությունների ներկայացումն հատվածական է և ոչ միտ է հասանելի հանրությանը:** Առավել համապարփակ հաշվետվությունները, բյուջեի կատարման մասին հաշվետվությունները և ֆինակալ վիճակագրությունը ներառում են միայն հոսքերը: Պաշարների վերաբերյալ որոշ տվյալներ նույնպես հասանելի են, սակայն՝ սխալված են կենտրոնական կառավարության և ՏԻՄ տարբեր մարմինների տարաբնույթ հաշվետվություններում: ՊՈԱԿ-ների հաշվետվությունները և պետական ընկերությունների մեծ մասի հաշվետվությունները չեն հրապարակվում: ՀՈԱԿ-ների մասին տվյալներն հասանելի են միայն ՏԻՄ-երին:

**5. Հայաստանը ներկայումս չի պատրաստում կառավարական հատվածի ֆինանսական հաշվետվություններ**

**միջազգային ստանդարտների հիման վրա:** Խորհրդային դարաբաժանի ստանդարտի օգտագործումը շարունակվելու է մինչև հաշվեգրումային IPSAS-ի վրա հիմնված հաշվապահական հաշվառման նոր համակարգի լիարժեք ներդրումը:

Հաշվապահական հաշվետվությունները ներկայումս չեն ներկայացվում ֆինանսական հաշվետվությունների տեսքով, որոնցում եկամուտների և ծախսերի հոսքերը կկապվեն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վտփոխությունների հետ: Առկա համախմբված հաշվեկշիռն արտացոլում է կառավարության գուտ ակտիվների միայն մի վտփր մասնաբաժինը, քանի որ այնտեղ ներառված են միայն նյութային նախարարությունների գործառնական գործունեությանն առնչվող ակտիվները և պարտավորությունները:

**6. Հայաստանի կողմից պատրաստվող հիմնական ֆիսկալ հաշվետվությունները ներկայացված են 1.1 աղյուսակում:**

**Աղյուսակ 1.1. Հայաստան. ֆիսկալ հաշվետվությունների ցանկ**

Հաշվետվություն	Հեղինակ	Ընդգրկում			Հաշվապահություն		Հրատարակում	
		Կառույց	Հոսք	Պատար	Հիմք	Դասակ.	Հաճախակ.	Ժամկետ տարբ.
<b>Հաշվետվություններ տարվա ընթացքում</b>								
Բյուջեի կատարման ամսական հաշվետվություն	ՖՆ	ԲԿԿ	Ե, Ծ, Ֆին	...	Դրամ.	Ազգ.	Ամսական	30 օր
Պետական բյուջեի ցուցանիշներ	ՖՆ	ԲԿԿ	Ե, Ծ, Ֆին	...	Դրամ.	Ազգ.	Ամսական	30 օր
Պետական պարտքի տվյալներ	ՖՆ	ԲԿԿ	Ֆին	Պարտք	Ոչ գրամ.	Ազգ.	Ամսական	30 օր
Բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվություն	ՖՆ	ԿԿ, ՏԻՄ	Ե, Ծ, Ֆին	...	Դրամ.	Ազգ.	Եռամսյակ.	30 օր
Համախմբված բյուջե	ՖՆ	ԿԿ, ՏԻՄ	Ե, Ծ, Ֆին	...	Դրամ.	Ազգ.	Եռամսյակ.	30 օր
ՏԻՄ բյուջե	ՖՆ	ՏԻՄ	Ե, Ծ, Ֆին	...	Դրամ.	Ազգ.	Եռամսյակ.	30 օր
Պետական պարտքի ցուցանիշներ	ՖՆ	ԲԿԿ	...	Պարտք	Ոչ գրամ.	Ազգ.	Եռամսյակ.	30 օր
<b>Տարեկերքի հաշվետվություններ</b>								
Բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն	ՖՆ	ԿԿ, ՏԻՄ	Ե, Ծ, Ֆին	...	Դրամ.	Ազգ.	Տարեկան	4 ամիս
Պետական պարտքի հաշվետվություն	ՖՆ	ԲԿԿ		Պարտք, ավանդներ	Ոչ գրամ.	Ազգ.	Տարեկան	5 ամիս
Կառավարության ֆինանսների տարեկան վիճակագրություն (չի կրապարակվում)	ՖՆ	ԲԿԿ, ՊՈԱԿ-ներ, ՏԻՄ	Ե, Ծ, Ֆին	...	Դրամ.	GFSM 2014	...	...
Ազգային հաշիվներ	ԱՎԾ	ԲԿԿ, ՊՈԱԿ-ներ, ՏԻՄ	Ե, Ծ	...	Ոչ գրամ.	SNA 2008	Տարեկան	18 ամիս

Ծանոթագրություն. ԲԿԿ՝ բյուջետային կենտրոնական կառավարություն, ԿԿ՝ կենտրոնական կառավարություն, ՏԻՄ՝ տեղական ինքնակառավարման մարմիններ, ԸԿ՝ ընդհանուր կառավարություն, ՈՖՀՀ՝ ոչ ֆինանսական հանրային հատված, ՀՀ՝ հանրային հատված, Ե՝ եկամուտ, Ծ՝ ծախս, Ֆին՝ ֆինանսավորում, ՈՖԱ՝ ոչ ֆինանսական ակտիվներ, ՖԱ՝ ֆինանսական ակտիվներ, Պ՝ պարտավորություններ:

## 1.1. Ֆիսկալ հաշվետվությունների ընդգրկումը

### 1.1.1. Ընդգրկումն ըստ կառույցների (բազային)

**7. Հայաստանի հանրային հատվածը ներառում է տարբեր կազմակերպարավական ձևեր ունեցող առնվազն 3,464 միավորներ:** Ստույգ թիվն անհայտ է, քանի որ գոյություն չունի հանրային միավորների համապարփակ ցանկ: Ինչպես ներկայացված է 1.2 աղյուսակում, միավորները բաժնված են հետևյալ ենթադասիաների միջև.

- **Կենտրոնական կառավարություն**, որը ներառում է ընդհանուր թվով 1,961 միավորներ, այդ թվում՝ 66 կենտրոնական կառավարության բյուջետային միավորներ,<sup>1</sup> եւ 1,895 ՊՈԱԿ-ներ<sup>2</sup>, որոնք դասակարգվում են որպես արտաբյուջետային ֆոնդեր (ԱԲՖ-ներ): Սոցիալական ապահովության եկամուտներն ու ծախսերը ներառված են պետական բյուջեում:
- **Տեղական ինքնակառավարում**, որը ներառում է ընդհանուր թվով առնվազն 1,201 միավոր, այդ թվում՝ 502 համայնք եւ մի քանի հազարավոր<sup>3</sup> ԱԲՖ-ներ-ՀՈԱԿ-ներ, որից 699-ը, ի լրումն ոչ շուկայական գործունեության, իրականացնում են նաև սահմանափակ ծավալով առևտրային գործունեություն:
- **Հանրային ոչ ֆինանսական ընկերություններ**, որոնց թվում են մոտ 288 ընկերություններ, որոնք վերահսկվում են կենտրոնական կառավարության կողմից, Նված ընկերություններից 241-ը բաժնետիրական ընկերություններ են: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ընկերությունների թիվն անհայտ է:
- **Հանրային ֆինանսական ընկերություններ**, որոնք 14 միավոր են՝ ներառյալ երկրի Կենտրոնական բանկը եւ վերջինիս 10 տարածքային ստորաբաժանումները, ինչպես նաև պետության կողմից վերահսկվող երեք պետական ընկերություններ (Հայաստանի զարգացման եւ ներդրումների ընկերություն, Հայաստանի ավանդների հատուցումը երաժիշտությունը հիմնադրամ եւ Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն):

### Աղյուսակ 1.2. Հայաստան. հանրային հատվածի կառույցները եւ ֆինանսները, 2016 թ.

(ՀՆԱ-ի տոկոս, եթե այլ բան նշված չէ)

<sup>1</sup> Թիվը վերաբերում է ընդհանուր բյուջեի կառավարիչներին:

<sup>2</sup> ՊՈԱԿ-ները եւ ՀՈԱԿ-ները պետական եւ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք հիմնականում իրականացնում են շահույթի նպատակ չհետապնդող գործունեություն, օր՝ կրթություն, գիտահետազոտական աշխատանքներ եւ մշակույթ:

<sup>3</sup> ՀՈԱԿ-ների ստույգ թիվը հասանելի չէ:

	Number of entities	Revenue	Expenditure	Balance	Intra-PS expenditure	Net expenditure
Public Sector	3,464	36.1	47.0	-10.9	-1.3	45.7
General government	3,162	26.1	32.7	-6.6	-1.2	31.6
Central government (consolidated)	1,961	23.5	30.2	-6.7	-1.2	29.0
State Budget	66	23.1	29.8	-6.7	-1.2	28.6
State Non-Commercial Organizations	1,895	0.4	0.4	0.0	0.0	0.4
Local government (consolidated)	1,201	2.6	2.5	0.1	0.0	2.5
Marzes, towns, and villages	502	2.4	2.5	0.1	0.0	2.5
Municipal Non-Commercial Organizations	699	0.2	0.1	0.0	0.0	0.1
Nonfinancial public corporations	288	9.4	13.6	-4.1	-0.1	13.4
Central Bank	1	0.6	0.7	-0.1	0.0	0.7
Other financial public corporations	13	0.0	0.0	0.0	0.0	0.0

Source: Number of entities- Armenia Authorities; Data: GFS compiled by the MoF IMF Staff Estimates

Աղբյուրը՝ GFSM 2014 գեկույց, Հայաստանի իշխանություններ, պետական ընկերությունների ֆինանսական հաշվետվություններ (Կենտրոնական բանկի տվյալները ներառում են նրա 10 մասնաճյուղերին) և ԱՄՀ-ի անձնակազմի հաշվարկներ:


Նշում՝ «Էկամուտների» և «Ծախսերի» րվային հանրագումարային տվյալները տարբերվում են՝ պայմանավորված միջ-ուղարային գործառնությունների համախմբմամբ:

**8. Հայաստանի հանրային հատվածի ծախսերը 2016 թվականին կազմել են ՀՆԱ-ի 34.8 տոկոսը:** Աղյուսակ 1.2-ում ամփոփված է հանրային ռեսուրսների բաշխումն հանրային հատվածի տարբեր ենթաուղարային միջև 2016 թվականին՝ մասնավորապես.

- **Ընդհանուր կառավարության** գուտ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 29.2 տոկոսը, որի մոտ 91 տոկոսը ծախսվել է կենտրոնական կառավարության կողմից, իսկ 1 տոկոսը՝ ՏԻՄ-երի միջոցով: Ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերը (ՀՆԱ-ի մոտ 3.5 տոկոս) գրեթե ամբողջովին ֆինանսավորվում են կառավարության տրանսֆերտների տեսքով:
- **Պետական ընկերությունների** գուտ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի լրացուցիչ 5.6 տոկոսը, որի մոտ 5 մեծամասնությունը ծախսվել է ոչ ֆինանսական ընկերությունների կողմից:

**9. Չկա որևէ հաշվետվություն, որը լիարժեքներ կընդգրկեր կա՛մ ընդհանուր կառավարությունը, կա՛մ հանրային հատվածի գործունեությունը:** Բյուջեի կատարման հաշվետվություններում համախմբված են ըստ բյուջետային կենտրոնական կառավարության եւ ՏԻՄ-երի, սակայն ԱԲՑ-ներ հանդիսացող ՊՈԱԿ-ների եւ ՀՈԱԿ-ների գործունեությունն ընդգրկված չէ: Թեպետ GFSM 2014-ի ամենամյա վիճակագրական հաշվետվությունները ներկայացնում են ուղարտի առավել համապարփակ ծածկույթը, որովհետև ներառում են նաև տվյալներ ՊՈԱԿ-ների վերաբերյալ, սակայն դրանք չեն ընդգրկում ՀՈԱԿ-ները, որոնց հաշվետվությունները չեն հրատարակվում: ԱՎԾ-ն հավաքում է հրատարակում է SNA 2008-ին համապատասխան ազգային հաշիվների վրա հիմնվող տարեկան տվյալներ, թեև ուղարտների սահմանման նկատմամբ կիրառվող մոտեցումը լիովին չի համապատասխանում միջազգային վիճակագրական ստանդարտներին:

**Գծապատկեր 1.1. Հայաստան. Հանրային հատվածի հաստատությունների ընդգրկումը ֆիսկալ հաշվետվություններում (յուրաքանչյուր մակարդակի ծախսերի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ)**



Այդպիսով՝ Հայաստանի իշխանությունները, ԱՄՀ-ի անձնակազմի հաշվարկներ: Ծանոթագրություն. “Not Reported” վերաբերում է այն միավորների ծախսերին, որոնք համախմբված չեն ամփոփ ֆիսկալ (բյուջեի կատարման մասին) հաշվետվություններում:

**10. Հայաստանի ֆիսկալ հաշվետվությունների ինստիտուցիոնալ ընդգրկումն ավելացնելու եւ ողջ հանրային հատվածը ներառելու դեպքում պահասուրդը կաճեր ՀՆԱ-ի 1.3 տոկոսի չափով և այն կունենար էական ազդեցություն եկամուտների և ծախսերի վրա:** ՊՈԱԿ-ները եւ ՀՈԱԿ-ները ներառելու դեպքում եկամուտները եւ ծախսերը կավելանային ՀՆԱ-ի 0.6 տոկոսի չափով, սակայն դեֆիցիտը կմնար անփոփոխ: Ծածկույթն էլ ավելի մեծացնելու և դրանում պետական կորպորացիաները ներառելու դեպքում հաշվեգրման հիմունքով եկամուտները կաճեին ՀՆԱ-ի 4.4 տոկոսի, իսկ ծախսերը՝ ՀՆԱ-ի 5.7 տոկոսի չափով, որի արդյունքում հանրային հատվածի ընդհանուր պահասուրդը կկազմեր ՀՆԱ-ի 6.8 տոկոսը:

**11. Հավանական է, որ Հայաստանում վնասով աշխատող մի շարք պետական ընկերություններ կդասակարգվեն ընդհանուր կառավարության հատվածի ներքո:** Կառավարության կողմից մանրթորինգի ենթարկվող 199 պետական ընկերություններից 49-ը կուտակել են ՀՆԱ-ի 2.8 տոկոսի հավասար վնասներ (բացասական չբաշխված շահույթ): Սրանք հիմնականում ենթարկվել են ջրային տնտեսության ոլորտներում, իսկ որոշ առումով նաև տրանսպորտի, պաշտպանության, սպորտի և գյուղատնտեսության ոլորտներում գործող կորպորացիաներ են: Հաշվեգրման հիմունքով նրանց ծախսերը 2016թ. կազմել են ՀՆԱ-ի 3.7 տոկոսը (ներառյալ՝ ՀՆԱ-ի 1.8 տոկոսի չափով ոչ ֆինանսական ակտիվներում գուտ ներդրումները), իսկ պակասուրդը՝ ՀՆԱ-ի 1.9 տոկոսը: 1.1 գծապատկերում ներկայացված է կառավարական և հանրային հատվածի ծախսերի ընդգրկումը՝ հիմնվելով ներկայիս ոլորտայնացման վրա, ինչպես նաև՝ թե ինչպիսին է կառավարության հետ վնասով աշխատող ընկերությունները համախմբելու դեպքում կառավարության ծախսերի՝ հաշվետվություններում չարտացոլված մեծությունը:<sup>4</sup>

### **1.1.2. Պաշարների ընդգրկումը (բազային)**

**12. Հայաստանը հրապարակում է տվյալներ պետական բյուջեի ավանդների և պարտքի պաշարների վերաբերյալ:** Պետական պարտքի մասին տարեկան հաշվետվությունն համապարփակ տվյալներ է պարունակում պետական պարտքի մասին՝ ըստ ռեզիդենտության, արժույթի, ժամկետայնության և տևողության սեսակի: Այն նաև տվյալներ է պարունակում պետական բյուջեի կանխիկով ավանդների վերաբերյալ՝ Գանձապետական միասնական հաշվի (ԳՄՀ) հաշվետվական տվյալների համաձայն:

**13. Չկա հաշվետվական որևէ ենթաօլորտ, որի վերաբերյալ ամփոփ ներկայացվում են որևէ հանրային ենթաօլորտի բոլոր սեսակի կառավարական ակտիվները և պարտավորությունները:** Ինչպես բացատրվեց, պետության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների (որոնք կազմում են համապատասխանաբար ՀՆԱ-ի 25.2 և 51.8 տոկոսը) մեծ մասի վերաբերյալ տվյալները սփռված են պետական տարբեր մարմինների և նրանց վարչությունների միջև, սակայն չկա համապարփակ մեկ հաշվետվություն: ՊՄԳ-ներին և կենսաթոշակներին առնչվող պարտավորություններն ավելացնելու դեպքում (ինչպես նկարագրվեց վերևում) պետական պարտավորությունները կանեն՝ հասնելով ՀՆԱ-ի 68.1 տոկոսի: Եզակի ՊՈԱԿ-ներ են հաշվետվություններ ներկայացնում հաշվեկռային տվյալների մասին, սակայն ակտիվների և պարտքի առանձին տվյալները (որոնք կազմում են համապատասխանաբար ՀՆԱ-ի 3.8 և 2.9 տոկոսը) չեն համախմբվում որևէ հաշվետվությունում:

<sup>4</sup> GFSM 2014-ի համաձայն, շուկայական հիմունքով չգործող պետական ձեռնարկությունները, չնայած նրանց «առևտրային» իրավական կարգավիճակին, պետք է դասվեն ընդհանուր կառավարության միավորների շարքին: Վնասների առկայությունը մեկն է այն կարևոր ցուցանիշներից, որը վկայում է, որ ձեռնարկությունը չի գործում առևտրային հիմունքով, և կառավարության կողմից միավորների շարքում ձեռնարկությունների վերադասակարգումը վերահաստատելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ուսումնասիրություն (օր.՝ նախորդ մի քանի տարիների ֆինանսական արդյունքներ, ֆինանսական կախվածություն կառավարությունից, ինֆուլյունություն որոշումների կայացման խնդրում):



Իշխանությունները նեղեցին, որ ՏԻՄ-երի ֆինանսական ակտիվների եւ պարտավորությունների ծավալը սահմանափակ է: Նրանք վարկեր չեն սրամաղրում եւ վոլտառություն խիստ կանոնների պատճառով նաեւ չեն կուտակել պարտքեր:

**14. Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների եւ դրանց գնահատման առումով նկատվել են տվյալների առկայության լուրջ բացեր.**

- Պետական գույքի կառավարման վարչությունում (ԲԳԿՎ) առկա են ընդամենը մասնակի տվյալներ մասնավորեցման ենթակա պետական ոչ ֆինանսական ակտիվների վերաբերյալ (ՀՆԱ-ի 2.8 տոկոսի չափով):
- Պետական ոչ ֆինանսական ակտիվների մեկ այլ մասնաբաժին (ՀՆԱ-ի 17.4 տոկոսի չափով) ներկայացվում է առանձին նախարարությունների հաշվապահական հաշվեկշիռներում<sup>5</sup>. Իմնականում դրանք գործառնությունների համար օգտագործվող ակտիվներ են:
- Կառավարության իմնական ոչ ֆինանսական ակտիվների (օրինակ՝ ենթակառուցվածքի ակտիվներ, բնական պաշարներ, պատմական շենքեր, հողեր և այլն) վերաբերյալ տվյալներ չկան: Այդ ակտիվների մի զգալի մասը համարվում է ՏԻՄ-երին պատկանող և օգտագործվում է ՀՈԱԿ-ների կողմից (հողեր, ճանապարհներ, ջրամբարներ, խողովակաշարեր, կամուրջներ և գյուղատնտեսական ակտիվներ): Տարածքային կառավարման նախարարությունը ծրագրում է համայնքների համար ներդնել ոչ ֆինանսական ակտիվների տվյալների շտեմարան:
- ՊՈԱԿ-ների կողմից տնօրինվող ոչ ֆինանսական ակտիվները (ՀՆԱ-ի 0.8 տոկոս) և պետական ընկերությունների կողմից տնօրինվողները (ՀՆԱ-ի 11.8 տոկոս) ներկայացված են առանձին միավորների ֆինանսական հաշվետվություններում, սակայն չկա համախմբված հաշվետվություն:
- ՊՄԳ պայմանագրերին առնչվող ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները (ՀՆԱ-ի 10.2 տոկոս), զինծառայողների կենսաթոշակային համակարգի ուղղակի պարտավորությունները (ՀՆԱ-ի 6.1 տոկոս) և սոցիալական ապահովության բաշխողական («pay as you go») կենսաթոշակային համակարգի անուղղակի պարտավորությունները (ՀՆԱ-ի 51.5 տոկոս)<sup>6</sup> կառավարության կողմից չեն ներկայացվում հաշվետվություններում:


**15. Այս բացերը լրացնելու միջոցով կարելի է առավել համապարփակ պատկերացում կազմել հանրային ֆիսկալ դիրքի մասին:** Ինչպես ներկայացված է Աղյուսակ 0.1-ում և Գծապատկեր 1.2-ում, համախմբված հանրային հատվածի ակտիվները և պարտավորությունները, բացառությամբ անուղղակի կենսաթոշակային պարտավորությունների, 2016

<sup>5</sup> Հաշվապահական հաշվեկշիռները հրապարակվում են հասանելի չեն:

<sup>6</sup> Կենսաթոշակային պարտավորությունները՝ հաշվարկված էֆտրապոլացումով: Անհրաժեշտ է ավելի խորը վերլուծություն՝ ժողովրդագրական եւ ֆաղափականության վոլտառությունները եւս արտացոլելու համար:

թվականին հաշվարկային տվյալներով կարող էին կազմել ՀՆԱ-ի համապատասխանաբար առնվազն 102.3 տոկոսը և 101.9 տոկոսը: Հանրային հատվածի գուտ ակտիվները և գուտ ֆինանսական ակտիվները հաշվարկային տվյալներով կկազմեն ՀՆԱ-ի համապատասխանաբար 0.3 տոկոսը և -56.5 տոկոսը: Հաշվարկված կենսաթոշակային անուղղակի պարտավորությունները<sup>7</sup> հաշվի առնելու դեպքում հանրային հատվածի գուտ ակտիվները կկազմեն ՀՆԱ-ի -108 տոկոսը: Այս ցուցանիշները, սակայն, չեն արտացոլում կառավարությանը պատկանող ենթակառուցվածքային ակտիվները, հողերը, ընդերքի ակտիվները և պատմական շինությունները, քանի որ դրանց արժեքի մասին անգամ կողմնորոշիչ տվյալներ Հայաստանի կառավարությանը հասանելի չեն: Այլևհետև, ոչ ֆինանսական ակտիվների արժեքի որոշումն առավել հավանականությամբ չի արտացոլում շուկայական գները: Արժեքի պատշաճ որոշումը և չներառված ոչ ֆինանսական ակտիվների ավելացումն հավանաբար զգալի դրական ազդեցություն կունենա կառավարության և հանրային գուտ ակտիվների վրա:

**Գծապատկեր 1.2. Հայաստան. հանրային հատվածի հաշվեկռի ընդգրկումը ֆիսկալ հաշվետվություններում, 2016 թ.**




Աղբյուրը՝ GFSM 2014 գեկույց, Հայաստանի իշխանություններ: Պետական ընկերությունների ֆինանսական հաշվետվություններ, ԱՄՆ-ի անձնակազմի հաշվարկներ:

**16. Հայաստանը գուտ ակտիվների ցուցանիշով մոտ է այլ պետությունների միջինին, իսկ համախառն**

**պարտավորությունները համեմատաբար ցածր են (Գծապատկերներ 1.3 և 1.4):** Դա մասնակիորեն արտացոլում է այն վրաստը, որ Հայաստանը չունի պետական բանկեր և չունի կառավարության կողմից վերահսկվող՝ սահմանված մասնաճանաչներով կենսաթոշակային համակարգ:


<sup>7</sup> Թեև GFSM 2014-ի համաձայն բաշխողական կենսաթոշակային սխեմայի սոցիալական ապահովության ապագա կենսաթոշակների հետ կապված ենթադրյալ պարտավորություններն ուղղակիորեն չեն ներառվում կառավարության պարտքում, սակայն ծանոթագրային հոդվածի տեքստը դրանք պետք է ներկայացվեն հաշվապահական հաշվեկշռում:

**Գծապատկեր 1.3. Հանրային հատվածի համախառն պարտավորությունները որոշ պետություններում (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ ԱՄՆ-ի անձնակազմի հաշիվարկներ, Ֆինլանդ քաղաքացիության գնահատումներ (Պորտուգալիա, 2012թ., Իսլանդիա, 2012թ., ՄԹ 2013թ., Ֆինլանդիա, 2015թ., Բրազիլիա, 2016թ., Թունիս, 2015թ., Ռումինիա, 2014թ., Ալբանիա, 2015թ., Պերու, 2015թ., Ֆիլիպիններ, 2014թ., Տանզանիա, 2015թ., Ռուսաստան, 2014թ., Թուրքիա, 2013թ., Փենիա, 2014թ., Ուգանդա, 2016թ., Վրաստան, 2016թ., Մոզամբիկ, 2015թ. և Գվատեմալա, 2016թ.):

**Գծապատկեր 1.4. Հանրային հատվածի զուտ ակտիվները որոշ պետություններում (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ ԱՄՆ-ի անձնակազմի հաշիվարկներ, Ֆինլանդ քաղաքացիության գնահատումներ:

**1.1.3. Հոսքերի ընդգրկումը (բազային)**

17. Բյուջեի կատարման ֆինլանդ հաշվետվությունները և GFSM 2014-ի վրա հիմնված վիճակագրական հաշվետվությունները ներառում են դրամարկղային եկամուտները, ծախսերը և ֆինանսավորումը, սակայն չեն ներառում հաշվեգրված գործառնությունների և այլ սոնեսագիտական հոսքերի սվյալները: Ընդհանուր կառավարության հոսքերի առավել համապարփակ պատկերը ներկայացված է համախմբված ընդհանուր կառավարության հատվածի ամենամյա վիճակագրական հաշվետվություններում: Թեպետ GFSM 2014-ի վրա

հիմնված հաշվետվությունները պրամարկդային են, ազգային հաշիվները ներառում են հաշվեգրումային մի քանի տարրեր, օրինակ՝ հիմնական կապիտալի սպառումը:

**18. Կառավարական որոշ գործառնություններ չեն հաշվառվում միջազգային չափանիւներին համահունչ, որի հետևանքով թերհաշվարկված է կառավարության պակասուրդը:** Գործող ներպետական կանոնները որոշ գործարքների տնտեսական բովանդակությունը չեն արտացոլում այնպես, ինչպես պահանջվում է վիճակագրության միջազգային չափանիւններով: Օրինակ, վնասով աշխատող պետական ընկերությունների մեջ կապիտալի ներարկումները պետք է դիտարկել որպես ծախս, այլ ոչ՝ որպես բաժնետոմսերի և բաժնեմասի ձեռքբերում: Շահաբաժինները բյուջեի ծախսերի հաշվետվություններում դիտարկվում են որպես եկամուտ, սակայն այդպես պետք է լինի միայն այն դեպքում, երբ դրանք վնարվում են ընկերության գործառնական գործունեությունից ստացվող շահույթից, այլ ոչ՝ վերագնահատման արդյունքում ստացվող օգուտներից կամ պահուստներից:


**19. Հաշվետվություններում չներառված ոչ պրամարկդային գործառնությունների հանաչումը կարող է նկատելիորեն ազդել ընդհանուր կառավարության հաշվեգրման հիմունքով հաշվարկվող պակասուրդի ցուցանիշի վրա:** Թեպետ առևտրային վարկերի և կրեդիտորական այլ պարտքերի ուժացած վնարումները կարծես մեծ չեն, կան ոչ պրամական այլ գործառնություններ, որոնք անհրաժեշտ է ներառել և որոնք կազդեն կառավարության բյուջետային արդյունքների վրա: Օրինակ՝ ՊՄԳ-ների միջոցով կատարվող կապիտալ ներդրումների ներառումը, որոնցում հարակից ուսկերի մեծ մասը կրում է կառավարությունը, պետք է հանաչվի որպես կառավարության կողմից կատարվող ներդրում ոչ ֆինանսական ակտիվներում: Այդ պարագայում շինարարության և հարակից այլ աշխատանքների կատարման պահին զգալիորեն կանի կառավարության պակասուրդը: Բացի այդ, պետական զինծառայողների գծով հաշվեգրված գուտ կենսաթոշակային իրավունքների արտացոլումը կազդի դեֆիցիտի, ինչպես նաև ֆինանսավորման վրա:

### **1.1.4 Հարկային ծախսերի ընդգրկումը (լավ)**

**20. Հայաստանը տարեկան բյուջեի փաստաթղթերում հրապարակում է հարկային դաշտում բաց թողնված եկամուտների պարբերական հաշվարկներ:** 2015 թվականից ի վեր հարկային ծախսերի հաշվարկված ցուցանիշներ են հրապարակվում տարեկան բյուջեի փաստաթղթերի բացատրագրում՝ ներառյալ հաշվարկներ երեք հիմնական հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտահարկի համար (այս երեք հարկատեսակներին բաժին է ընկնում ընդհանուր հարկերի 70 տոկոսը): ԱԱՀ-ի գծով ծախսերը, որոնց բաժին է ընկնում Հարկային օրենսգրքով նախատեսված արտոնությունների մոտ 40 տոկ, ներկայացված են ըստ ոլորտների (օրինակ՝ առողջապահություն, կրթություն, ֆինանսական և ապահովագրական ոլորտներ) և ըստ արտոնությունների այլ ընդհանուր խմբերի, սակայն շահութահարկի և եկամտահարկի գծով ծախսերի բացվածքն արտացոլում է միայն գյուղատնտեսության, շահաբաժինների և ԱԱՀ-ի շահերի հետ կապված արտոնությունները: Պետական եկամուտների կոմիտեն ծրագրում է

2019 թվականին ընդլայնել առանձին հարկային ազատումների վերաբերյալ տեղեկությունների շրջանակն հաշվետվություններում:

**Գծապատկեր 1.5. Հարկային ծախսերն ընտրված երկրներում (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ ԱՄՆ-ի անձնակազմի հաշվարկներ, Ֆինկալ բախանցիկության գնահատումներ:

**21. Հարկային ծախսերի մեծությամբ նկատմամբ հսկողություն կամ դրանց առնչվող բյուջետային նպատակներ չկան. նման հսկողություն կամ նպատակներ ունենալը կարող էր օգնել եկամուտների բազայի ամրապնդմանը:**

Օրենսդրությամբ չի պահանջվում հաշվետվություն ներկայացնել հարկային ծախսերի վերաբերյալ կամ գնահատել նոր օրենսդրության ֆանտաստիկ ազդեցությունն հարկային ազատումների վրա: Հարկային ծախսերին բաժին է ընկնում ՀՆԱ-ի մոտ 7 տոկոսը (Գծապատկեր 1.5) և հավաքագրվող ընդհանուր հարկերի մեկ երրորդը: Հայաստանն այլ պետությունների համեմատությամբ հարկային ծախսերի առավել բարձր մակարդակ ունեցողների շարքում է: Կառավարությունը ծրագրում է կրճատել հարկային ծախսերի մեծությունը: Դա կարող է արվել՝ սահմանելով դրանց մեծությանը վերաբերող բյուջետային նպատակ կամ սահմանափակում, ինչպես նաև՝ հաշվետվություններ ներկայացնելով դրա կատարման մասին:


**1.2. Ֆինկալ հաշվետվությունների հաճախականությունը և յուրաժամությունը**

**1.2.1. Տարվա ընթացքում հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը (առաջադեմ)**

**22. Տարվա ընթացքում պետական բյուջեի և ՏԻՄ-երի հաշվետվություններն հրապարակվում են ամիսը մեկ անգամ՝ ամսվա ընթացքում:** Բյուջեի կատարմանը վերաբերող այդ հաշվետվություններում ներկայացված են տվյալներ եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման վերաբերյալ: Դրանք հրապարակվում են ամսվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում: Ավելին, պետական բյուջեի պարտին վերաբերող ամսական տվյալներ հրապարակվում են ամսվա ընթացքում: Բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվություններն հրապարակվում են եռամսյակի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում: Այդ հաշվետվություններում ներկայացված են առավել մանրամասն տվյալներ

եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման վերաբերյալ՝ ըստ տնտեսական խմբերի, ինչպես նաև ծախսերի վերաբերյալ տվյալներ՝ ըստ գործառնական դասակարգման: Հայաստանը պետությունների այն կեսի թվում է, որոնք ամսական հաշվետվություններն հրապարակում են ամսվա ընթացքում (Գծապատկեր 1.6):

**Գծապատկեր 1.6. Բյուջետային հաշվետվությունների հաճախականությունը և յուրաժանությունը, ըստ SDDS-ի բաժանորդների (պետությունների տոկոս)**




Աղբյուրը՝ Special Data Dissemination Standards (SDDS) Database; General Data Dissemination Standards (GDDS) Database (2017)

**1.2.2 Տարեկան ֆինանսական հաշվետվությունների յուրաժանությունը (առաջադեմ)**

**23. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները հրապարակվում են հաջորդ տարվա առաջին 4 ամիսների ընթացքում:** Դրանց աուդիտի է ենթարկում և աուդիտորական եզրակացություն է տալիս Հաշվեհաննիչ պալատը (ցուցանիշ 1.4.2): Տարեկան հաշվետվությունը տվյալներ է պարունակում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասին, ինչպես նաև որոշ ցուցանիշներ ՊՈԱԿ-ների գործունեության մասին՝ ըստ տարբեր դասակարգումների (Ցուցանիշ 1.3.1): Հաշվետվությունը նաև լրացուցիչ մանրամասներ է պարունակում դրամաճանաչների և դատարանների մասին, համեմատական աղյուսակներ ըստ ոլորտների, կանկրետ ծրագրերի, ինչպես նաև մանրակրկիտ տեղեկություններ կառավարության պարտքերի և վարկերի վերաբերյալ, և այլ տվյալներ: Ինչպես արդեն բացատրվեց, տարեկան ֆինանսական հաշվետվությունները դեռևս ոչ լիովին են կայացած: Հայաստանն այն պետությունների խմբում է, որոնք տարեկան ֆիսկալ հաշվետվությունն հրապարակում են 6 ամսվա ընթացքում

(Գծապատկեր 1.7): Հնդիանուր կառավարության՝ ԱՎԾ-ի կողմից կազմվող ուղարտային ազգային հաշիվներն հրապարակվում են 18 ամսվա ուշացմամբ:

**Գծապատկեր 1.7. Տարեկան ֆիսկալ հաշվետվությունների յուրաժանությունը ընտրված երկրներում**  
(պետությունների թիվ)



Աղբյուրը՝ PEFA Scores Data Set (2005-16)

### 1.3. Ֆիսկալ հաշվետվությունների որակը

#### 1.3.1. Դասակարգումը (առաջադեմ)

**24.** Ֆիսկալ հաշվետվությունները տեղեկություններ են տրամադրում եկամուտների և ծախսերի վերաբերյալ ըստ վարչական, տնտեսագիտական, գործառական և ծրագրային դասակարգման՝ միջազգային չափանիշներին համահունչ: Ֆինանսների նախարարության եռամսյակային հաշվետվությունները բյուջեի կատարման մասին, որոնք ընդգրկում են պետական բյուջեի միավորները և արտաբյուջետային հաշիվները, ներառում են ծախսերի վարչական, գործառնական և տնտեսական դասակարգումը: Կատարման տարեկան հաշվետվությունը, որում համախմբված են պետական բյուջեի միավորները, արտաբյուջետային հաշիվները և ՏԻՄ-երը, տեղեկություններ է պարունակում նաև ըստ ծրագրերի, որոնք սահմանված են գործառույթների ենթամակարդակով: Գործառնական դասակարգումը համապատասխանում է Միավորված ազգերի կազմակերպության Կառավարության գործառույթների COFOG դասակարգմանը, իսկ տնտեսական դասակարգումն համահունչ է GFSM 2014-ին: Եկամուտները համախմբված են ըստ երեք տեսակների՝ հարկային եկամուտներ և պետական սուբսիդիաներ, պաշտոնական դրամաձեռքեր, և այլ եկամուտներ: Եկամուտների և ծախսերի մասին նույն տվյալներն հրապարակվում են ԱՎԾ-ի ֆիսկալ վիճակագրության մեջ և ներկայացվում ըստ տնտեսական և գործառնական խմբերի:

**25. Առկա որոշ գործելիքներ պահանջարկով են նշված հաշվետվությունների օգտակարությունը.**

- Կառավարության պահուստային ֆոնդից կատարվող փաստացի ծախսերը դասակարգվում են 11-րդ խմբում՝ COFOG-ի 10 խմբերին գույքահեռ, ըստ նպատակային նշանակության դասակարգվելու փոխարեն: Դա՝ որպես ոչ պատշաճ կերպով դասակարգվող գումար, ծախսերի անհամապատասխան մասնաբաժին չի կազմում (վերջին երեք տարիներին՝ ընդհանուր ծախսերի 2.5 տոկոսը):

**Աղյուսակ 1.3. Հայաստան. ծախսերն ըստ սնտեսագիտական դասակարգման՝ ՊՈԱԿ-ներով և առանց դրանց (միլիարդ դրամ, 2016 թ.)**

	Պետական բյուջե	Կենտր. կառավար.
<b>Աշխատողների վարձատրություն</b>	142	270
<b>Ապրանքների և ծառայությունների օգտագործում</b>	162	136
<b>Տնկած գումարներ</b>	98	98
<b>Դատարաններ</b>	121	61
<b>Դրամաճեղարկներ</b>	158	133
<b>Սոցիալական նպաստներ</b>	405	407
<b>Այլ ծախսեր</b>	195	198
<b>Զուտ/համախառն ներդրումներ ոչ ֆինանսական ակտիվներում</b>	167	167
<b>Ընդամենը</b>	<b>1,449</b>	<b>1,470</b>

Աղբյուրը՝ GFS տվյալներ

- Բացառությամբ ՊՈԱԿ-ների՝ կենտրոնական կառավարության ծախսերի կազմն ըստ սնտեսական տեսակի աղինատված է: Աշխատավարձը և դրան հավասարեցված վնասները, որոնք ՊՈԱԿ-ների հիմնական ծախսերն են, վնասվում են դատարանների, ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև պետական բյուջեից դրամաճեղարկների միջոցով, և դասակարգվում են որպես այդպիսին: Ստացվում է, որ կենտրոնական կառավարության կողմից վնասվող աշխատողների վարձատրության գումարը գալիս չափով թերհավասարակշռված է այդ հաշվետվություններում (2016 թվականին՝ 47 տոկոսով, տե՛ս Աղյուսակ 1.3):

**1.3.2. Ներքին համապատասխանությունը (բազային)**


**26. Հայաստանն արժանահավատ տվյալներ է հրապարակում ֆիսկալ տվյալների ներքին**

**համապատասխանության՝ Կանոնադրժույ պահանջվող երեք ստուգումներից մեկի վերաբերյալ:** Հայաստանն հրապարակում է գծից վերև ֆիսկալ պակասուրդի և գծից ներքև ֆինանսավորման համադրված տվյալները: Թեպետ պետական պարտքի տեղերի մասին տվյալներն ըստ պարտատերերի հրապարակվում են պարտքի ամսական տեղեկատուի և պարտքի տարեկան հաշվետվության մեջ, չկա ՖԹԿ-ով պահանջվող՝ թույլարկված պարտքի համադրումը պարտքի պաշարի պաշարի հետ՝ ըստ կոնտրագենտների, որը հիմնված կլինի առանձին արժեթղթերի կազմված տվյալների շտեմարանի կամ ուղարտային ազգային հաշիվների վրա: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ գուտ ֆինանսավորման տվյալը չի համադրվում պարտքի պաշարի փոփոխության տվյալների հետ:



**27. Հաշվեկռի բացակայության պայմաններում դժվար է համապարփակ տեսնել ներկայացնել պաշար-հոսք տվյալների ամբողջական համադրումը:** Տնտեսական այլ հոսքերի, օրինակ՝ վերագնահատումների (օրինակ՝ փոխարժեքով կամ շուկայական գներով պայմանավորված) և ակտիվների և պարտավորությունների այլ փոփոխությունների (ուլտրալին ընդգրկման փոփոխությունների) վերաբերյալ տվյալները պետք է ներառվեն հաշվեկռիներում: Գծապատկեր 1.8-ում ներկայացված է պետական պարտքի համադրումը պարտքի անը պայմանավորող առանձին տարրերին՝ պակասուրդի և ֆինանսական ակտիվների գուտ ձեռքբերումը: Թեպետ պարտքի անի մեծ մասը 2016 թվականին կարելի է բացատրել պակասուրդի ֆինանսավորմամբ և ֆինանսական ակտիվների, մասնավորապես՝ վարկերի գուտ ձեռքբերմամբ, 2014 և 2015 թվականներին չբացատրված են մնում ՀՆԱ-ի 0.7 տոկոսը և 0.2 տոկոսը: Զբաղադրված մնացորդները կարող են պայմանավորված լինել արժույթի արժեզրկմամբ, կամ՝ ներառել նաև չհայտնաբերված այլ գործոններ կամ հնարավոր սխալներ:

**Գծապատկեր 1.8. Պաշար-հոսք հագրումը, 2016 թ. (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ GFS և պարտքի տվյալներ:

**1.3.3 Պատմական տվյալների վերանայումներ (չի համապատասխանում)**

**28. Ֆինակա վիճակագրությունը համակարգված վերանայման չի ենթարկվում, որպեսզի ներառի նոր տեղեկատվությունը:** ԱՄՆ-ի Կառավարության ֆինանսների վիճակագրության տարեգրքի (Government Finance Statistics Yearbook) համար GFSM 2001/2014-ի հիման վրա ներկայացվող տվյալները երբևէ չեն վերանայվել: Մերոպաբանական մեկնագամյա խոշոր վերանայում է ԱՎԾ-ի կողմից կատարվել 2015 թվականին ազգային հաշիվներում, երբ անցում կատարվեց SNA 1993-ից SNA 2008-ին, և նորացված թվերը հրատարակվեցին «Հայաստանի ազգային հաշիվներ» վիճակագրական ժողովածուի մեջ: Ինչևէ, նորացված սկզբնաղբյուրային տվյալներն արտացոլելու համար բյուջետային վիճակագրության վերանայումները և սխալմունքների ու բացթողումների ուղղումները պարբերաբար չեն հրատարակվում և ցույց չեն տալիս, թե արդյոք թվերը պայմանական են, վերանայված, նորացված կամ վերջնական: Սույն զեկույցի որոշ Առաջարկություններ

իրագործելու դեպքում GFS և SNA տվյալները բովանդակային վերանայումների կենթարկվեն, որը պետք է լինի իրապարակել: Տեխնոլոգիաների 1-ում բերված են պահանջվող պատմական վերանայումների որոշ օրինակներ:

### Տեխնոլոգիաների 1.1. Վիճակագրական վերանայումների լավ գործելակերպերը

Վերանայումները լայն իմաստով սահմանվում են որպես հանրության հրապարակված վիճակագրական տվյալի արժեքի որևէ փոփոխություն պատճառով ազգային վիճակագրական մարմնի (ԱՎԾ-ի կամ ՑՆ-ի) կողմից: ԱՄՆ-ի «Պատճառական վիճակագրության վերանայման քաղաքականությունը՝ պետական կառավարման խնդիր» (Revisions Policy for Official Statistics: A Matter of Governance) անվանումը կրող աշխատանքային փաստաթղթում առաջարկվում են մակրոտնտեսական տվյալների վերանայման անհավասար դիրքերի արդյունավետ գործելակերպեր:

Թեպետ վիճակագրական տվյալների հանախակի էական վերանայումները կարող են վկայել ֆիսկալ տվյալների արժանահավաստության առումով առկա հնարավոր ռիսկերի գոյության մասին, վերանայումների բացակայությունը վկայում է այն մասին, որ հավանական է, որ տվյալները ոչ լիովին համահունչ լինեն վիճակագրության միջազգային մեթոդաբանությանը, և որ ժամանակային շարքերն հետևողական և համահունչ չեն:

Միջազգային չափանիշների սկզբունքներին և մեթոդաբանական կանոններին համապատասխանեցված տվյալներ ներկայացնելու համար անխուսափելի են վիճակագրական վերանայումները: Վերանայումները որակյալ տվյալների տարածման գործընթացի բնական բաղադրիչներ են, որոնք արվում են կանոնավոր կերպով, ելնելով տարբեր պատճառներից: Ուստի, վիճակագրական մարմինները պետք է ունենան վերանայման հստակ և քափանցիկ քաղաքականություն: Վիճակագրական տվյալների վերանայումները պետք է արվեն՝ ելնելով հետևյալ պատճառներից.

- Աղբյուրներից ստացվող բարելավված և ավելի համապարփակ տվյալների ներառումը (օրինակ՝ ճանաչողական հաշվարկները փոխարինվում են վերջնական կամ աուդիտ անցած հաշվարկների փաստացի տվյալներով, կամ՝ ավելի լիարժեք կամ այլ առումներով ավելի լավ հաշվարկություններ են ստացվում կառավարական միավորներից):
- Հետագա փուլում հայտնի դարձած նոր տեղեկությունների հիման վրա գործառնությունների դասակարգումը փոփոխելը (օրինակ՝ գնահատել, թե արդյո՞ք կապիտալի ներարկումները կամ շահաբաժինները պետք է ձևակերպել գծից վերև թե ներքև՝ ելնելով ընկերությունների ֆինանսական հաշվարկությունների միջոցով ստացված նոր տվյալներից):
- Նոր կամ վերանայված վիճակագրական մեթոդաբանության ընդունում (օրինակ՝ երբ անցում է կատարվում GFSM 2001-ից GFSM 2014-ի, կամ՝ ներառվում են ոչ դրամական գործարքները, օրինակ՝ բնախրեղեն վարկի միջոցով ռազմական տեխնիկայի ձեռքբերումը):
- Սկզբնապես հաշվարկություններում ներկայացված տվյալներում առկա սխալների և բացթողումների ուղղումը:

Այս գործելակերպի հետևում է պետությունների մի զգալի մեծամասնությունը: Հիմնվելով այլ պետություններում կատարված՝ Ֆիսկալ քափանցիկության գնահատումների վրա, 24 պետություններից ընդամենը 3-ը (որոնցի մեկն Հայաստանն է) չեն վերանայում վիճակագրական հաշվարկությունները:

## 1.4. Ֆիսկալ հաշվարկությունների ամբողջականությունը

### 1.4.1. Վիճակագրության ամբողջականությունը (լավ)

**29. Ֆինակա վիճակագրությունը կազմվում է պետական կոնկրետ մարմնի կողմից և տարածվում է՝ միջազգային չափանիւններին համահունչ:** Պաշտոնական ֆինակա վիճակագրությունը կազմվում և տարածվում է Վիճակագրական կոմիտեի կողմից՝ SNA 2008-ի հիման վրա: Վիճակագրական կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր գործող պետական մարմին է: Վիճակագրական կոմիտեի նախագահը նշանակվում է վեց տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ ՀՀ Վարչապետի ներկայացմամբ: Օրենքով նախատեսվում է, որ Վիճակագրական կոմիտեի կողմից հավաքվող վիճակագրությունը պետք է համապատասխանի վիճակագրական լավագույն պրակտիկային և օբյեկտիվության, արժանահավատության, հեզոտության, անհատական տվյալների գաղտնիության, միջազգային նորմերին և ստանդարտներին համադրելիության և հանրության համար վիճակագրական տեղեկությունների հասանելիության սկզբունքներին: Վիճակագրական կոմիտեի կայքէջը դյուրօգտագործելի հասանելիություն է ապահովում վիճակագրական տեղեկատվության նկատմամբ: ՖՆ-ն կազմում է վիճակագրական հաշվետվություններ GFSM 2014-ի հիման վրա, որոնք չեն հրատարակվում կամ համադրվում ազգային հաշիվների հետ: Վիճակագրական կոմիտեում և ՖՆ-ում սահմանափակ կարողությունները կարող են խոչընդոտել վիճակագրության միջազգային ստանդարտների լիարժեք ներդրումը:

#### **1.4.2 Արտաֆին աուդիտ (բազային)**

**30. Վերահսկիչ պալատը (ՎՊ) հրապարակել է պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մասին եզրակացությունը:** Եզրակացության մեջ ուսումնասիրվում է հաշվետվության համապատասխանությունը ֆինանսական օրենսդրությանը, ներկայացվում է ֆինանսական որոշ տվյալների արժանահավատության գնահատում: Այնուհանդերձ, դա բուն ֆինանսական աուդիտ չէ, քանի որ չի ներառում. (i) դրամարկղային հաշվապահության համապատասխան ստանդարտներին հաշվետվության համապատասխանության լիարժեք գնահատում, և (ii) հայտարարություն առ այն, որ հաշվետվության մեջ արդար և հեմարիտ պատկերված է կենտրոնական կառավարության ֆինանսական վիճակը:

**31. Հաշվեհանդիմանության մասին նոր օրենքի համաձայն 2018 թվականին ստեղծվել է Հաշվեհանդիմանության պալատը, որը փոխարինել է ՎՊ-ին՝ նպատակ ունենալով բարելավել Հայաստանի հանրային ֆինանսների ամբողջականությունը:** Նոր օրենքն առավել համահունչ է հաշվեհանդիմանության գերագույն մարմինների համար Աուդիտի պետական կառույցների միջազգային կազմակերպության (INTOSAI) առաջարկած իրավական դաշտին: ՀՊ-ն պատասխանատու է լինելու կենտրոնական կառավարության ֆինանսական հաշվետվությունների ֆինանսական աուդիտի աուդիտի միջազգային ստանդարտներին (ISA) համապատասխան իրականացնելու համար: ՀՊ-ի անկախությունն ամրագրված է Սահմանադրությամբ, ինչպես նաև համապատասխան օրենքներով: Նոր օրենքով նրա անկախությունն ամրապնդվել է, և այժմ այն սեփական հայեցողությամբ է սահմանում իր ամենամյա աշխատանքային ծրագիրը:

**32. ՀՊ-ն նախատեսում է սկսել կենտրոնական կառավարության բյուջեի կատարման մասին հաշվետվությունների ֆինանսական աուդիտը ISA-ներին համապատասխան իրականացնել 2018 թվականին՝ աստիճանաբար ընդլայնելով**


**դրա ընդգրկումը:** Այս նպատակի համար ՀՊ-ն պետք է վերանայի, թե արդյո՞ք դրամարկղային հաշվապահության ստանդարտները բավականաչափ լավ են սահմանված, որպեսզի հնարավոր դարձնեն ֆինանսական աուդիտը ISA-ներին համապատասխան իրականացնելը, և այնքանով, որքանով դրանք բավականաչափ լավ չեն սահմանված, բարելավումներ առաջարկել ՖՆ-ին: ՀՊ-ն նաև վարձարկում է բյուջետային հիմնարկների առանձին ֆինանսական հաշվետվությունների ֆինանսական աուդիտը IPSAS-ի հիման վրա ընդունված՝ Հայաստանի հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներին (APSAS) համապատասխան:

### **1.4.3 Ֆինակալ տվյալների համեմատելիությունը (բազային)**

**33. Բյուջեի կատարման հաշվետվությունները պատրաստվում են նույն տնտեսագիտական հիմունքով, ինչ՝ բյուջեն և կանխատեսումները:** Բյուջետային ամփոփ ցուցանիշների հանրագումարային, ինչպես նաև մանրամասն մակարդակները հիմնվում են միևնույն դասակարգման և մեթոդաբանության վրա: Արտաբյուջետային հաշիվների գործարքները չեն ներառվում հաստատված բյուջեում, սակայն կատարումից հետո փաստացի ներառվում են բյուջեի վերանայումներում՝ ապահովելու համար փաստացի ցուցանիշների հետ տվյալների համեմատելիությունը:

**34. GFSM 2014-ի և SNA 2008-ի վրա հիմնված վիճակագրական հաշվետվությունների միջև տարբերությունները նշանակալից են, և չկա դրանց համապատասխանեցում:** Երկու մեթոդաբանությունները սկզբունքորեն պետք է որ տան համահունչ տվյալներ: Այնուհանդերձ, ընդհանուր կառավարության պահասուրդի (գուտ վարկավորում/փոխառություն) ցուցանիշների տարբերությունը կազմում է ՀՆԱ-ի մոտ 0.6 տոկոսը (Գծապատկեր 1.9): Տարբերությունների մեծ մասը թերևս բացատրվում է ոլորտների ընդգրկման տարբերություններով, որոնք ազգային հաշիվներում հիմնված են գործունեության տեսակի վրա (տարբերակելով առևտրային և ոչ առևտրային գործունեությունը), այլ ոչ՝ կազմակերպական միավորների: Տարբերությունները պայմանավորող գործոններից են նաև վիճակագրությունը կազմելու համար տարբեր աղբյուրներից օգտագործվող տվյալները, ինչպես նաև SNA-ի վրա հիմնված հաշիվներում հաշվեգրման տարրերի հնարավոր առկայությունը:

**Գծապատկեր 1.9. Ընդհանուր կառավարության գուտ վարկավորումը/փոխառությունը՝ ըստ GFSM2001 և SNA 2008 հաշվետվությունների**  
(ՀՆԱ-ի տոկոս)



Աղբյուրը՝ GFSM 2014 և SNA 2008 տվյալներ:

## Առաջարկություններ

**Հիմնախնդիրը.** ներկայիս ֆիսկալ հաշվետվությունները ոչ լիարժեք պատկերացում են տալիս ընդհանուր կառավարության ֆիսկալ կատարողականի մասին, քանի որ բյուջեի կատարման և վիճակագրական հաշվետվությունները ոչ բոլոր ինստիտուցիոնալ միավորներն են ներառում: Ոչ շուկայական բոլոր սուբյեկտներին հաշվետվությունների մեջ ներառելով հնարավոր կլիին ավելի իրատեսական պատկեր ներկայացնել կառավարության կատարողականի վերաբերյալ:

**Առաջարկություն 1.1.** Հնդկայնել բյուջեի կատարման և վիճակագրական հաշվետվությունների ինստիտուցիոնալ ընդգրկումը:

- Ապահովել հանրային կառույցների պատշաճ ոլորտայնացումն ընդհանուր կառավարության հատվածի կամ հանրային հատվածի ներսում՝ կիրառելով «շուկայական թե՞ ոչ շուկայական» չափանիշը (այնպես, ինչպես դա սահմանված է GFSM 2014-ում և SNA 2008-ում),
- Պատրաստել և վարել ընդհանուր կառավարության միավորների և պետական ընկերությունների համապարփակ և թարմ ցանկ,
- Հնդկայնել համախմբված ընդհանուր կառավարության վիճակագրական հաշվետվությունները՝ ներառելով համայնքային ՈԱԿ-ները, ինչպես նաև ոչ շուկայական պետական ընկերությունները՝ համաձայն GFSM 2014-ի և SNA 2008-ի մեթոդաբանության, և
- Պետական ՈԱԿ-ները ներառել համախմբված կենտրոնական կառավարության բյուջեի կատարման հաշվետվություններում:

**Հիմնախնդիրը.** Ֆիսկալ հաշվետվությունները համապարփակ կերպով չեն ներկայացնում կառավարության գուտ ակտիվները՝ պայմանավորված հաշվեկռային ինտեգրված տվյալների բացակայությամբ: Ֆիսկալ ֆազաֆականությունը կարող է լիարժեքորեն իրականացվել միայն իմանալով կառավարության ընդհանուր հարստության՝ ունեցվածքի, ակտիվների արժեքի և կազմի (ներառյալ՝ դրանց որակի) և անուղղակի և ուղղակի բոլոր պարտավորությունների մասին:

**Առաջարկություն 1.2.** Հրապարակել կենտրոնական կառավարության հաշվեկշիռը և ընդլայնել դրա ընդգրկումը՝ ներառելով ընդհանուր կառավարությունը:

- Հավաքել և համախմբել ընդհանուր կառավարության ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ հասվածական տվյալները ՊԳԿՎ-ից, նախարարությունների հաշվեկշիռներից, գանձապետարանից, Պետական պարտքի կառավարման վարչությունից, Բաժնետոմսերի վարչությունից, Պետական պարտավորությունների վարչությունից, ՊՈԱԿ-ներից և կառավարական այլ համապատասխան մարմիններից,
- Հրապարակել համախմբված կենտրոնական կառավարության հաշվեկշիռը (ներառյալ՝ ՊՈԱԿ-ները)՝ հիմնվելով GFSM 2014-ի մեթոդաբանության վրա, սկզբում՝ առկա տեղեկություններով, հետո՝ աստիճանաբար ընդլայնելով և ընդգրկելով նաև կենտրոնական կառավարության պաշարները և կառույցները, և
- Ներկայացնել պետության ֆինանսական հաշվեկշիռ, որը կընդգրկի բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, և ամսական և տարեկան կտրվածքով հրապարակել դրանք համապատասխան հաշվետվությունում կամ տեղեկագրում:

**Հիմնախնդիրը.** Ֆիսկալ կատարողականին վերաբերող տվյալների արժանահավաստությունը սասանվում է՝ ֆիսկալ հաշվետվություններում առկա չբացատրված տարբերությունների պատճառով: Որպեսզի ֆազաֆականություն մշակողները և հանրությունն ստանան արժանահավաստ տվյալներ հանրային ֆինանսների մասին, անխուսափելի է որակի կանոնավոր ստուգումների իրականացումը՝ համադրելով տարբեր ցուցանիշներ և տվյալների ամբողջություններ, ինչպես նաև՝ պաշարներ և հոսքեր:

**Առաջարկություն 1.3.** Բարելավել ֆիսկալ հաշվետվությունների հետևողականությունը, համեմատելիությունը և ամբողջականությունը:

- Կազմել և հրապարակել հետևյալ աղյուսակները, որոնցում համադրված կլինեն (i) պաշարների և հարակից հոսքերի փոփոխությունները՝ ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների առանձին խմբերի, (ii) պակասուրյը/ավելցուկը և պարտքի փոփոխությունը, և (iii) հիմնական ազդեցատների միջև առկա

տարբերությունները՝ հիմնվելով GFSM 2014-ի և SNA 2008-ի մեթոդաբանության վրա (ներառելով բացատրագիր):

- Ապահովել, որպեսզի կառավարության էական գործառնությունները, օրինակ՝ վնասով աշխատող ընկերությունների կապիտալի մեջ ներառվածները, պատճառ կերպով դասակարգվեն գծից վերև, իսկ պատճառ դեպքերում՝ գծից ներքև, արտացոլելով տնտեսական բովանդակությունը, այլ ոչ՝ ներպետական համակարգում նրանց ունեցած կազմակերպարավական ձևը:
- Իրականացնել ֆիսկալ վիճակագրության համապարփակ վերանայումներ միջազգային չափանիշներին համապատասխանության առնչությամբ, պատճառ դեպքերում ներառելով նոր տեղեկություններ և մեթոդաբանություն (օրինակ՝ ոլորտայնացման վերաբերյալ), և վերանայել ժամանակային շարքերը՝ ապահովելով դրանց հետևողականությունը: Հրապարակել վերանայումները բացատրող հուշագիր:
- GFS-ի առնչությամբ պատասխանատվությունն հստակորեն բաժնել Ֆինանսների նախարարության ներսում և ապահովել համարժեք կարողություններ:

**Հիմնախնդիրը. ֆիսկալ հաշվետվությունների համապարփակությունը և որակը կառուցել միջազգային չափանիշների վրա հիմնված՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգից:**

**Առաջարկություն 1.4. Ապահովել, որպեսզի հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման արդյունքում բարելավվի ֆիսկալ հաշվետվությունների համապարփակությունը, որակը և համադրելիությունը:**

- Կիրարկել IPSAS-ի վրա հիմնված ազգային հաշվապահական հաշվառման ստանդարտները և հրապարակել ֆինանսական հաշվետվությունները,
- Ինտեգրել բյուջեի կատարման դրամարկային հաշվետվությունները և հաշվեգրման վրա հիմնված հաշվապահությունը, և ապահովել բյուջեի կատարման տվյալների, ֆիսկալ վիճակագրության և ֆինանսական հաշվետվությունների համադրումը:
- Հաշվեկռային համապարփակ տվյալներ տրամադրել՝ ներառելով ընդհանուր կառավարության բոլոր ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև՝ դրանց հոսքերի վերաբերյալ տվյալներ, և
- Ապահովել հաշվապահական տեղեկատվության այնպիսի կազմումը, որպեսզի այն ներկայացված լինի վիճակագրության միջազգային չափանիշներին (GFSM 2014 և SNA 2008) համապատասխան՝ ներառելով տեղեկություններ ներառողային և միջառողային հոսքերի և պաշարների, ինչպես նաև կոնտրագենտ ոլորտների մասին:

**Աղյուսակ 1.4. Հայաստան. գնահատման ամփոփում՝ ֆիսկալ հաշվետվություններ**

	Սկզբունք	Գնահատում	Կարևորություն	Առաջ.
1.1.1	Հաստատությունների ընդգրկում	<b>Բազային.</b> ֆիսկալ հաշվետվություններում համախմբվում են կենտրոնական կառավարության միավորների մեծ մասը և բյուջետային ՏԻՄ-երը, սակայն ներառված չեն համայնֆային ոչ առևտրային կազմակերպությունները և պետական ընկերությունները:	<b>Բարձր.</b> պետական ընկերությունները, որոնց զուտ ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 5.6%-ը, իսկ ոչ բաժնեմատային պարտավորությունները՝ ՀՆԱ-ի 40.9%-ը, դուրս են ֆիսկալ վիճակագրությունից: Վնասով աշխատող մի շարք պետական ընկերություններ համաճար կենսանվիճին ընդհանուր կառավարության հատվածում:	1.1
1.1.2	Պաշարների ընդգրկում	<b>Բազային.</b> ֆիսկալ հաշվետվություններն ընդգրկում են պետության կանխիկ միջոցների, ավանդների և պարտի մասին տվյալներ: Հաշվեկշիռ չի հրապարակվում:	<b>Բարձր.</b> հանրային հատվածի՝ հաշվետվություններում չարտացոլված ակտիվները և պարտավորությունները կազմում են ՀՆԱ-ի համապատասխանաբար 82.6 և 34.1 տոկոսը:	1.2, 1.4
1.1.3	Հոսքերի ընդգրկում	<b>Բազային.</b> ֆիսկալ հաշվետվություններն ընդգրկում են դրամարկղային եկամուտներ և ծախսեր, սակայն հաշվեգրումային տեղեկություններ չեն հրապարակվում:	<b>Միջին.</b> վնասով աշխատող պետական ընկերությունների կապիտալի մեջ ներարկումների սխալ դասակարգումը և հաշվետվություններում չներառված ոչ դրամական ծախսերի սխալ դասակարգումը սասանում են ֆիսկալ հաշվեկշիռների արժանահավաստությունը:	1.4
1.1.4	Հարկային ծախսերի ընդգրկում	<b>Լավ.</b> հարկային ծախսերից ակնկալվող եկամուտների կորուստն հրապարակվում է տարին մեկ անգամ՝ ըստ ընդհանուր ուղորտների և ազատումների խմբերի, սակայն չկան ստեմանավակումներ կամ նպատակներ:	<b>Միջին.</b> ՀՆԱ-ի 7 տոկոս կազմող հարկային ծախսերն հարաբերակախորեն բարձր են, սակայն ՖՆ-ն սխալ է նվազեցնել դրանք:	2.1
1.2.1	Տարվա ընթացքում հաշվետվությունների ներկայացումն հանախանություն	<b>Առաջադեմ.</b> տարվա ընթացքում բյուջեի կատարման հաշվետվություններն հրապարակվում են ամիսը մեկ անգամ՝ ամսվա ընթացքում:	<b>Ցածր.</b> կառավարությունը բարանցում է բյուջեն առնվազն ամիսը մեկ անգամ:	
1.2.2	Տարեկան ֆինանսական հաշվետվությունների յուրաժանությունը	<b>Առաջադեմ.</b> պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություններն հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո 4 ամսվա ընթացքում:	<b>Ցածր.</b> հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը կարող է հետսնվել տարեկան արդյունքների առկայությունը:	
1.3.1	Դասակարգում	<b>Առաջադեմ.</b> միջազգային չափանիշներին համապատասխան ներկայացվում են կամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ վարչական, տնտեսական, գործառնական և ծրագրային դասակարգման:	<b>Միջին.</b> ծախսերի այն 3 տոկոսը, որը չի դասակարգվում ըստ նպատակի, և ՊՈԱԿ-ները չներառվել ազավազում են ծախսերի կառուցվածքն ըստ տնտեսական տեսակի:	1.1



1.3.2	<b>Ներքին համապատասխանություն</b>	<b>Բազային.</b> ֆիսկալ հաշվետվությունների մեջ ֆիսկալ պակասուրդի՝ գծից վերև ներկայացվող ցուցանիշը համապատասխան է միայն գծից ներքև ներկայացվող՝ ֆինանսավարման ցուցանիշին:	<b>Բարձր.</b> պատեր-հոսք հեզդոսմենթի չբացատրված մնացորդը հասնում է ՀՆԱ-ի 0.7 տոկոսի:	1.3
1.3.3	<b>Պատմական վերանայումներ</b>	<b>Ջի համապատասխանում.</b> ֆիսկալ վիճակագրությունն համակարգված կերպով չի վերանայվում, որպեսզի դրանում արտացոլվեն նոր տեղեկությունները:	<b>Միջին.</b> ֆիսկալ վիճակագրությունը չի արտացոլում բարձրացված այն տեղեկությունները, որոնք կարող են ազդել ֆիսկալ արդյունքների վրա:	
1.4.1	<b>Վիճակագրության ամբողջականություն</b>	<b>Լավ.</b> ֆիսկալ վիճակագրությունը կազմվում է ԱՎԾ-ի կողմից և տարածվում՝ SDDS-ին համապատասխան:	<b>Միջին.</b> կարողություն ստեղծարարական լինելը կարող է ազդել վիճակագրության որակի վրա:	
1.4.2	<b>Արտաքին աուդիտ</b>	<b>Բազային.</b> ՎՊ-ն հրապարակել է տարեկան բյուջեի կատարման հաշվետվության մասին եզրակացությունը, սակայն չի տալիս ընդհանուր գնահատական այն մասին, թե արդյո՞ք ֆինանսական վիճակը ներկայացված է հումարիստ և արդար կերպով:	<b>Միջին.</b> ՀՊ-ն ստեղծվել է 2018 թվականի ապրիլին՝ ամբողջական անկախությամբ և բարձրացված մեթոդաբանությամբ:	
1.4.3	<b>Ֆիսկալ տվյալների համեմատելիություն</b>	<b>Բազային.</b> բյուջեի կատարման հաշվետվությունները կազմվում են տնտեսագիտական հիմունքով, ինչ՝ բյուջեն, սակայն տարբեր հաշվետվությունների համադրում չի իրականացվում:	<b>Բարձր.</b> ազգային հաշիվների վրա հիմնված ֆիսկալ հաշիվների և GSFM 2014-ով կազմված միջև չբացատրված տարբերությունները հասնում են ՀՆԱ-ի 2.5 տոկոսի:	1.3.

## II. ՖԻՍԿԱԿ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ

**35.** Այս բաժնում գնահատված է ֆիսկալ կանխատեսումների և բյուջետավարման գործելակերպերի որակը՝ **Կանոնագրով նախատեսված ստանդարտների համեմատությամբ:** Այս մասում ուշադրությունը կենտրոնանում է չորս հիմնական ոլորտներում.

- Բյուջեի և հարակից փաստաթղթերի համապարփակությունը,
- Բյուջետային գործընթացի կարգավորվածությունը և յուրաժանությունը,
- Բյուջետային փաստաթղթերի հայեցակարգային կողմնորոշումը, և
- Ֆիսկալ կանխատեսումների և բյուջետային առաջարկների արժանահավաստությունը:

**36.** Հայաստանը լավ կամ առաջադեմ գործելակերպ ունի **12 ցուցանիշներից 6-ում**, ընդ որում՝ բյուջետային գործընթացն հստակորեն ձևակերպված է՝ հիմնում ունենալով համապարփակ ֆիսկալ նպատակներ և բյուջետային բարձրորակ փաստաթղթեր: Իրավական և կարգավարման դաշտը ժամանակակից և հստակորեն ձևակերպված քաղաքական

է պարունակում բյուջեի կազմման համար: Բյուջետային առաջարկը խորհրդարան է ներկայացվում բյուջետային տարվա սկզբից 90 օր առաջ և հաստատվում մեկ ամիս առաջ: Ֆիսկալ ֆազմականությունն ուղղորդվում է ֆիսկալ կանոնների ժամանակակից համակարգով, որը սահմանված է օրենսդրությամբ: Բյուջեի փաստաթղթերը ներառում են մանրակրկիտ մակրոտնտեսական կանխատեսումներ, որոնք ընկած են բյուջետային պլանավորման հիմքում: Աղյուսակ 2.1-ում քվարկված են Հայաստանում բյուջետավարման ուղղորդող հիմնական օրենսդրական ակտերը, իսկ Աղյուսակ 2.2-ը պարունակում է հրապարակված հիմնական բյուջետային փաստաթղթերը:

**37. Այս ոլորտներից մի ֆանիսում Հայաստանի ներկայիս գործելիքերը չի համապատասխանում Կանոնագրով նախատեսված բազային մակարդակին:** Այս գլխում ֆինանսված են որոշակի հանգամանքներ, որոնք սահմանափակում են նրանց ազդեցությունը բյուջետային թափանցիկության վրա՝ ներառյալ.

- Կառավարության ֆիսկալ կանխատեսումների և ֆիսկալ ֆազմականության նպատակների համապատասխանության անկախ գնահատման բացակայությունը,
- Բյուջեի բաշխման մեջ տարվա ընթացքում առանց խորհրդարանի հաստատման կատարվող մեծածավալ փոփոխությունները,
- Իրար հաջորդած մի ֆանի ՄԺԾՄ-ների և տարեկան բյուջեների միջև առկա էական տարբերությունները, որոնք լավ բացատրված չեն և պատճառ կերպով փաստաթղթավորված չեն, և
- Հանրության սահմանափակ մասնակցությունը բյուջետային գործընթացին՝ բացառությամբ տեղական մակարդակի:

**Աղյուսակ 2.1. Հայաստան. բյուջետավարմանն առնչվող հիմնական օրենքները**

Փաստաթուղթ	Դերակատարում	Վերջին էական վերանայումը
Բյուջետային համակարգի մասին օրենք (ԲՀՕ)	Սահմանում է բյուջետային գործընթացը, ֆիսկալ ֆազմականության նպատակները և իրագործումը	Հունվար 2018
Պետական պարտքի մասին օրենք (ՊՊՕ)	Ուղղորդում է պարտքի ներգրավումը, սահմանում է պետական պարտքը	Հունվար 2018
Բյուջեի մասին ամենամյա օրենք (ԲՄԱՕ)	Սահմանում է բյուջետային հատկացումները	Ամենամյա

**Աղյուսակ 2.2. Հայաստան. բյուջետավարմանն առնչվող հաշվետվությունները**

Փաստաթուղթ	Մարմին	Հնգրկում	Ներկայացվում է խորհրդարանին	Հրապարակման ամսաթիվը
Միջնաժամկետ ծախսերի ծրագիր (ՄԺԾՄ)	Կառավարություն	Բյուջետային հիմնարկներ	Ի գիտություն	Հուլիս

Բյուջեի մասին ամենամյա օրենքի նախագիծ	Կառավարություն	ԿԿ (առանց արտաբյուջետային հաշիվների)	Հաստատման	Հոկտեմբեր
Բյուջետային ուղերձ (բյուջեի բացատրագիր)	Կառավարություն	ԿԿ (արտաբյուջետային հաշիվներ), ՊՈԱԿ-ներ	Ի գիտություն	Նոյեմբեր
Բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվություններ	Փանձապետարան	Կենտրոնական կառավարություն, ՏԻՄ-եր	Ի գիտություն	Եռամսյակային
Ամենամյա բյուջեի կատարման հաշվետվություններ	Փանձապետարան	Կենտրոնական կառավարություն և ՏԻՄ-եր (համախմբվում է միայն տարեկան)	Հաստատման	Տարեկան
Հաշվետվություն համախմբված ՏԻՄ-երի մասին	Ֆինանսների նախարարություն	Համախմբված ՏԻՄ-եր	Ոչ	Եռամսյակային, տարեկան
Բյուջետային ամփոփ ուղեցույց	Ֆինանսների նախարարություն	Բյուջետային հիմնարկներ	Ոչ	Դեկտեմբեր 2017 (1-ին անգամ)

## 2.1. Բյուջետային փաստաթղթերի համապարփակությունը


### 2.1.1. Բյուջեի միասնականությունը (բազային)

**38.** Բյուջեի մասին տարեկան փաստաթղթերը սեղեկություններ են պարունակում բյուջետային կենտրոնական կառավարության և ՊՈԱԿ-ների եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման մասին: Բյուջետային փաստաթղթերն ընդգրկում են կանխատեսվող եկամուտը և պետական բյուջեի հիմնարկների ծրագրված ծախսերը՝ ըստ վարչական, գործառնական, սոստեսական և ծրագրային դասակարգման: Բյուջեի հավելվածում ներկայացված են համախառն եկամուտների կանխատեսումները (այսինքն՝ բյուջետային տրանսֆերտներ և սեփական աղբյուրներից եկամուտներ), ինչպես նաև ՊՈԱԿ-ների ծրագրված ծախսերը՝ համախմբված ըստ հյուղային նախարարությունների:


**39.** Բյուջետային միավորների արտաբյուջետային հաշիվներից եկամուտները ներառված չեն բյուջեում: Ի տարբերություն ՊՈԱԿ-ների, որոնք բյուջեից դուրս են, արտաբյուջետային հաշիվները բյուջետային հիմնարկների (օրինակ՝ Ոստիկանության և Պետական եկամուտների կոմիտեի) ենթահաշիվներ են, որոնք նախատեսված են ոչ հարկային եկամուտների (օրինակ՝ տուգանքների), արտաֆին դրամաճեղոքների և վաճառից եկամուտների համար: Արտաբյուջետային հաշիվներից ծախսերը ներառված չեն բյուջեում, սակայն հաստատվում են կառավարության որոշմամբ տարվա ընթացքում: 2016 թվականին արտաբյուջետային հաշիվները կազմել են 33.8 միլիարդ դրամ,

այսինքն՝ ընդհանուր եկամուտների 2.8 տոկոսը (Գծապատկեր 2.1): Դրանք և ՊՈԱԿ-ների սեփական աղբյուրից եկամուտները կազմել են ընդհանուր պետական եկամուտների 4.7 տոկոսը (Գծապատկեր 2.2), և այս ցուցանիշով Հայաստանը մտն է համեմատելի պետությունների:

**Գծապատկեր 2.1. ԱԲՀ-ների եկամուտների կազմը**  
(ԱԲՀ-ների ընդհանուր եկամուտների տոկոս, 2016)



**Գծապատկեր 2.2. Սեփական աղբյուրից եկամուտներն ընտրված երկրներում**  
(ընդհանուր ԿԿ եկամուտների տոկոս)



Աղբյուրը՝ ԱԲՀ-ի անձնակազմի հաշվարկներ:

**40. Արտաբյուջետային հաշիվները չներառելը կբարդացնի գործող ֆիսկալ կանոնների կատարումը:** Ֆիսկալ կանոնների համակարգի արդիականացման Երջանակում վերջերս փոփոխություններ է կրել Բյուջետային համակարգի մասին օրենքը, որով կառավարությունից պահանջվում է ընթացիկ ծախսերի առավելագույն սահմանաչափ հանձնառել, երբ պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 50 տոկոսը (ցուցանիշ 2.3.1): Ծախսերի ծրագրային ցուցանիշը չի ներառում արտաբյուջետային հաշիվները, իսկ կատարողականը՝ ներառում է: Ծախսերի ծրագրային ցուցանիշի վրա դրված առավելագույն սահմանաչափը կարող է խախտվել փաստացի կատարողականի հաշվարկով, երբ արտաբյուջետային եկամուտները և ծախսերն իրականանան: Նման խախտումը տեսանելի է դառնում միայն բյուջեի կատարման ընթացքում: Թեպետ արտաբյուջետային հաշիվները ներկայումս դեռևս մեծ չեն, այս խնդիրը կարող է ավելի կարևորվել, երբ արտաբյուջետային հաշիվների գործառնությունն ավելի հաճախակի դառնա՝ նպատակ ունենալով Երջանցել ընթացիկ ծախսերի վրա սահմանված առավելագույն սահմանաչափը:


## 2.1.2. Մակրոտնտեսական կանխատեսումները (առաջադեմ)

**41. Բյուջեի փաստաթղթերը պարունակում են մանրակրկիտ մակրոտնտեսական կանխատեսումներ, որոնք ընկած են բյուջետային պլանավորման հիմքում:** Ներկայացվում են հաջորդ երեք տարիների համար մշակվող՝ հիմնական մակրոտնտեսական փոփոխականների (օրինակ՝ ՀՆԱ-ի և գնաճի) կանխատեսումները, ինչպես նաև՝ դրանց առաջարկը և պահանջարկը պայմանավորող գործոնները, և արտաքին և ներքին միջավայրին առնչվող և դրանց հիմքում ընկած ենթադրությունները: Այս փոփոխականների վերջին շրջանի միտումները և ֆիսկալ ազդեցությունների վրա դրանց ազդեցությունը նույնպես արժանանում են համապարփակ վերլուծության: Առաջին շրջափուլում կանխատեսումները ներկայացվում են Միջնաժամկետ ծախսերի ծրագրում (ՄԺԾԾ), որը խորհրդարան է ուղարկվում հունիսին: Իրանք քարոզվում են և ներկայացվում բյուջեի ամենամյա փաստաթղթում:

**42. Միջնաժամկետ կանխատեսումները վերջին տարիներին լավատեսական են եղել, սակայն էականորեն չեն տարբերվել արտաքին կառույցների արած կանխատեսումներից:** 2001-08 թվականներին իրական ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշները գերազանցել են կանխատեսումները, իսկ 2011-16 թթ. իրական ՀՆԱ-ն ավելի ցածր է եղել կանխատեսումից (Գծապատկեր 2.3): Նույնը վերաբերում է գնաճին (Գծապատկեր 2.4): 2011-16 թթ. իրական ՀՆԱ-ի կատարողականը իշխանությունների կանխատեսումների համեմատ եղել է ցածր, բայց սա վերաբերում է այլ մարմինների կողմից կատարված կանխատեսումներին (Գծապատկեր 2.5):

### Գծապատկեր 2.3. Իրական ՀՆԱ-ի կանխատեսումները


(տարին տարվա նկատմամբ, տոկոսային փոփոխությունը)




Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն

### Գծապատկեր 2.4. Գնաճի կանխատեսումները

(տարին տարվա նկատմամբ, տոկոսային փոփոխությունը)



**Գծապատկեր 2.5. Իրական ՀՆԱ-ի կանխատեսման սխալմունքը, ըստ կանխատեսման հեղինակի**  
(վաստացի հանած կանխատեսում, 2011-2016թթ. միջինը)



Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն, ԱՄՀ-ի տվյալները վերցված են Համաշխարհային տնտեսության հետազոտության կենտրոնի (WEO) ապրիլյան հրատարակությունից

### 2.1.3. Միջնաժամկետ բյուջետային երջանակը (լավ)

**43. Միջնաժամկետ բյուջետային երջանակը ներառում է միջնաժամկետ կանխատեսումներ ըստ նախարարությունների, գործառույթների և ծրագրերի, սակայն տնտեսական դասակարգման մասով ոչ ամբողջովին է թափանցիկ:** Հայաստանում 2003 թվականին ներդրվել է միջնաժամկետ ծախսերի ծրագիր՝ երջանակ (ՄԺԾԾ): ՄԺԾԾ-ի ամենամյա փաստաթուղթն հրապարակվում է հուլիսին՝ բյուջեի նախագիծը հոկտեմբերին խորհրդարան ուղարկելուց երեք ամիս առաջ: Այն ներառում է.


- Պետական բյուջեի եկամուտների հաջորդ երեք տարիների կանխատեսումները՝ ըստ տնտեսական դասակարգման առաջին աստիճանի բացվածքի,
- Պետական բյուջեի եկամուտների փաստացի արդյունքները, նախորդ տարվա փաստացին և ընթացիկ տարվա հաշվարկայինը, ինչպես նաև նախկին տարիների որոշ մասեր, բայց ոչ՝ ըստ տնտեսական դասակարգման բացվածքի,
- Պետական բյուջեի ծախսերի հաջորդ երեք տարիների կանխատեսումները՝ ըստ գործառնական, վարչական և ծրագրային դասակարգման, ինչպես նաև տնտեսական դասակարգման կապիտալ/ընթացիկ տարբերակումը, և

- Պետական բյուջեի ծախսերի փաստացի արդյունքները, նախորդ տարվա փաստացին և ընթացիկ տարվա հաշվարկայինը, ինչպես նաև նախկին տարիների որոշ մասեր, ըստ գործառնական դասակարգման բացվածքի, իսկ որոշ մասերում՝ տնտեսական դասակարգման կապիտալ/ընթացիկ տարբերակմամբ:

**44. ՄԺԾԾ-ի և բյուջետային հատկացումների միջև և ներսում առկա տարբերություններն հաստատում են դրանց միջև կապերի թույլ բնույթը:** Ամենամյա բյուջեն, որն հաստատվում է ՄԺԾԾ-ից վեց ամսից պակաս ժամանակ անց, վերջին տարիներին սովորաբար էականորեն տարբերվում է նրանից (Գծապատկեր 2.6): Այս շեղումը մասամբ կարող է բացատրվել այդ ժամանակահատվածում մակրոֆիսկալ կանխատեսումների փոփոխություններով: Օրինակ, 2017 թվականին տարեկան բյուջեն ներկայացվեց պակասուրդի շատ ավելի ցածր թիրախային ցուցանիշով, քան՝ ՄԺԾԾ-ն, քանի որ պարտքի թվերից աստիճանաբար պարզ դարձավ, որ անհրաժեշտ է լինելու կիրառել պարտքի արգելափակ (debt brake): Այնուհանդերձ, դա նաև երկու ոչ սերտորեն փոխկապակցված գործընթացների հետևանք է, որոնց շրջանակում նախարարությունները և գերատեսչություններն առանձին հայտեր են ներկայացնում ՄԺԾԾ-ի տարեկան բյուջեի համար: ՄԺԾԾ-ում Պարտքի կայունության վերլուծությանը («DSA») հղում կատարելը կբարելավի բյուջեի պլանավորման հետևողականությունը:

**Գծապատկեր 2.6. Բյուջեի առավելագույն սահմանաչափը և նույն տարվա ՄԺԾԾ-ի առավելագույն սահմանաչափը**

(բյուջե համաձայն ՄԺԾԾ, ՀՆԱ-ի տոկոս)




Աղբյուրը՝ բյուջետային փաստաթղթեր

**45. Վերջին տասնամյակում ֆիսկալ փաստացի ցուցանիշները զգալիորեն տարբերվել են ՄԺԾԾ-ում արված կանխատեսումներից, թեպետ այդ շեղումն ավելի փոքր է, քան՝ համեմատելի պետություններից շատերում:** Ծախսերի փաստացի ցուցանիշները գերազանցել են ՄԺԾԾ-ով նախատեսվածը, հատկապես՝ երկրորդ ընթացիկ տարվա մասով, երբ այն կազմել է ՀՆԱ-ի մոտ 1 տոկոսը (Գծապատկեր 2.7a): Դա հավանաբար է կեանքի պահպանողական


կանխատեսումներով (Գծապատկեր 2.7b): Արդյունքում ստացվել է, որ ՄԺԾՄ-ն տվել է ֆիսկալ հաշվեկշռի առավել հավաստի կանխատեսումներ:

**Գծապատկեր 2.7. Երկրների միջև համեմատություն. միջնաժամկետ ֆիսկալ կանխատեսման միջին սխալանքը ներդրած երկրներում, 2007–16թթ.**

**ա. Մախերի կանխատեսման շեղումը՝ կանխատեսման միջին սխալանքը (ՀՆԱ-ի տոկոս)**



**բ. Եկամուտների կանխատեսման շեղումը՝ կանխատեսման միջին սխալանքը (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ ՖՆ, ԱՄՀ-ի անձնակազմի հաշվարկներ:



#### 2.1.4. Ներդրումային ծրագրերը (բազային)

**46.** Ներդրումային ծրագրերի ներքո կառավարության ընդհանուր բազմաձև պարտավորություններն համապարփակ կերպով չեն հրապարակվում, թեպետ ներկայացվում է համապարփակ տեղեկատվություն՝ հատկապես դրանք ֆինանսավորող արտաֆին վարկերի վերաբերյալ: Բնուր խոսքը ծրագրերը ներկայումս ֆինանսավորվում են դոնորների վարկերով: Այդ ծրագրերի մասին տեղեկատվությունը ներառված է մի քանի հրապարակումներում:

- ՄԺԾԾ-ի փաստաթուղթը ներառում է արտաֆին աղբյուրներից ֆինանսավորվող կապիտալ ծախսերի ծրագրերի կանխատեսումները հաջորդ երեք տարիների համար՝ ըստ առանձին ծրագրերի և նախարարությունների, ինչպես նաև՝ դոնորների ֆինանսավորումը և կառավարության համաֆինանսավորումը,
- Տարեկան բյուջեի փաստաթղթերում այս տեղեկություններն ավելի են մանրամասնեցվում,
- Բյուջեի կատարման տարեկան և եռամսյակային հաշվետվություններում բյուջետավորվող գումարները համեմատվում են փաստացի գումարների հետ, և
- ՖՆ-ի կայքէջում առկա տեղեկանքները տեղեկություններ են պարունակում վարկային պայմանագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր արժեքի, վարկերի փաստացի ստացումների և առանձին ծրագրերով չստացված գումարների, դրանց ժամկետների և պայմանների մասին: Տեղեկանքներից մեկը վերաբերում է տարեվերջի դրությամբ կառավարության արտաֆին վարկերի և փոխառությունների ֆինանսական ցուցանիշներին, մյուսը՝ տարեվերջի դրությամբ կառավարության արտաֆին վարկերի և փոխառությունների ժամկետներին:

Այնուհանդերձ, այս տեղեկություններում չեն երևում ծրագրերից առաջացող ընդհանուր պարտավորությունները, և վարկային պայմանագրերի համաձայն չստացված գումարներն ընդհանուր առմամբ հավասար չեն շահահարարության պայմանագրերից ծագող հանձնառությունների գումարներին:


**47.** Ներդրումային խոսքը ծրագրերի հաստատումից առաջ միանական մեթոդաբանությամբ իրականացվող ծախս-օգուտ վերլուծություններ չեն պահանջվում, և ոչ միտ էն նման վերլուծություններ կատարվում: Դոնորների կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի դեպքում ծախս-օգուտ վերլուծությունները սովորաբար իրականացվում են կոնկրետ դոնորի հաստատած մեթոդաբանության համաձայն, սակայն հիմնականում դրանք չեն հրապարակվում: Ընդհանուր բյուջեի միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի համար ծախս-օգուտ վերլուծություններ կատարելու պահանջ չկա:

**48.** Ներդրումային խոսքը ծրագրերի համար ընդհանուր առմամբ պահանջվում է բաց և մրցութային ընթացակարգ: Բյուջեի ընդհանուր միջոցներից ֆինանսավորվող ծրագրերը կարգավորվում են պետական գնումների

մասին օրենքով, որը պահանջում է գնումների մրցութային և բաց ընթացակարգ, սակայն դառնալիս կողմից ֆինանսավարկող ծրագրերը միջազգային պայմանագրերի ուժով ազատված են պետական գնումների մասին օրենքի կիրառությունից: Հայաստանում խոսքը ծրագրեր ֆինանսավարող դառնալիս ընդհանուր առմամբ պահանջում են բաց և մրցութային ընթացակարգեր:

**49. Ընդհանուր կառավարության ներդրումներն Հայաստանում առանձնապես բարձր չեն այլ պետությունների համեմատությամբ, սակայն հանրային ներդրումների կատարելու պահանջմունքը կարող է ավելանալ:** Ընդհանուր կառավարության հանրային ներդրումները կազմում են ՀՆԱ-ի 3.3 տոկոսը (Գծագրակեր 2.8): Իշխանություններ մտադիր են գրեթե կրկնապատկել ընդհանուր կառավարության անվանական կապիտալ ծախսերը հաջորդ չարս տարիներին: Հաշվի առնելով Հայաստանի համեմատաբար բարձր պետական պարտքը (2017 թվականին՝ ՀՆԱ-ի 53.6 տոկոս), սահմանափակ ֆինանսական տարածության պայմաններում անհրաժեշտ է երաշխավորել հանրային ներդրումների արդյունավետությունը:

**Գծագրակեր 2.8. Հանրային ներդրումները ընտրված երկրներում**  
(ընդհանուր կառավարություն, ՀՆԱ-ի տոկոս, 2016 թ.)



Աղբյուրը՝ Հայաստանի դեպիում՝ ՀՀ իշխանություններ, այլ երկրների դեպիում՝ SՀԶԿ:

**50. Ջանքեր են գործադրվում Հայաստանում հանրային ներդրումների կառավարման գործելակերպն էլ ավելի բարելավելու ուղղությամբ:** ՊՄԳ-ի մասին նոր օրենք է մշակվում, և ակնկալվում է, որ Կառավարությունը մոտ ապագայում կմշակի հանրային ներդրումների կառավարման բարեփոխումների օրակարգ: Այս տարվա ընթացքում ԱՄՆ-ի կողմից կիրականացվի Հանրային ներդրումների կառավարման գնահատում (PIMA), որը կներկայացնի նշված օրակարգին օժանդակող առաջարկություններ:

## 2.2. Կարգավորվածությունը

### 2.2.1. Ֆիսկալ օրենսդրությունը (առաջադեմ)

**51. Բյուջետային համակարգի մասին օրենքը (ԲՀՕ) կարգավորում է բյուջետային առաջարկի բովանդակությունը, բյուջեի նախապատրաստման օրացույցը, իսկ սահմանադրական օրենքով կարգավորվում են բյուջեի փոփոխելու՝ օրենսդրի իրավունքները:**<sup>8</sup> ԲՀՕ-ի 15-րդ հոդվածը պարունակում է մանրակրկիտ դրույթներ ՄԺԾԾ փաստաթղթի բովանդակության վերաբերյալ, իսկ 16-րդ հոդվածը՝ նմանատիպ պահանջներ ամենամյա բյուջեի փաստաթղթի վերաբերյալ: 21-րդ հոդվածում մանրակրկիտ ուղեցուցիչներ կան այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպել ՄԺԾԾ-ն և բյուջեի նախապատրաստման գործընթացները: Դա ներառում է ՄԺԾԾ-ն խորհրդարան ներկայացնելու ժամկետները (նախքան յուրաքանչյուր տարվա հուլիսի 20-ը) և բյուջեի ներկայացման ժամկետները (բյուջետային տարվա մեկնարկից 90 օր առաջ): ԲՀՕ-ն կարգավորում է նաև համայնքային բյուջեների կազմումը, հաստատումը և կատարումը (հոդվածներ 27 – 36): Խորհրդարանի կանոնակարգ-օրենքով նախատեսվում է, որ խորհրդարանը կարող է փոփոխություններ առաջարկել բյուջեի նախագծում, և որ կառավարությունը պարտավոր է ներկայացնել բյուջետային վերանայված առաջարկ՝ կառավարությանն ընդունելի փոփոխություններով: Խորհրդարանն ընդունում կամ մերժում է վերանայված բյուջեն որպես ամբողջություն, և հնարավոր չէ փեարկության դեպքում առանձին մասերը:

**52. Իրավական և կարգավորման դաշտով նախատեսվում է բյուջեի մշակման թափանցիկ համակարգ:** ԲՀՕ-ն ընդունվել է 1997 թվականին և պարբերաբար փոփոխվել՝ վերջին անգամ 2017 թվականին, որպեսզի արտացոլի բյուջետային գործընթացի նորամուծությունները և բարելավումները: ԲՀՕ-ն համալրվում է մի շարք ամենամյա որոշումներով և կանոնակարգերով, որոնք լրացուցիչ ուղեցուցիչներ են պարունակում բյուջետային գործընթացի վերաբերյալ: Կառավարությունն ամեն տարի որոշում է ընդունում, որով մանրակրկիտ կերպով նախատեսվում է ՄԺԾԾ-ի և բյուջեի նախապատրաստման գործընթացի ծրագիրը և ժամանակացույցը:<sup>9</sup> Բյուջեի հաստատումից հետո ընդունվում է մեկ այլ որոշում, որը կարգավորում է բյուջեի կատարման գործընթացը:<sup>10</sup> Այդ որոշումը նախատեսվում է բյուջետային հատկացումների եռամսյակային բաշխումը և լրացուցիչ ուղեցուցիչներ բյուջետային փոփոխությունների՝

<sup>8</sup> Օրենք թիվ 137, 1997 թվականի հունիս, կատարված փոփոխություններով հանդերձ:

<sup>9</sup> Տե՛ս 2017 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1559 որոշումը *Հայաստանի Հանրապետության 2019 թվականի բյուջետային գործընթացի սկսելու մասին*:

<sup>10</sup> Տե՛ս 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1717 որոշումը *Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման ապահովող միջոցառումների մասին*:

ներառյալ նախարարությունների և գերատեսչությունների արտաբյուջետային հաշիվներով կատարվող գործարքների վերաբերյալ:

### 2.2.2. Բյուջետային փաստաթղթերի յուրաժանությունը (լավ)

**53. Բյուջետային առաջարկը ներկայացվում է խորհրդարան բյուջետային տարվա մեկնարկից 90 օր առաջ և հաստատվում է դեկտեմբերի սկզբի դրությամբ:** Բյուջեի ներկայացման ժամկետն ամրագրված է ԲՀՕ-ում և միևուր պահպանվում է՝ ըստ Ֆինանսների նախարարության տրամադրած սովյալների: Խորհրդարանը բավարար ժամանակ ունի բյուջեի բննարկումների համար, և բյուջեն սովորաբար հաստատվում է բյուջետային տարվա մեկնարկից բավարար ժամանակ առաջ: Աղյուսակ 2.3-ում երևում է, որ վերջին հինգ տարիներին տարեկան բյուջեն ներկայացվել է ժամանակին և հաստատվել նախան ֆինանսական տարվա ավարտը:

**Աղյուսակ 2.3. Բյուջեի նախագծի ներկայացման և հաստատման ամսաթվերը, 2014 – 2018թթ.**

Բյուջետային տարի	Բյուջեի ներկայացման ամսաթիվը	Բյուջեի հաստատման ամսաթիվը
2014 թ. պետական բյուջեի նախագիծ	Հոկտեմբեր 2, 2013 թ.	Դեկտեմբեր 12, 2013 թ.
2015 թ. պետական բյուջեի նախագիծ	Հոկտեմբեր 2, 2014 թ.	Դեկտեմբեր 4, 2014 թ.
2016 թ. պետական բյուջեի նախագիծ	Հոկտեմբեր 2, 2015 թ.	Դեկտեմբեր 9, 2015 թ.
2017 թ. պետական բյուջեի նախագիծ	Սեպտեմբեր 30, 2016 թ.	Դեկտեմբեր 8, 2016 թ.
2018 թ. պետական բյուջեի նախագիծ	Հոկտեմբեր 2, 2017 թ.	Դեկտեմբեր 8, 2017 թ.

Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն

## 2.3. Քաղաքականության կողմնորոշումը

### 2.3.1. Ֆիսկալ քաղաքականության նպատակները (լավ)


**54. Ֆիսկալ քաղաքականությունը ներկայումս ուղղորդվում է նորացված ֆիսկալ կանոններով, որոնք ամրագրված են Բյուջետային համակարգի մասին օրենքում.**

- Բյուջետային տարվա (t+1) համար առաջարկվող պետական պահասուրդը չի կարող գերազանցել հաջորդ տարվա համար նախատեսված (t+1) ՀՆԱ-ի 7.5 տոկոսը,

- Եթե պետական պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 40 տոկոսը, ապա ( $t+1$ ) տարում կապիտալ ծախսերը չեն կարող ցածր լինել պետական բյուջեի դեֆիցիտի ծրագրված մակարդակից,
- Եթե պետական պարտքը կազմում է ՀՆԱ-ի 50-ից մինչև 60 տոկոսը, ապա դեռևս կիրառելի է վերաբեռնվել ի լրումն նրա, որ առաջնային ընթացիկ ծախսերի աճի տեմպի համար որպես սահմանաչափ է սահմանվում ՀՆԱ-ի աճի պատմական (վերջին 7 տարվա միջին) տեմպը,
- Եթե պետական պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 60 տոկոսը, ապա, ի լրումն վերաբեռնվել (այս դեպքում սակայն առաջնային ընթացիկ ծախսերի աճի տեմպի համար որպես սահմանաչափ է սահմանվում ՀՆԱ-ի աճի միջին տեմպից 0.5 տոկոսից ցածր մակարդակը), ընդհանուր ընթացիկ ծախսերը չեն կարող գերազանցել գալիք տարվա հարկային եկամուտների ընդհանուր գումարը,
- Երբ պետական պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 50 տոկոսը, ապա կառավարությունը նաև պարտավոր է ՄԺԾԾ-ում ներկայացնել ուղղիչ գործողությունների ծրագիր՝ ուղղված 5 տարում պարտքի 50 տոկոսից ցածր մակարդակին հասցնելուն, և
- Երբ պետական պարտքը գերազանցում է ՀՆԱ-ի 60 տոկոսը, ապա կառավարությունը պարտավոր է Ազգային ժողով ներկայացնել միջոցառումների ծրագիր՝ ուղղված 5 տարում պարտքը 60 տոկոսից ցածր մակարդակին հասցնելուն:

Բյուջետային համակարգի մասին օրենքով նախատեսված պաշտպանական բացառիկ իրավանքունով (escape clause) կառավարությանը բույլատրվում է կասեցնել վերահիշյալ միջոցառումների գործողությունը բացառիկ դեպքերում, օրինակ՝ աղետի, պատերազմի և բացասական տնտեսական ցնցումների պարագայում: Դա, սակայն, կիրառելի չէ պակասուրդի՝ ՀՆԱ-ի 7.5 տոկոսի չափով սահմանված առավելագույն սահմանաչափի նկատմամբ:

## Գծապատկեր 2.9. Ֆիսկալ կանոնների էվոլյուցիան




Աղբյուրը՝ համապատասխան օրենսդրություն:

**55. Այս կանոնները ժամանակի ընթացքում որոշակի էվոլյուցիա են ապրել:** Գծապատկեր 2.9-ում բերված ժամանակացույցում ամփոփված են այդ փոփոխությունները: Պարտքի մասին կանոնն առաջին անգամ սահմանվել է Պետական պարտքի մասին օրենքում 2008 թվականին՝ սահմանափակելով պետական պարտքը ՀՆԱ-ի 50 տոկոսի չափով, և արգելելով նոր պարտքի ներգրավումն այդ սահմանաչափին հասնելուց հետո: Միևնույն ժամանակ, ԲՀ0-ով նախատեսվել է պակասուրդի առավելագույն սահմանաչափ՝ ՀՆԱ-ի 5 տոկոսի չափով: 2009 թվականին այդ օրենքները փոփոխվել են՝ պակասուրդի սահմանաչափը բարձրացնելով մինչև ՀՆԱ-ի 7.5 տոկոս, իսկ պարտքի առավելագույն սահմանաչափը՝ մինչև ՀՆԱ-ի 60 տոկոս, սահմանելով նաև պարտքի արգելակ (debt brake)՝ 50 տոկոսի չափով, և պահանջելով, որպեսզի պակասուրդը չգերազանցի ՀՆԱ-ի 3 տոկոսը: 2015 թվականին պարտքի կանոններում փոխվել է պարտքի սահմանումը՝ պետական պարտքից (կառավարության և կենտրոնական բանկի պարտք) այն վերածելով կառավարության պարտքի: 2018 թվականին պարտքի և պակասուրդի կանոնները փոխվել են՝ նախորդ պարբերությունում նշված կերպով, և ավելացվել է պատասխանական բացառիկ իրավանդումը (escape clause):


**56. Պակասուրդի կանոնը վերջին տարիներին չի ունեցել պարտադիր կատարման բնույթ, սակայն 2017 թվականին գործարկվել է պարտքի արգելակը (debt brake) (գծապատկերներ 2.10 և 2.11):** 2009 թվականին (համաեվրոպային ֆինանսական հզոնախառնի հետևանքների պարագայում) պակասուրդի առավելագույն սահմանաչափը ՀՆԱ-ի 5 տոկոսից 7.5 տոկոս բարձրացնելուց ի վեր այն պարտադիր չի եղել: ԱՄՆ-ի հետագա ծրագրերում սահմանված ավելի ցածր առավելագույն սահմանաչափերն են դրա փոխարեն ուղղորդել ֆիսկալ քաղաքականությունը: 2014 թվականի տնտեսական ցնցումից հետո պարտքը գերազանցեց ՀՆԱ-ի 50 տոկոսի սահմանաչափը, և

կառավարությունը պարտավոր եղավ 2017 թվականի բյուջեն կազմելիս պահպանել 3 տոկոսի պակասուրդով ուղղիչ միջոցառում իրականացնելու պահանջը: Պարտքը դեռևս բարձր է ՀՆԱ-ի 50 տոկոսից, սակայն ֆիսկալ կանոնների նոր համակարգը, որն ընդունվել է 2017-ի վերջին, այլևս չի պահանջում ուղղում իրականացնել 3 տոկոսի պակասուրդի միջոցով: Կառավարությունից, սակայն, ակնկալվում է ուղղիչ գործողությունների ծրագրի ներկայացնել 2019-2021 թթ. ՄԺԾԾ-ում, ինչպես նաև՝ որոշամաք սահմանել ընթացիկ ծախսերի առավելագույն սահմանաչափ:

**Գծապատկեր 2.10. Դեֆիցիտներ և դեֆիցիտի մասին կանոն (ՀՆԱ-ի տոկոս)**



**Գծապատկեր 2.11. Պարտք և պարտքի մասին կանոններ (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ «World Economic Outlook»-ի տեղեկատվական բազա:

**57. Վերջին փոփոխությունների նպատակն է կանոններն ավելի ճկուն դարձնել՝ մինչև 50 տոկոսի ժամանակ**

**պահպանելով դրանց արժանահավատությունը:** Պարտքի կանոնները ներկայումս պարունակում են պաշտպանական բացառիկ իրավանդում (escape clause), որը կառավարությանը թույլ է տալիս կասեցնել դրանց կիրառությունը բացառիկ հանգամանքներում: Համակարգի հիման վրա կանոնների արժանահավատությունն ապահովելու նպատակով, միաժամանակ նաև հետևելով ԱՄՆ-ի խորհուրդներին, իշխանությունները որոշել են անփոփոխ պահել թվային սահմանաչափերը և փոխընթացի դրանք 40 տոկոսի լրացուցիչ սահմանաչափով: Այնուհանդերձ, 50 տոկոսի պարտքի արգելափակումը այլևս ավտոմատ հեզբառում չի պահանջվում, իսկ պարտքի 60 տոկոսի առավելագույն սահմանաչափի դեպքում նոր ներգրավվող պարտքն անվավեր չի դառնում:

**58. Ավելի մեծ ճկունության դեպքում պահանջվում է բարձրացնել թափանցիկությունը:** ՄԺԾԾ-ում ներառված ուղղիչ գործողությունների ծրագիրը, որպեսզի վստահելի լինի, պետք է սերտորեն կապակցված լինի բյուջեի հետ, և ժամանակի ընթացքում լինի հետևողական (տե՛ս ցուցանիշ 2.1.3): ՄԺԾԾ-ն բյուջեի, ինչպես նաև հետագա ՄԺԾԾ-ների հետ համակարգված կերպով համապատասխանեցնելու դեպքում կբարձրանա դրա արժանահավատությունը (տե՛ս

ցուցանիշ 2.4.3): Այլ կանխատեսողների տվյալների հետ կառավարության կանխատեսումների համեմատությունը նաև քաղաքացիական լինելու հանձնարարության հաստատում կլինի և ուղի կհարթի ավելի լավ և արժանահավատ կանխատեսումների համար (տե՛ս ցուցանիշ 2.4.1):

**59. Կանոնների իրագործման համար անհրաժեշտ կլինի արտաքին խիստ հսկողություն:**<sup>11</sup> Ֆինսկալ կանխատեսումների նախկատարողական հսկողությունը և ֆինսկալ կանոնների պահպանումը կարող են ապահովվել անկախ ֆինսկալ կառույցի, օրինակ՝ Խորհրդարանի բյուջետային գրասենյակի կողմից, երբ վերջինս կստանա համապատասխան գործառնությունների կատարման իրավասությունը և կձևավորի բավարար կարողություններ: Հավասարապես կարևոր է պահանջների բավարարման հետևատարողական ստուգումը: Դա կարող է իրականացնել Հաշվեհանձնիչ պալատը, որը 2015 թվականի Սահմանադրության համաձայն իրավասու է կատարել բյուջեի մասին ամենամյա օրենքով նախատեսված պետական միջոցների օգտագործման արտաքին հաշվեհանձնում: Կառավարության ֆինսկալ նպատակների՝ ներառյալ ուղղիչ գործողությունների ծրագրի ներառումը բյուջեի մասին ամենամյա օրենքում Հաշվեհանձնիչ պալատին իրավունք կընձեռի՝ իրականացնելու պահանջների բավարարման հետևատարողական ստուգումը:

### 2.3.2. Կատարողականի վերաբերյալ տեղեկությունները (առաջադեմ)

**60. Պետական բյուջեի փաստաթղթերը ներառում են նախկատարողական և հետևատարողական տեղեկություններ բոլոր ծրագրերի և դրանց ենթափոստերի վերաբերյալ:** Ծրագրային դասակարգումը 2008 թվականից ի վեր կիրառվում է բյուջեի ներկայացման և հաշվետվությունների մեջ: Բյուջետային ուղերձի հավելվածներինց մեկը մանրակրկիտ տեղեկություններ է պարունակում բոլոր ծրագրերի և ենթափոստերի նպատակների, արդյունքների և վերջնարդյունքների վերաբերյալ: Բոլոր ծրագրերի համար սրված են վերջնարդյունքի նկարագրություններ, և նրանց մոտ կեսի համար նախատեսված են արդյունքի որոշ ցուցանիշներ: Քանակական ցուցանիշներն համապարփակ կերպով կիրառվում են բոլոր արդյունքների համար: Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է մանրակրկիտ տեղեկություններ թիրախների կատարողականի վերաբերյալ և տալիս է շեղումների պատճառների բացատրությունը: 2.1 տեխնոլոգիայի ներդրումը բերված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործող ծրագրերից մեկի օրինակը, որն ունի 16 ենթափոստեր, ինչպես նաև՝ դրա ենթափոստերի նկարագրությունը 2018 թվականի բյուջեում:

**Տեխնոլոգիայի ներդրումը 2.1. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության ծառայության ծրագիրը**

<sup>11</sup> ԱՄՇ-ի տեխնիկական զեկույցը՝ Հայաստան: Ֆինսկալ կանոնների կատարելագործումը (Իսթլա-Նարիս ևս ալթ, 2017 թվականի հունիս), լրացուցիչ մանրամասնությամբ անդրադառնում է տվյալ խնդրին:



**Ծրագրի վերջնարդյունքի նկարագրություն**

- *Քործազրկության մակարդակի կրճատում, կայուն զբաղվածության ապահովում, ժամանակավոր զբաղվածության ցուցանիշ*

**Ենթածրագրի անվանում**

- *Օժանդակության ցուցաբերում գյուղատնտեսական հողերի աշխատանք սրբանոց սեփականատերերին՝ խթանելով սեզոնային զբաղվածությունը*

**Ոչ ֆինանսական ցուցանիշներ**

Քանակական. ծրագրերի հանրագումային թիվը՝ եռ.1՝ 270, եռ.2՝ 1,100, եռ.3՝ 2,200, տարի՝ 2,710

Որակական. ծրագրերի և շահառուների համապատասխանությունն օրենսդրությամբ նախատեսված ընտրության չափորոշիչներին՝ տարեկան 100%

Ժամկետայնություն. ծրագրի իրագործման միջին տևողությունը՝ տարեկան մինչև 180 օր

**Ֆինանսական ցուցանիշներ (միլիոն դրամ)**

Եռ.1՝ 13.6, եռ.2՝ 55.5, եռ.3՝ 111.0, եռ.4՝ 13.699

Աղբյուրը՝ բյուջեի փաստաթղթեր:

**61. Կատարողականի վերաբերյալ տեղեկությունների որակի և ներկայացման բարելավման բարեփոխումներ են իրականացվելու 2019 թվականի բյուջեի համար:**<sup>12</sup> Դրանք կապակցված կլինեն ըստ ծրագրերի հատկացումների ներդրման հետ՝ փոխարինելով հատկացումների ներկայիս համակարգը, որում համադրվում են վարչական միավորը, գործառույթը և տնտեսական հողվածը: 2019 թվականի բյուջետային փաստաթղթերը բյուջետային ուղերձի հավելվածի տեսքով ներառելու են նաև վերջնարդյունքի և արդյունքի ֆանտաստիկ ցուցանիշներ: Ըստ ծրագրերի հատկացումների ներդրումը լրացուցիչ խթան կդառնա կատարողական բյուջետավարման համակարգը մաս ապագայում բարելավելու համար, մասնավորապես՝ ունենալով ծրագրերի և ենթածրագրերի ներկայացման առավել միասնական մոտեցում՝ կատարողականի բարելավված համահունչ ցուցանիշներով, առավել մանրակրկիտ տեղեկություններով՝ ծրագրերի դասակարգման գործող մակարդակներին ավելացնելով երրորդը, և վերջնարդյունքի ցուցանիշներն ավելի թափանցիկ կերպով կապակցելով հատկացումների հետ:

**2.3.3. Հանրային մասնակցությունը (բազային)**

**62. Հայաստանը վերջերս հրապարակել է կարճ փաստաթուղթ, որը կոչվում է բյուջետային ուղեցույց:** Այն ներառում է բյուջետային համակարգի և բյուջետային գործընթացի նկարագրությունը, ինչպես նաև՝ բյուջեի հիմնական ազդեցությունների ամփոփումը և հիմնում դրված տնտեսական ցուցանիշները: Ուղեցույցի է ուղեցույցի համապարփակ լինելը, սակայն դրա ընթերցանելիությունը կարելի է բարելավել: Բյուջեի ուղեցույցը մանրակրկիտ է, ներառում է օգտակար տեղեկություններ կառավարության հիմնական նախաձեռնությունների մասին, սակայն չի

<sup>12</sup> Մասնավորապես, մեկ նախարարության գործունեության շրջանակից դուրս եկող բոլոր ծրագրերի վերացումը, բոլոր ծրագրերի խմբավորումը համապատասխան ֆազիտակնություն համար պատասխանատու նախարարության ներքո, օրինակ՝ ծրագրերի համար պատասխանատու առաջին մակարդակի բյուջետային կազմակերպությունների ցանկից մարզպետարանների հանումը:

ներկայացնում մանրակրկիտ տեղեկություններ այն մասին, թե ինչպես է այն գործնականում ազդելու շարքային  
ֆազաֆացու կյանքի վրա:

**63. Բյուջեի ֆինանսումներին մասնակցելու՝ հանրության հնարավորությունը սահմանափակ է, սակայն որոշ նոր  
նախաձեռնություններ են տեղի ունենում համայնֆալետարանների մակարդակում:** Հանրությունը կարող է նաև  
կարծիքներ հայտնել բյուջեի նախագծի մասին ինտերնետային կայքի միջոցով<sup>13</sup> այն բանից հետո, երբ այն  
ներկայացվում է խորհրդարան: Ինչևէ, ոչ ֆազաֆացիները, ոչ ՀԿ-ները և գործարար խմբերը չեն կարող պաշտոնապես  
մասնակցել խորհրդարանական հանձնաժողովի լսումներին կամ բյուջեի նախագծի վերաբերյալ գրավոր  
մեկնաբանություններ ներկայացնել տարբեր հանձնաժողովներին: ՏԻՄ մակարդակում խոսքը համայնֆներում որոշ  
նախաձեռնություններ են իրականացվել, օրինակ՝ տեղական բյուջեի ֆինանսումների ուղիղ հեռարձակումը, ինչպես  
նաև տեղական բյուջեի մեկ տոկոսն ուղղակիորեն ֆազաֆացիների որոշումաբ տեղաբաշխելը, սակայն դրանք դեռևս  
չառ վտֆր են ընդհանուր ծախսերի համեմատությամբ: Միջազգային վտրձը հաստատում է, որ մասնակցային  
բյուջետավարումը կարող է բարելավել ծախսերի որակը և հարկային կարգապահությունը,<sup>14</sup> որն առանձնակի  
կարևորության խնդիր է Հայաստանի համար:

## 2.4 Արժանահավատությունը

### 2.4.1. Անկախ գնահատումը (չի համապատասխանում)

**64. Կառավարությունը չի հրապարակում իր կանխատեսումների և անկախ կանխատեսողների համեմատությունը,  
և դրանք չեն ենթարկվում անկախ գնահատման:** Ո՛չ ՄԺՄՄ-ում, ո՛չ ամենամյա բյուջեի փաստաթղթերում  
կառավարության տնտեսական և ֆիսկալ կանխատեսումները չեն համեմատվում անկախ կառույցների  
կանխատեսումներին: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից խորհրդարան ներկայացվող պաշտոնական հաղորդագրության  
մեջ համաձայնություն է տրվում կառավարության առաջարկած բյուջեին, սակայն չի ներառվում նրա  
կանխատեսումների գնահատում:

**65. Խորհրդարանի բյուջետային գրասենյակը չի գնահատում կառավարության կանխատեսումները և  
ֆազաֆականությունը՝ ներառյալ ֆիսկալ կանոնի պահպանումը:** Նրան գործառնական անկախություն է շնորհվել  
2016 թվականին՝ լիազորելով օժանդակել խորհրդարանին բյուջետավարման հարցերում: Այն ներկայումս

<sup>13</sup> <http://www.e-draft.am>

<sup>14</sup> Shteyn Torgler, B. (2005) "Tax morale and Direct Democracy." European Journal of Political Economy 21, pp. 525 – 531, որում առկա է հետազոտությունը: Ռուսաստանի վերջին շրջանի փորձնական ավյալները ցույց են տալիս, որ մասնակցային  
բյուջետավարումը կարող է ավելացնել տեղական եկամուտների հավաքագրումը և բարձրացնել հանրային ծառայությունների նկատմամբ  
հանրության գոհունակության մակարդակը ("Does Participatory Budgeting Improve Decentralized Public Service  
Delivery?", Beurmann et al., IDB Working Paper #547, 2014):

քերհամալրված է կադրերով (ընդամենը՝ երեք տեխնիկական աշխատող), և հիմնական նպատակն է օգնել պատգամավորներին՝ հասկանալու բյուջետային առաջարկները և դրանց ազդեցությունը: Որպեսզի Բյուջետային գրասենյակն ապագայում անկախ ֆինանսական հսկիչի դեր կատարի, անհրաժեշտ կլինի ամրապնդել նրա լիազորությունները և զարգացնել նրա կարողությունները:<sup>15</sup> Շվեդիայի օրինակը ցույց է տալիս, թե սահմանափակ բյուջե ունեցող կառույցն ինչպես կարող է հաջողության հասնել (Տեխնոլոգիայի ներդիր 2.2):

**Տեխնոլոգիայի ներդիր 2.2. Շվեդիայի ֆինանսական հաղափականության խորհուրդը՝ արդյունավետ է, չնայած փոքր բյուջեին**

Շվեդիայի ֆինանսական հաղափականության խորհուրդն անկախ գնահատականներ է ներկայացնում Շվեդիայի կառավարության ֆինանսական հաղափականության վերաբերյալ: Այդ գործառնությունը նա լրացնում է կանխատեսումներ կատարող և բյուջեի կատարումը հսկող երեք այլ անկախ կառույցներին: Խորհրդի ղեկավարները սահմանափակ են (2011 թվականին՝ մոտ 1 միլիոն ԱՄՆ դոլար), իսկ կադրային ապահովում՝ մոտ հինգ ոչ լրիվ դրույթով աշխատող և խորհրդատու:

Շվեդիայի ֆինանսական հաղափականության խորհրդի հիմնական գործառնություններից է վերանայել կառավարության ծրագրերը՝ համեմատելով այն ֆինանսական կանոնի հետ, որը Շվեդիայում ձևակերպված է որպես ավելցուկ ունենալու նպատակ, ինչպես նաև՝ ծախսերի առավելագույն սահմանափակումը: Շվեդիայի ֆինանսական հաղափականության խորհուրդը նախկինում և դրական, և բացասական գնահատականներ է ներկայացրել: 2012 թվականին այն կոչվեց արտահայտվել կառավարության հաղափականությանը՝ նշելով, որ «2011 և 2012 թվականներին հետապնդվող ֆինանսական հաղափականությունն համահունչ է եղել գործող ֆինանսական քաղաքականությանը, ... և փոքր է հաջորդ մի քանի տարիներին ծախսերի՝ առավելագույն սահմանափակումը գերազանցելու ուղիքը», իսկ 2013 թվականին հայտարարել է, որ «կառավարության հաղափականություններում արտացոլված ցուցանիշները վկայում են այն մասին, որ ավելցուկ ունենալու թիրախը չի կատարվել», և որ «կառավարության անհրաժեշտ է հստակ ծրագրեր ներկայացնել տնտեսական տվյալ քաղաքական ավելցուկ ունենալու թիրախը կատարելու վերաբերյալ»:

Իրական հատվածի վերաբերյալ կառավարության կանխատեսման սխալմունքը նվազել է (Աղյուսակ 2.4: Թեպետև դա կարող է բազմաթիվ այլ գործոններով պայմանավորված լինել, այն համահունչ է մի շարք այլ պետությունների փորձին, որոնցում անկախ ֆինանսական խորհրդի ստեղծումն օգնել է կանխատեսումների սուբյեկտիվ շեղումները նվազեցնելուն:

**Աղյուսակ 2.4. Իրական ՀՆԱ-ի կանխատեսման սխալմունքը**

(սուկու)


	2000-2005	2006-2010	2011-2015
Միջին բառակրուսի արմատ սխալմունքը	0.58	1.87	0.47

<sup>15</sup> ԱՄՆ-ի տեխնիկական գեղարվեստի շտաբի ղեկավարը՝ *Ջոյստատն: Ֆինանսական կանոնների կատարելագործումը* (Իսթերն-Նորթ և այլք, 2017 թվականի հունիս), լրացուցիչ մանրամասնությամբ անդրադառնում է այն խնդրին, թե ինչպես կարող է Բյուջետային գրասենյակն ավելի կարեւոր դեր կատարել վերանայված ֆինանսական կանոնների պահպանությունն ապահովելու գործում:

Կանխատեսման սխալմունքը հաշվարկվել է «Sweden Convergence Plans 2000-2015» ծրագրից և ԱՄՀ-ի WEO-ից վերցված տվյալների հիման վրա:

**66. Ֆիսկալ խորհրդի բացակայության պայմաններում առկա կանխատեսումների համեմատությունը կարելի է ներառել բյուջետային փաստաթղթերում:** Հայաստանի վերաբերյալ պարբերական մակրոտնտեսական կանխատեսումներ են հրապարակում մի շարք կառույցներ՝ ներառյալ Կենտրոնական բանկը, միջազգային կազմակերպությունները՝ ներառյալ ԱՄՀ-ն, և ռեյթինգային գործակալությունները, օրինակ՝ Fitch-ը: Համապատասխան օրինակը գետնի վրա է Գծագրակեր 2.12-ում, որտեղ բյուջետային տարվա՝ ՄԺԾՄ-ում տեղ գտած իրական ՀՆԱ-ի տարեկան կանխատեսումը համեմատված է նույն ժամանակահատվածի վերաբերյալ Fitch-ի կանխատեսումների և եռամսյակային միջակայքի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի կանխատեսումների հետ: Նման համեմատություն հրապարակելը կարող է օգնել կանխատեսման շեղման՝ սխալմունքի նվազեցմանը, խրախուսելով ներքին ֆինանսիստները դրանց նախապատրաստման փուլում, և խրախուսելով կանխատեսման առավել հիմնավոր մեթոդների որդեգրումը:

**Գծագրակեր 2.12. Իրական ՀՆԱ-ի կանխատեսումների համեմատությունը (2013-2018 թթ.)**



Աղբյուրը՝ Ֆինանսների նախարարություն:

#### 2.4.2. Հավելյալ բյուջե (չի համապատասխանում)


**67. Կառավարությանը մեծ նկունություն է վերապահված՝ փոփոխելու բյուջետային հատկացումները:**

Բյուջետային համակարգի մասին օրենքով և բյուջեի մասին ամենամյա օրենքով կառավարությանը թույլատրվում է.

- Ավելացնել ծախսերն այնչափ, որչափ պետական բյուջեի մուտքերը գերազանցում են ծրագրվածը (բյուջեի մասին ամենամյա օրենքի 11-րդ հոդված),
- Համամասնորեն կրճատել (սեկվեստացնել) ծախսերը, եթե առկա է բյուջետային մուտքերի մինչև 10 տոկոսի չափով թերհավաքագրման ռիսկ (բյուջետային համակարգի մասին օրենքի 23-րդ հոդված), և
- Վերաբաշխումներ կատարել ծրագրերի միջև՝ հաստատված բյուջեի մինչև երեք տոկոսի չափով (բյուջետային համակարգի մասին օրենքի 23-րդ հոդված):

**68. Արդյունքը եղել է այն, որ անցյալում չի ծագել հավելյալ բյուջե խնդրելու անհրաժեշտություն:** Անգամ 2009 թվականին, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի արդյունքում եկամուտները զգալիորեն նվազեցին, 23-րդ հոդվածի հիման վրա կառավարությունը կարողացավ սեկվեստացման սկզբունքով կրճատել ծախսերը: Վերջին տարիներին նման նկունություն հնարավորությունը թույլ է տվել կառավարությանը տարվա ընթացքում վերանայել բյուջեն՝ մեծացնելով այն, սովորաբար լրացուցիչ կապիտալ ծախսերի համար միջոցներ հատկացնելու նպատակով: 2012-16թթ. լրացուցիչ հատկացումները միջինում կազմել են հաստատված բյուջեի 3.3 տոկոսը (Գծապատկեր 2.13):<sup>16</sup>


**Գծապատկեր 2.13. Բյուջեի վերանայումներ (հանած ԱԲՀ-ները)**  
(2012-2016թթ., հաստատված բյուջեի տոկոսային փոփոխություն)



Աղբյուրը՝ ՖՆ:

**Գծապատկեր 2.14. Բյուջեի մասին օրենքի շրջանակից դուրս թույլատրվող ծախսերը**  
(հաստատված բյուջեի տոկոս, 2014-2016 թթ.)

<sup>16</sup> Այս թիվը չի ներառում այն լրացուցիչ հատկացումները, որոնք համարյա ամեն տարի կատարվում են արտաբյուջետային հաշիվներից ծախսերի կատարման միջոցով:



Աղբյուրը՝ ՖՆ:


**69. Հայաստանում լրացուցիչ ծախսերը հաստատվում են պարբերաբար, հաճախ՝ շաբաթական**

**հաճախականությամբ ընդունվող որոշումների հիման վրա և խորհրդարանի կողմից հաստատում չեն պահանջում:** Ի

լրումն բյուջետային հատկացումներում կատարվող փոփոխությունների, տարվա ընթացքում հաստատվում են երկու այլ տեսակի ծախսեր՝ (i) արտաբյուջետային հաշիվներից կատարվող ծախսեր, և (ii) Կառավարության պահուստային ֆոնդից կատարվող ծախսեր (2014-16թթ. համապատասխանաբար կազմել են հաստատված բյուջեի 2.8 և 2.5 տոկոսը): Միասին վերցված, 2014-16թթ. ընդհանուր ծախսերի միջինում 8.6 տոկոսը կատարվել է առանց խորհրդարանի նախապես արված հաստատման (գծապատկեր 2.14), թեև այս գումարները նախապես արժանացել են խորհրդարանի հավանությանը և կատարումից հետո վավերացվել են տարեկան բյուջեի կատարման մասին հաշվետվությունը խորհրդարանի կողմից հաստատելու արդյունքում: Շատ երկրներում, հատկապես ՏՀԶԿ-ի անդամ պետություններում բյուջեում էական փոփոխությունները կատարվում են խորհրդարանի կողմից հաստատվող հավելյալ բյուջեների ընդունման միջոցով: Միջինում սա տեղի է ունենում տարվա մեջ մեկից մինչև երեք անգամ (գծապատկեր 2.15): Հավելյալ բյուջեների անհրաժեշտությունն ի հայտ է գալիս, երբ տնտեսական իրադրությունը պահանջում է բյուջետային դիրքի փոփոխություն կամ երբ առաջարկվում են ֆազայականությունների նոր նախաձեռնություններ:

**Գծապատկեր 2.15. Հավելյալ բյուջեների միջին թիվը ընտրված երկրներում**

(2009թ.-ից մինչև 2011թթ.)



Աղբյուրը՝ ՏՀԶԿ:

### 2.4.3. Կանխատեսումների համադրումը (չի համապատասխանում)

#### 70. Բյուջետային փաստաթղթերում չի ներկայացվում ընթացիկ ֆիսկալ կանխատեսումների և նախկին

**կանխատեսումների համեմատություն:** Ֆիսկալ կանխատեսումներն էականորեն փոխվել են ՄԺԾՄ-ով բյուջետային տարվա համար նախատեսված առավելագույն սահմանաչափի համեմատ տարեկան բյուջեում, որը հաստատվում է առաջինից ընդամենը վեց ամիս անց, և այդ փոփոխությունը բացարձակ արժեքով 2012-2017 թվականներին միջինը կազմել է ՀՆԱ-ի 0.61 տոկոսը և նույն ժամանակաշրջանում փաստացի ցուցանիշների (արտաբյուջետային հաշիվների գուտ գումարի) համեմատ արձանագրել են միջինում ՀՆԱ-ի 0.96 տոկոսի չափով շեղում: Ո՛չ ՄԺԾՄ-ի, ո՛չ տարեկան բյուջեի կանխատեսումները չեն անդրադարձնում նախկին մակրոտնտեսական և ֆիսկալ կանխատեսումներին, և չեն բացատրում, թե ինչու են ծագել այդ տարբերությունները:

#### 71. Նոր ֆիսկալ կանոնները պահանջում են ֆիսկալ կանխատեսումների թափանցիկության ավելի բարձր

**մակարդակ:** Պարտիկ կանոններում ամրագրված ուղղիչ մեխանիզմը ճկունություն է ընձեռում կառավարությանը՝ առաջարկելու արժանահավատ միջնաժամկետ ֆիսկալ հետազիծ, որով ՀՆԱ-ի 50 տոկոսը գերազանցելու դեպքում կնվազեցվի պարտքը (տե՛ս բաժին 2.3.1): Ավելի ուշ այդ հետազիծը հզորակա կառավարությանն անհրաժեշտ կլինի բացատրել դա անելու հիմքում ընկած պատճառները: Դրանք կարող են առնչվել սնտեսական գործոնների փոփոխություններին, նախորդ վերանայումից ի վեր անհրաժեշտ դարձած նոր բաղաձայնություններին և մեկնագամյա այլ գործոններին, որոնք կարող են արդարացնել այդ հզորումը: Օգտակար կլինի դա արտացոլել համադրող

աղյուսակի տեսքով: Տեխստային ներդիր 2.3-ում ներկայացված է համադրման աղյուսակի օրինակ, որը կարելի է ներառել հաջորդ ՄԺԾՄ-ում:<sup>17</sup>

### **Տեխստային ներդիր 2.3. Կանխատեսումների համադրումը**

Աղյուսակ 2.5-ում ներկայացված է, թե համադրող աղյուսակն ինչպես կարող է ներկայացվել հաջորդ՝ 2019-2021 թվականների ՄԺԾՄ-ում:

- I. Ելակետը 2017-2019 թթ. ՄԺԾՄ-ն է. 2017-ի փաստը կարելի է համադրել (i) 2017-2019 թթ. ՄԺԾՄ-ի ծրագրի հետ, (ii) 2017-ի առաջարկվող բյուջեի հետ, և (iii) 2017-ի վերանայված բյուջեի հետ, իսկ 2018 և 2019 թվականների առավելագույն սահմանաչափերը կարելի է համադրել նույն տարիների համար 2018-2020 թթ. ՄԺԾՄ-ում այդ նույն տարիների համար սահմանված առավելագույն սահմանաչափերի հետ: Տարբերությունները կարելի է բացել՝ ներկայացնելով պատճառներն ըստ բաղադրանքային, տնտեսական գործոնի, մեկնագամյա գործոնների և հաշվապահական հաշվառման փոփոխությունների: Փաստը և ծրագիրը տարբեր կլինեն, սակայն պետք է ջանք գործադրել՝ նվազագույնի հասցնելու այդ մնացորդը:
- II. Նույն գործընթացով կարելի է 2018-2020 թթ. ՄԺԾՄ-ն համադրել (i) 2018 թվականի հաստատված և վերանայված բյուջեի հետ, (ii) 2019 և 2020 թվականների համար 2019-2021 ՄԺԾՄ-ում սահմանված առավելագույն սահմանաչափերի հետ:
- III. Աղյուսակը կարելի է ընդլայնել՝ 2019-2021 թթ. ՄԺԾՄ-ն դրանում համադրելով 2019-ի համար առաջարկվող բյուջեի հետ:

Կարելի է ներկայացնել նաև փաստացի ցուցանիշների և հաստատված բյուջեի ավելի մանրակրկիտ (ներքևից վերև) բացվածք (տե՛ս աղյուսակ 2.6)।

### **Աղյուսակ 2.5. ՄԺԾՄ-ների և տարեկան բյուջեների միջև համախառն ծախսերի ցուցանիշներն համադրող աղյուսակի օրինակ (միլիարդ դրամ)**

<sup>17</sup> Միացյալ Թագավորության Բյուջետային պատասխանատվության գրասենյակը գերազանց տարեկան գեկույց ([Forecast evaluation report \(FER\)](#)) է հրապարակում յուրաքանչյուր աշնանը, որում ուսումնասիրվում է իր կանխատեսումների համեմատությունը փաստացի ավյալներին, և ներկայացվում են ապագա կանխատեսումների համար բաղված դասերը:



	2017	2018	2019	2020	2021
<b>MTEF 2017-2019</b>	<b>Budget year</b>	<b>First outer year</b>	<b>Second outer year</b>		
Total expenditure	x	x	x		
Changes in macro forecasts	x	x	x		
Policy measures	x	x	x		
One-offs	x	x	x		
<b>Approved Budget 2017</b>	<b>x</b>				
I. Extrabudgetary accounts	x				
In-year policy measures	x				
<b>Revised Budget 2017</b>	<b>x</b>				
Changes in macro economic factors	x				
Accounting or one-offs	x				
Residual (unexplained)	x				
<b>Total variation</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>		
<b>MTEF 2018-2020</b>	<b>Actual</b>	<b>Budget year</b>	<b>First outer year</b>	<b>Second outer year</b>	
Total expenditure	x	x	x	x	
Changes in macro forecasts		x	x	x	
In-year policy measures		x	x	x	
One-offs		x	x	x	
Approved Budget 2018		x			
Extrabudgetary accounts		x			
II. In-year policy measures		x			
Revised Budget 2018		x			
Changes in macro economic factors		x			
Accounting or one-offs		x			
Residual (unexplained)		x			
<b>Total variation</b>		<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	
<b>MTEF 2019-2021</b>	<b>Estimated actual</b>	<b>Budget year</b>	<b>First outer year</b>	<b>Second outer year</b>	
Total expenditure	x	x	x	x	
Changes in macro forecasts			x		
III. Policy measures			x		
One-offs			x		
<b>Draft Budget 2019</b>			<b>x</b>		

**Տեխնային ներդիր 2.3. Կանխատեսումների համադրությունը (շարունակ....)**

**Աղյուսակ 2.6. 2018 թվականի կանխատեսումների սխալանքի բացվածքը**

(միլիարդ դրամ)

	2017 forecast	Outturn	Difference	of which:		
				Policy changes	Economic factors	Residual
<b>Taxes and duties</b>	x	x	x	x	x	x
value added tax	x	x	x	x	x	x
profit tax	x	x	x	x	x	x
income tax	x	x	x	x	x	x
excise tax	x	x	x	x	x	x
customs duty	x	x	x	x	x	x
income tax	x	x	x	x	x	x
other taxes and duties	x	x	x	x	x	x
<b>Other income</b>	x	x	x			
<b>Official transfers</b>	x	x	x			
<b>Expense</b>	x	x	x	x	x	x
wages	x	x	x	x	x	x
goods and services	x	x	x	x	x	x
interest payment	x	x	x	x	x	x
subsidies	x	x	x	x	x	x
transfers	x	x	x	x	x	x
pensions and allowances	x	x	x	x	x	x
other	x	x	x	x	x	x
<b>Acquisition of non-financial assets</b>	x	x	x			

Աղբյուրը՝ ԱՄՀ

**Առաջարկություններ**

Հիմնախնդիրը. ֆիսկալ կանոնների փոփոխված երջանակի հիմքում ընկած է միջնաժամկետ ծախսերի արժանահավաստ ծրագիր՝ ֆիսկալ նեգրությունն իրականացնելու նպատակով: ՄԺՄՄ-ի և բյուջեի խոցոր գումարների վերանայումները նախորդ ծրագրերի համեմատությամբ չեն ապահովում պլանավորման կայունությունը:

**Առաջարկություն 2.1.** Կատարելագործել ՄԺՄՄ-ն և բյուջեի փաստաթղթերը՝ մասնավորապես.

- ՄԺԾԾ-ում և բյուջեի մասին ամենամյա օրենքում ներառել ֆիսկալ կանոններին համապատասխանության մասին հայտարարություն՝ ներառյալ պաշտպանական բացառիկ իրավանդումը (**escape clause**) գործողության մեջ գնելու հիմքերը:
- Հասակեցնել ՄԺԾԾ փաստաթուղթը և համադրելի տեսքով տեղեկություններ ներկայացնել ՄԺԾԾ-ում, ուղղիչ գործողությունների ծրագրում և բյուջետային ուղերձում:
- ՄԺԾԾ-ում ներառել եկամուտների և ծախսերի բացվածք՝ լիարժեք տնտեսական դասակարգմամբ,
- ՄԺԾԾ-ն և տարեկան բյուջեն ներկայացնել որպես հարապատասխան բազային գործընթացի փուլեր՝ ՄԺԾԾ-ներում և բյուջետային ուղերձում ներառելով ընդհանուր եկամուտների և ծախսերի համադրման աղյուսակներ:
- Հաշվետվության տեսքով ներկայացնել բոլոր հարկային ծախսերը:

**Հիմնախնդիրը. ֆիսկալ կանոնների փոփոխված շրջանակի թափանցիկությունն անհրաժեշտ է բարձրացնել:**  
**Քաղաքականություն մշակողներին ընձեռված նկունությունը պետք է համադրել այդ նկունության վստահելի իրականացումը երաշխավորող մեխանիզմի հետ:**

**Առաջարկություն 2.2. Կատարելագործել անկախ գնահատումը՝ մասնավորապես.**

- ՄԺԾԾ-ում և բյուջետային փաստաթղթերում ներառել կառավարության կանխատեսումների և այլ կառույցների կանխատեսումների համեմատությունը:
- Ֆիսկալ կանոններին համապատասխանության մասին հայտարարություն ներառել բյուջեի մասին ամենամյա օրենքում՝ ապահովելով, որպեսզի Հաշվեհանձնիչ պալատն ունենա պահանջների բավարարման հետևատարողական ստուգում իրականացնել:
- Զարգացնել խորհրդարանի բյուջետային գրասենյակի տեխնիկական կարողությունները՝ նրան պատրաստելով ֆիսկալ կանխատեսումների գնահատման դերակատարման համար և ֆիսկալ կանոններին համապատասխանության հետևատարողական ստուգումների համար:

**Հիմնախնդիրը. տարվա ընթացքում բյուջեն պարբերաբար փոխելու ներկայիս գործելակերպը սասանում է դրա արժանահավատությունը և ազդում է նոր ֆիսկալ կանոնների կիրառության վրա: Հաստատված բյուջեի, վերանայված բյուջեի և փաստացի տվյալների միջև առկա մեծ շեղումների պարագայում էլ ավելի է դժվարանում ծախսերի առավելագույն սահմանաչափը մոնիթորինգի ենթարկելը և վերահսկելը:**

**Առաջարկություն 2.3. Նվազեցնել տարվա ընթացքում բյուջեի վերանայումները՝ մասնավորապես.**

- Կանխատեսել արտաբյուջետային հաճիվների եկամուտները և ծախսերը, և դրանք ներառելով ամենամյա բյուջեի մեջ:
- Բյուջեի մասին ամենամյա օրենքի 11-րդ հոդվածում (որը կառավարությանն այսօր բույլատրում է կանխատեսվածից ավելի եկամուտներ ստանալու պարագայում առանց սրևէ սահմանափակման ավելացնել ծախսերը) ամրագրել առավելագույն սահմանաչափ:
- Կառավարության պահուստային ֆոնդը բաժանել երկու մասի՝ ընթացիկ այնպիսի ծրագրերի իրականացման պահուստ, որոնք չեն կարող նախատեսվել բյուջեով, և իրապես պայմանական՝ չնախատեսված դեպքերի պահուստ:

**Աղյուսակ 2.7. Հայաստանի գնահատման ամփոփումը. ֆինակալ կանխատեսումները և բյուջետավարումը**

	Սկզբունք	Գնահատում	Կարևորություն	Առաջ.
2.1.1	<b>Բյուջեի միասնականություն</b>	<b>Բազային.</b> հաստատված բյուջեում ներկայացված չեն արտաբյուջետային հաճիվների սեփական եկամուտները (ոչ հարկային, և արտաֆին գրամուհուրհներ) և ծախսերը:	<b>Բարձր.</b> արտաբյուջետային հաճիվները եկամուտների 2.8 տոկոսն են, և դրանցով է պայմանավորված տարվա ընթացքում կատարվող վերահայումների մեծ ծավալը:	2.3
2.1.2	<b>Մակրոտնտեսական կանխատեսումներ</b>	<b>Առաջադեմ.</b> բյուջեի փաստարդյրները ներառում են հիմնական մակրո փոփոխականների կանխատեսումները, դրանց բաղադրիչները և հիմնում ընկած ենթադրությունները:	<b>Միջին.</b> կանխատեսումը որպես կանոն լավատեսական է եղել վերջին տարիներին, սակայն ժեղման՝ սխալմանի չափին համադրելի է այլ կանխատեսողների ժեղման չափին:	
2.1.3	<b>Միջնաժամկետ բյուջետային օրջանակ</b>	<b>Լավ.</b> ՄԺՄԾ-ն ներառում է նախորդ երկու տարիներին փաստացի տվյալները և եկամուտների և ծախսերի կանխատեսումներ հաջորդ երեք տարիների համար՝ ըստ նախարարության, գործառույթի և ծրագրի, բայց՝ միայն ըստ տնտեսական խմբի բարձր մակարդակի:	<b>Բարձր.</b> մեծ տարբերություններ են եղել ՄԺՄԾ-ի կանխատեսումների և փաստացի տվյալների միջև, ընդ որում՝ ժեղման պատճառը առավել լավատես մտեղումն է եղել:	2.1
2.1.4	<b>Ներդրումային ծրագրեր</b>	<b>Բազային.</b> հիմնական ծրագրերի ընտրությունը պահանվում է կատարել բաց և մրցութային գործընթացով: Կառավարությունը չի հրապարակում բազմամյա պարտավորությունների ընդհանուր չափը: Մախս-օգուտ վերլուծություններ համակարգված կերպով չեն իրականացվում կամ հրապարակվում:	<b>Բարձր.</b> ծրագրվում է հաջորդ 4 տարիներին կրկնապատկել կապիտալ ծախսերը՝ ֆինակալ սահմանափակ փաթերի պայմաններում: Սղափող PIMA գնահատումը որոշակի առաջարկություններ կներկայացնի հանրային ներդրումների կառավարումը բարելավելու վերաբերյալ:	
2.2.1	<b>Ֆինակալ օրենսդրություն</b>	<b>Առաջադեմ.</b> Բյուջետային համակարգի մասին օրենքով կարգավորվում են բյուջետային օրացույցը և բյուջեի բովանդակությունը: Օրենսդրի՝ փոփոխություն կատարելու	<b>Ցածր.</b> իրավական դաշտում հստակ հայեցակարգ է սահմանված բյուջեի նախապատրաստման համար:	

		իրավունքները սահմանված են սահմանադրական օրենքով:		
2.2.2	<b>Բյուջետային փաստաթղթերի յուրաժանություն</b>	<b>Լավ.</b> բյուջետային առաջարկը խորհրդարան է ներկայացվում բյուջետային տարվա սկզբից 90 օր առաջ և հաստատվում է դեկտեմբերի սկզբներին:	<b>Ցածր.</b> բյուջեի ներկայացման և հաստատման ժամկետները վերջին 5 տարիներին պահպանվել են:	
2.3.1	<b>Ֆիսկալ ֆազդակահանության նպատակներ</b>	<b>Լավ.</b> ֆիսկալ կանոնները հեզորտ են և ժամկետային, սակայն ֆունկցիոնալ վերանայվել են (2008 թ.' պակասուրդի կանոնի փոփոխություն, 2015 թ.' պարաֆի սահմանում, 2017 թ.' նոր կանոններ):	<b>Բարձր.</b> պարաֆի արգելակի 50 տոկոսի ցուցանիշ է կիրառվում 2017 թվականից ի վեր, և պահանջվում է ուղղիչ գործողությունների ծրագիր:	2.1-2.3
2.3.2	<b>Կատարողական</b>	<b>Առաջադեմ.</b> բյուջետային փաստաթղթերում ներկայացված են կառավարության ֆազդակահանության բոլոր հիմնական ոլորտների թիրախները և վերջնադրյալների կատարման մակարդակը:	<b>Միջին.</b> կարելի է էլ ավելի բարելավել կատարողականի մասին տեղեկությունները և հատկացումների հետ դրա կապը՝ այդպիսի բարելավելով որոշումների կայացումը:	
2.3.3	<b>Հանրային մատակարարություն</b>	<b>Բազային.</b> բյուջետային ուղեցույց՝ բյուջեի հիմնական ցուցանիշների ամփոփումը: Մատակցային նախաձեռնություններ իրականացվում են համայնքների մակարդակում:	<b>Ցածր.</b> բյուջետային փաստաթղթերը շատ համապարփակ են և նաև ներառում են ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշներ:	
2.4.1	<b>Անկախ գնահատում</b>	<b>Ձի համապատասխանում.</b> չի ներկայացվում համեմատություն անկախ կանխատեսողների կանխատեսումների հետ: Բյուջետային գրասենյակը չի գնահատում կառավարության կանխատեսումները:	<b>Բարձր.</b> ֆիսկալ կանոնի վերանայումը ավելացել է ճկունությունը, սակայն պահանջվում է ավելի խիտ մոնիթորինգ:	2.2
2.4.2	<b>Հավելյալ բյուջե</b>	<b>Ձի համապատասխանում.</b> օրենսդրությամբ կառավարությանը լայն լիազորություն է վերադասված՝ փոփոխելու բյուջետային հատկացումները: Հավելյալ բյուջե որպես այդպիսին չի պահանջվում:	<b>Բարձր.</b> տարվա ընթացքում առանց խորհրդարանի հաստատման կատարվող բյուջետային վերանայումները կազմում են ծախսերի 8.6 տոկոսը:	2.3
2.4.3	<b>Կանխատեսումների համադրում</b>	<b>Ձի համապատասխանում.</b> տարբեր տարիների ֆիսկալ կանխատեսումների միջև առկա տարբերությունները չեն ներկայացվում և վերլուծվում:	<b>Միջին.</b> վերջին 5 տարիներին բյուջեի և տվյալ տարվա ՄԺՄՄ-ի, փաստացի ցուցանիշների (համաձ ԱԲՀ-ները) և բյուջեի միջև բացարձակ տարբերությունները միջինում համապատասխանաբար կազմել են ՀՆԱ-ի 0.6 և 0.96 տոկոսը:	2.1

### III. ՖԻՍԿԱԿ ՌԻՍԿԵՐԸ

**72. Կառավարությունը պետք է հրապարակի, վերլուծի և կառավարի հանրային ֆինանսներին սպառնացող ռիսկերը և ապահովի ֆիսկալ որոշումների կայացման արդյունավետ համակարգումը ողջ հանրային հատվածի ներքում:**

**Ներքում:** Այս գլխում գնահատված է Հայաստանի ֆիսկալ ռիսկերի վերլուծություն, կառավարման և հաշվետվությունների ներկայացման գործելակերպերի որակը՝ դրանք համեմատելով ԱՄՆ-ի Ֆիսկալ Թափանցիկության կանոնագրերում հետևյալ երեք ուղղություններով սահմանված չափանիշներին.

- Ֆիսկալ ռիսկերի հրապարակման և վերլուծության ընդհանուր համակարգը,
- Որոշակի աղբյուրներից, օրինակ՝ կառավարական երաշխիքներից, պետական-մասնավոր գործընկերություններից և ֆինանսական հատվածից բխող ռիսկերի կառավարումը և հաշվետվություններում ներկայացումը, և
- Ֆիսկալ որոշումների կայացման համակարգումը կենտրոնական կառավարության, ՏԻՄ-երի և պետական ընկերությունների միջև:

**73. Հայաստանի առջև ծառայած են նշանակալից մի քանի ֆիսկալ ռիսկեր, որոնք բնորոշվում են տարբեր հաշվետվություններում, սակայն դրանց ներկայացումն հատվածական է:**

Որոշ ֆիսկալ ռիսկեր բնորոշվում են անհատապես՝ առանձին փաստաթղթերում կամ միջնաժամկետ ծախսերի ծրագրի և բյուջետային փաստաթղթերի առանձին մասերում: Որոշ ռիսկեր էլ ընդհանրապես բնորոշված չեն կամ նշված են ընդամենը հպանցիկ: Հիմնական ֆիսկալ ռիսկերի համախմբված ամփոփ վերլուծություն ներկայացված չէ բյուջետային փաստաթղթերում: Ֆիսկալ ռիսկերի քանակորոշումը և դրանց հնարավոր ազդեցության գնահատումն համապարփակ չեն, և չեն գնահատվում մի քանի տարբեր ռիսկերի համաժամանակյա դրսևորման հնարավոր հետևանքները: Այդուսակ 3.1-ում ամփոփ ներկայացված են Հայաստանում ֆիսկալ ռիսկերին վերաբերող փաստաթղթերը:

**74. Ֆինանսների նախարարությունը ստեղծել է Ֆիսկալ ռիսկերի գնահատման բաժին (ՖՌԳԲ), սակայն նրա իրավասությունները սահմանափակ են:**

ՖՌԳԲ-ն ստեղծվել է 2014թ. վերջին որպես բաժին բյուջետային բյուջեի կառուցվածքում: Ինչևէ, 2018թ. հունիսին հաստատված Ֆինանսների նախարարության նոր կանոնադրության համաձայն ՖՆ-ում վարչությունների վերակազմավորումից հետո ՖՌԳԲ-ի կարգավիճակը պարզ չէ: Տարին երկու անգամ այն կազմում է ֆիսկալ ռիսկերի մասին տեղեկանք (ՖՌՏ), որտեղ գնահատվում է էներգետիկայի, տրանսպորտի և ջրային տնտեսության ոլորտներում գործող 22 կորպորացիաների (ներառյալ 2 կոնցեսիոներների) ֆինանսական ծանր վիճակի հավանականությունը և որը հրապարակվում է ՄԺԾՄ-ում և տարեկան բյուջեի փաստաթղթերում:

**Աղյուսակ 3.1. Հայաստան. Ֆինանսական հիմնադրամներ**

Հաշվետվություն	Առնչվող ռիսկեր և հիմնախնդիրներ	Հեղինակ	Հանախառնություն
Միջնաժամկետ ծախսերի ծրագիր	Մակրոտնտեսական ռիսկեր բյուջեի համար: Որոշ պետական ընկերությունների, կարգավորվող մասնավոր ընկերությունների և ենթակառուցվածքի ՊՄԳ-ների առնչվող ռիսկեր:	Կառավարություն	Տարեկան
Տարեկան բյուջեի ուղերձ/բյուջեի բացատրագիր	Մակրոտնտեսական ռիսկեր բյուջեի համար: Որոշ պետական ընկերությունների, կարգավորվող մասնավոր ընկերությունների և ենթակառուցվածքի ՊՄԳ-ների առնչվող ռիսկեր:	Կառավարություն	Տարեկան
Հայաստանի զարգացման ռազմավարություն	10-ամյա մակրոտնտեսական կանխատեսումների առնչվող ռիսկեր	Կառավարություն	Նախորդը՝ 2014-ին Նորը ներկայումս մշակվում է
Պարտքի կայունության վերլուծություն	Պետական պարտքի առնչվող ռիսկեր	Ֆինանսների նախարարություն	2012 թ., 2017 թ.
Պարտքի եռամյա ռազմավարություն	Փոխարժեքի ռիսկեր պարտքի համար, վերաֆինանսավորման ռիսկեր, սոկոսադրույքի ռիսկ	Ֆինանսների նախարարություն	ՄԺԾԾ-ի մաս
Պետական պարտքի մասին հաշվետվություն	Պարտքի կառավարման փաստացի ցուցանիշներ, ռիսկերի գնահատումների փոփոխություններ: Հավելվածներում՝ երաշխիքներ և ենթավարկեր:	Ֆինանսների նախարարություն	Տարեկան
Ամսական վիճակագրական տեղեկագիր	Պարտքի ցուցանիշներ, համախմբված տվյալներ երաշխիքների և ենթավարկերի վերաբերյալ:	Ֆինանսների նախարարություն	Ամսական
Երաշխիքների մասին տեղեկություններ՝ հրապարակված կայքէջում	Կառավարության տված երաշխիքներ, մանրակրկիտ տեղեկություններ երաշխիքների մասին:	Ֆինանսների նախարարություն	Տարեկան

ՊՄԳ-ների մասին տեղեկություններ՝ հրապարակված կայքէջում	Ամփոփ տեղեկություններ ՊՄԳ պայմանագրերի վերաբերյալ	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	Թարմացվում է պարբերաբար
Ֆինանսական կայունության հաշվետվություն	Ֆինանսական հատվածի կազմակերպություններին առնչվող ռիսկեր	ՀՀ ԿԲ	Կիսամյակային
Պետական ընկերությունների մոնիթորինգի զեկույց	Պետական ընկերություններին առնչվող ռիսկեր	Պետական գույքի կառավարման վարչություն	Կիսամյակային

### 3.1. Ռիսկերի հրապարակումը և վերլուծությունը

#### 3.1.1. Մակրոտնտեսական ռիսկերը (առաջադեմ)

**75. Բյուջետային փաստաթղթերը պարունակում են մակրոտնտեսական և ֆիսկալ սցենարների զգայնության վերլուծությունը:** ՄԺԾԾ-ի հավելվածներից մեկում (Բյուջեի մակրո ռիսկերը) քննարկվում և ֆանակական գնահատման է ենթարկվում ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի, ներմուծման և արտաքին աղբյուրներից ստացումների այլընտրանքային սցենարների ազդեցությունը պետական եկամուտների, ծախսերի և ֆինանսավորման վրա: Ներառված են նաև ՀՆԱ-ի և հարկային եկամուտների աճի հավանականային կանխատեսումներ՝ հիմնում ունենալով մի մոդել, որում դիտարկվում են ուղարտային փոխադարձ կապերը և վարչագծի արձագանքը ֆազաֆականության փոփոխություններին: Սպասվող հաջորդ տարբերակում այս վերլուծությունն ընդլայնվելու է՝ ընդգրկելով ֆիսկալ հիմնական ազդեցությունները: Պարտի կայունության հաշվետվությունում, որը վերջին անգամ հրապարակվել է 2012 և 2017 թվականներին, ներկայացվում է ելակետային սցենարը և տարբեր սցենարների ներքո գնահատվում ցնցումների ազդեցությունը տնտեսական աճի, փոխարժեքի և առաջնային դեֆիցիտի վրա, ինչպես նաև միասին վերցված մի քանի ցնցումների ազդեցությունը պարտի կայունության վրա: Կարելի է քննության առնել այլևի մեծ հանախականությամբ հաշվետվության հրապարակման հարցը: Պարտի միջնաժամկետ ազմավարությունը (որն հրապարակվում է ամեն տարի) գնահատում է պարտի պարտֆելի տարբեր ռիսկերը՝ կապված դրա ժամկետայնության և կառուցվածքի հետ:


**76. Վերջին տարիների մակրոտնտեսական ցնցումները նպաստել են Հայաստանում հանրային ֆինանսների վիճակի վատթարացմանը:** Մակրոտնտեսական տատանողականությունն Հայաստանում պատմականորեն չի տարբերվել համեմատելի պետությունների ցուցանիշներից (Գծապատկեր 3.1): Վերջին տասնամյակում, սակայն, արտաքին ցնցումների երկու ալիքներ են հարվածել Հայաստանի տնտեսությանը՝ 2008-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, որին հաջորդել է Ռուսաստանի տնտեսության դանդաղումը 2014 թվականին՝ հանգեցնելով արժույթի կտրուկ արժեզրկման և դրամական փոխանցումների անկման, որի պատճառով պետական պարտ/ՀՆԱ



հարաբերակցությունը 2008 թվականին 16 տոկոսից 2017 թվականին հասել է 59 տոկոսի: Գծապատկեր 3.2-ում ներկայացված են այդ աճի հիմնական բաղադրիչները. 2008թ. մինչև 2017թ. պարտք/ՀՆԱ հարաբերակցության 43 տոկոսային կեսով աճում 37 տոկոսային կեսը վերագրվում է առաջնային դեֆիցիտին, 13 տոկոսային կեսը՝ փոխարժեքի արժեզրկմանը, մինչդեռ բարձր աճի շնորհիվ պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 12 տոկոսային կեսով նվազել է: Մնացած 10 տոկոսային կեսի համար բացատրություն չկա: Արագացող աճի պայմաններում կանխատեսվում է այս հարաբերակցության նվազում 2019 թվականից հետո (Գծապատկեր 3.3): Պահպանվում են, սակայն, անբարենպաստ ուղիները: Պարտքը պայմանավորող գործոնների (աճ, տոկոսադրույք, փոխարժեք և առաջնային հաշվեկշիռ) պատմական տատանողականության վրա հիմնված ստոխաստիկ կանխատեսումները ցույց են տալիս, որ պարտքի՝ ՀՆԱ-ի 60 տոկոսից ավելի բարձրանալու հավանականությունն աննշան չէ:


**Գծապատկեր 3.1. Երկրների համեմատություն. անվանական ՀՆԱ-ի, փոխարժեքի և պետական եկամուտների տատանողականությունը ընտրված երկրներում**

(բոլորը՝ անվանական փոփոխականներ, տոկոս, 2006-2016 թթ.)




Աղբյուրը՝ ԱՄՆ World Economic Outlook: Համեմատելի պետություններ և ԱՊՀ պետություններ

**Գծապատկեր 3.2. Հանրային հատվածի պարտքի փոփոխությունը պայմանավորող գործոնները (ՀՆԱ-ի տոկոս)**



**Գծապատկեր 3.3. Հանրային պարտքի մակրոզգայնության վերլուծություն**  
(ՀՆԱ-ի տոկոս)



Աղբյուրը՝ անձնակազմի հաշվարկներ: Պարտքի էլակետային կանխատեսումն արտացոլում է պարտքի կայունության վերջին վերլուծությունը, որն Հայաստանի համար իրականացվել է ԱՄՀ-ի կողմից 2017 թվականի հուլիսին (IMF Country Report): Պարտքի ստոյատիկ կանխատեսումների հիմնում պարտքը պայմանավորադ հիմնական գործոնների (ՀՆԱ-ի աճ, պարտքի արդյունավետ տոկոսադրույք, իրական փոխարժեք և առաջնային հաշվեկիտ) 2006-2016 թվականների պատմական վարիանս-կովարիանս աղյուսակն է:

### 3.1.2. Ֆիսկալ հատուկ ռիսկեր (բազային)

**77. Տեղեկությունները ֆիսկալ հատուկ ռիսկերի մասին, որոնք ուղղակիորեն չեն առնչվում մակրոտնտեսական գործոններին, հատվածական է:** ՄԺԾԾ-ի և տարեկան բյուջեի վաստադրյալի տարբեր բաժիններում վերլուծված են հետևյալին առնչվող ռիսկեր.

- Որոշ պետական ընկերություններ, կարգավորող մասնավոր ընկերություններ և երկու ՊՄԳ-ներ ենթակառուցվածքային երեք հիմնական ոլորտներում,
- Հարկերի կատարողականը և վարկերի և դրամաճնոթիների բաշխումը, և
- Հարկային ծախսերը:

**78. Առկա են զգալի ֆիսկալ ռիսկեր՝ թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի, որոնք չեն արտացոլվում**

**հաշվետվություններում:** Ստորև՝ Աղյուսակ 3.2-ում, ներկայացված են ներկայիս կարևորագույն ֆիսկալ հատուկ ռիսկերը, իսկ հնարավորության դեպքում՝ դրանց մեծության մասավոր չափը: Աղյուսակում երևում է, որ ֆիսկալ ուղղակի ռիսկերի համախառն առավելագույն չափը կարող է հասնել ՀՆԱ-ի 70 տոկոսի, իսկ անուղղակի ռիսկերինը՝ ՀՆԱ-ի մոտ 125 տոկոս: Ուղղակի ռիսկերի մեծ մասը ներկայացված են հաշվետվություններում, սակայն կառավարության փաստաթղթերում չեն բացահայտվում անուղղակի ռիսկերը: Թեպետ ֆիսկալ ռիսկերի բացահայտման համակարգումը և վերահսկողությունը ՖՆ-ի պատասխանատվության ներքո են, կոնկրետ հյուղային նախարարության կամ գերատեսչության պարտֆելի մեջ մտնող ռիսկերի կառավարումը նրա իսկ պատասխանատվության ներքո է. սա միջազգային լավ գործելակերպ է նրա համար, որ սահմանված է հստակ հաշվետվողականություն հյուղային նախարարության կամ գերատեսչության համար:

**Աղյուսակ 3.2. Հայաստան. ֆիսկալ հատուկ ռիսկերը<sup>1</sup>**

		Մեծության չափումը	ՀՆԱ-ի %	Հաշվետվ. առկա՞ է
<b>Ուղղակի ռիսկեր</b>				
Երաշխիքներ	Պարտքի երաշխիքներ		1.4	Այո
	Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի անդերառայթինգը		5.8	Ոչ
	Պարտամուրհակ ԿԲ-ին		1.5	Այո
ՊՄԳ-ներ	Հնդհանուր ներդրումը		10.2	Այո
	Հնդհանուր ռիսկի չափը		չկա	Ոչ
Ֆինանսական հատված	Ֆին. պետ. ընկ. պարտավորություններ, հանած սեփ. կապիտալը (ներառյալ ԿԲ)		32.4	Այո
	Պետական ոչ ֆին. ընկերությունների պարտավորություններ, հանած սեփ. կապիտալ <sup>18</sup>		8.5	Այո

<sup>18</sup> Այս պարտավորությունները ներառում են բյուջեից վերավարկվածները և կառավարության երաշխիքով բանկերից վարկավորումը:

Պետական կորպորացիաներ (առանց ԿԲ)			
Վերավարկավորում	Զմարված վարկեր վերավարկավորման գծով	9.6	ՈՏ
<b>Անուղղակի ռիսկեր</b>			
Ֆինանսական հատված	Առևտրային բանկերի պարտավորություններ	66	
Բնական պաշարներ	Հնդերբի ոլորտի մասնակցությունն ՀՆԱ-ի տատանողականությունը	2	ՈՏ
Բնական աղետներ	Տարեկան միջին կորուստը	1.3	ՈՏ
	Առավելագույն կորուստ պատճառով հավանական երկրաշարժը (50 տարի)	2.6	ՈՏ
<b>Երկարաժամկետ ռիսկեր</b>			
Կենսաթոշակային ծախսեր	Զֆինանսավորվող կենսաթոշակային պարտավորություններ	51.5	ՈՏ
Առողջապահության ծախսեր	Առողջապահության տարեկան ծախսերի ակնկալվող աճը, ՀՆԱ-ի տոկոս (2020-2050 թթ.)	3.7	ՈՏ
1/ Սահմանումները, հաշվարկման մեթոդները և աղբյուրները ներկայացված են Հավելված III-ում:			

### 3.1.3. Հանրային ֆինանսների երկարաժամկետ կայունությունը (բազային)

#### 79. Կառավարությունը հրապարակում է հաջորդ 20 տարիների պարտքի կանխատեսումները և հաջորդ 10 տարիների մակրոֆիսկալ կանխատեսումները:

Պարտքի կայունության հաշվետվությունը, որը վերջին անգամ հրապարակվել է 2012 և 2017 թվականներին, արտաքին և հանրային պարտքի կանխատեսումներ է պարունակում 2017-37 թվականների համար, ինչպես նաև՝ պարտքային ճգնաժամի ռիսկի գնահատումը նույն ժամանակահատվածի համար: Հայաստանի զարգացման 2014-25 ռազմավարությունը (ՀԶՆ) պարունակում է 10 տարիների մակրոֆիսկալ կանխատեսումներ:


#### 80. Ակնկալվում է, որ առողջապահության և կենսաթոշակային ծախսերը զգալիորեն կանեն հաջորդ տասնամյակում, սակայն դա հաշվետվություններում արտացոլված չէ:

Հիմնվելով կանխատեսվող ժողովրդագրական միտումների վրա՝ առողջապահության ընդհանուր ծախսը ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կարող է 2015-ից 2050 թվականներին աճել 65 տոկոսով և հասնել համեմատելի պետություններից զգալիորեն ավելի բարձր ցուցանիշի (Գծապատկեր 3.4): Գծապատկեր 3.5-ում ներկայացված է կենսաթոշակային ընդհանուր (հանրային և մասնավոր) ծախսերի նմանաբնույթ, սակայն՝ պակաս ծանրակշիռ զարգացման սցենար, թեպետ ֆիսկալ ռիսկն հավանաբար փոքր կլինի՝ Հայաստանի կենսաթոշակային համակարգի վերջին բարեփոխումներից հետո: Այսպիսի

վերլուծությունները, որոնք կառավարությունը մտադիր է ներառել հաջորդ ՀԶՌ-ում, կարող են օգնել ուսուցիչների հաղթահարման և մեղմման ռազմավարությունների մշակմանը:


**Գծապատկեր 3.4. Առողջապահության կանխատեսվող**

**ծախսերը ընտրված երկրներում**  
(ՀՆԱ-ի տոկոս)



**Գծապատկեր 3.5. Կենսաբուժական կանխատեսվող**

**ծախսերը ընտրված երկրներում**  
(ՀՆԱ-ի տոկոս)



Աղբյուրը՝ ԱՄՆ-ի անձնակազմի հաշվարկներ, հիմնվելով ՄԱԿ-ի ժողովրդագրական կանխատեսումների վրա: 2015 թվականի տվյալներն Համաշխարհային բանկին են:

## 3.2. Ֆիսկալ ուսուցիչների կառավարումը

### 3.2.1. Բյուջեով չնախատեսված ծախսերը (բազային)


**81. Օրենքով պահանջվում է բյուջետային պահուստ, ինչպես նաև՝ դրա օգտագործման վերաբերյալ հաշվետվության ներկայացում, սակայն սահմանված չեն դրանից օգտվելու չափորոշիչները:** ԲՀՕ-ի 19-րդ հոդվածով պահանջվում է, որպեսզի բյուջեի մասին ամենամյա օրենքով նախատեսվի պահուստային ֆոնդի առանձին ծախսային տող, որը չպետք է գերազանցի բյուջեով նախատեսված բյուջեով նախատեսված ընդհանուր ծախսերի 5 տոկոսը:

Սահմանվում է նաև, որ պահուստից օգտվելու համար անհրաժեշտ է կառավարության որոշում (հոդված 19), և որ այդ ծախսերի հիմնավորումը պետք է ներկայացնել տարվա վերջին (հոդված 25): Այնուամենայնիվ, սահմանված չէ, թե ինչ նպատակների համար այն կարող է օգտագործվել:


**82. Գործնականում առանձնացված է պատճան մեծության պահուստ, սակայն այն ոչ միշտ է օգտագործվում իրապես չնախատեսված ծախսեր ֆինանսավորելու համար:** Պահուստային ֆոնդի մեծությունը վերջին տարիներին կազմել է ընդհանուր բյուջեի միջինը 2.5 տոկոսը: Դրա օգտագործման դեպքերը, որոնք սահմանվում են

կառավարության որոշումը, համաչափ բաշխված են տարվա կտրվածքով (Գծապատկեր 3.6) և արտացոլվում են հաշվետվություններում, սակայն չեն հիմնավորվում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ: Ավելի քան 90 տոկոսը եղել են 500 միլիոն դրամը չգերազանցող ծախսեր, որոնք ընդհանուր բյուջեի մեջ կազմել են մոտ 0.03 տոկոսը (Գծապատկեր 3.7), սրբ կարող է կլանվող չափ համարվել բյուջետային առկա հատկացումների պարագայում: Վերջին տարիներին եղել են մի քանի ակնհայտ դեպքեր, որոնք կարող էին կանխատեսվել կամ հետաձգվել: Դրանցից են շինությունների վերանորոգումը, համակարգչային արտոնագրերի գնումը և ենթակառուցվածքային ընթացիկ ծրագրերի վրա կատարվող ծախսերը: Նման գործելակերպը կարող է վտանգել իրապես չնախատեսված իրավիճակներին արձագանքելու՝ կառավարության կարողությունը: Տեխտային ներդիր 3.1-ում ներկայացված են չնախատեսված դեպքերի պահուստների օգտագործման հաջողված փորձի օրինակներ:

**Գծապատկեր 3.6. Պահուստային ֆոնդի հանրագումարային օգտագործումը**



**Գծապատկեր 3.7. Պաշարներ. խոշոր և մանր ծախսային հոդվածները**



Աղբյուրները՝ բյուջեի կատարման հաշվետվություններ:

**Տեխտային ներդիր 3.1. Բյուջետային պահուստների պատճառ համակարգի սահմանումը**

Տարվա ընթացքում բնական է տնտեսական, սոցիալական, բնապահպանական և անվտանգության հոր մարտահրավերների առաջացումը: Բյուջետային պահուստն ապահովում է բյուջեի կատարման անհրաժեշտ նկունությունն անորոշության պարագայում: Հախան են պահուստի մեծությունը և օգտագործման պայմանները: Երբ պահուստները չափազանց վաճր են, դրանք կարող են անբավարար լինել լուրջ իրադարձություններին արձագանքելու համար: Իսկ երբ պահուստները չափազանց շատ են, դրանք կարող են ստեղծել ակնկալիք, թե տարվա ընթացքում կատարվի ֆինանսավորում՝ այդպիսի խթանող ծախսերի առաջնահերթությունների որոշման գործընթացը բյուջեի կազմելու փուլում: Երբ պահուստի օգտագործումը սահմանափակումների ենթակա չէ, առկա է դրանք ոչ իրական չնախատեսված դեպքերի համար օգտագործելու ռիսկ, հատկապես եթե հանրային ֆինանսների կառավարման կառույցները թույլ են:

Մի քանի պետություններն զգուշորեն սահմանափակել են չնախատեսված դեպքերի պահուստի օգտագործման հնարավորությունը:

Ավստրալիան խստորեն կանոնակարգել է իր պահուստը, որը կարող է օգտագործվել միայն կանխատեսման պարամետրերի մեջ չակնկալված

տատանումների դեպքում, բայց ոչ՝ նոր ֆազակառուցություններ ֆինանսավորելու համար: Միացյալ Թագավորությունը և Հարավային Աֆրիկան մեակել են այլի դիմումներում, որով պահանջվում է պահուստն օգտագործել երեք պայմաններ բավարարող (անկանխատեսելի, անխուսափելի և անկլանելի) իրադարձությունների համար: Երբ դրանք կարող են կանխատեսվել, դրանց համար պետք է նախատեսել գումարներ բյուջեում: Երբ դրանցից կարելի է խուսափել, դրանց ֆինանսավորումը պետք է հետաձգել այլ տարիներ: Երբ դրանց ֆինանսական ծախսերը բավականաչափ փոքր են, դրանք պետք է կլանվեն առկա բյուջեային հատկացումների շրջանակում:

Թվարկված երեք պայմանները բավարարող իրադարձություններից են ենթակառուցվածքային աղետների պատճառած վնասի վերացումը, ազգային արժույթի արժեզրկման հետևանքների վերացումը և ներպետական արտակարգ միջամտությունների արձագանքելը: Դրանց շարքը չեն դասվում ենթակառուցվածքի ծրագրի ծախսերը գերազանցելու դեպքերը՝ պայմանավորված ծրագրի համար ոչ բավարար բյուջեի նախատեսմամբ, աշխատավարձի բարձրացումները կամ պետական գույքի պահպանության ոչ հրատապ դեպքերը:

Ֆինլանդիան ստեղծել է երկու տեսակի պահուստներ. առաջինը՝ չակկլաված ծախսերի համար (իրական չնախատեսված ծախսեր), իսկ երկրորդը՝ շարունակվող երկարաժամկետ ծրագրերի ծախսերի համար, որոնք հնարավոր չէ կանխատեսել բյուջեի պարաստելիս:

**3.2.2. Ակտիվների և պարտավորությունների կառավարումը (բազային)**

**83. Ցանկացած փոխառություն թույլատրվում է օրենքով, և պետական պարտքի կառավարումը մանրամասնորեն**

**նկարագրված և վերլուծված է տարբեր հրապարակումներում:** Փոխառությունները կարգավորվում են Պետական պարտքի մասին 2008 թվականի օրենքով, և փոխառության տարեկան սահմանաչափերն ամրագրված են բյուջեի մասին ամենամյա օրենքով: ՖՆ-ն հրապարակում է պարտքի կառավարման եռամյա ռազմավարություններ, որոնք թարմացվում են ամեն տարի, ինչպես նաև՝ պարտքի ամսական տեղեկագրեր և պարտքի կառավարման տարեկան զեկույցներ, ինչպես նաև պարտքի կայունության պարբերական վերլուծություններ, վերջին անգամ՝ 2017 թվականին:


Հրապարակումները մանրակրկիտ տեղեկություններ են պարունակում կառավարության պարտքի պարտքի մասին, ինչպես նաև՝ ռիսկերի խորհային վերլուծություններ:

**84. Հայաստանի պետական պարտքը ենթակա է փոխարժեքի, վերաֆինանսավորման և սոկոսադրույքի ռիսկերի, որոնցից կարևորագույնը փոխարժեքի ռիսկն է:**

Պարտքի կառավարման 2018-20թթ. ռազմավարության համաձայն, պարտքի 80.7 տոկոսն արտարժույթով է (ՀՆԱ-ի 40.5 տոկոսը), որը վկայում է պարտքի բազմակողմ և երկկողմ վարկերի գերակշռության մասին (Գծապատկեր 3.8): Վերաֆինանսավորման ռիսկը չավիվոր է. պարտքի ընդամենը 6.2 տոկոսի ժամկետն է լրանում մեկ տարվա ընթացքում, իսկ մինչև մարտին մնացած միջին ժամկետը 9.3 տարի է: Այնուհանդերձ, եվրոպարտատոմների երկու խոշոր մարումները 2020 և 2025 թվականներին կավելացնեն վերաֆինանսավորման ռիսկերը մոտակա տարիներին: Տոկոսադրույքի ռիսկը նույնպես սահմանավակ է, քանի որ պարտքի 87.5 տոկոսը ֆիքսված տոկոսադրույքով է: Փոխարժեքային ռիսկը փոքր-ինչ բարձր է փոխարժեքային տատանողականությամբ բնութագրվող համադրելի երկրների միջինից:

**Գծապատկեր 3.8. Փոխարժեքի տատանողականությունը և արտարժույթով պարտքը ընտրված երկրներում**

(2016թ.)



Աղբյուրը՝ ԱՄՆ-ի հաշվարկներ  
 Նշում՝ փոխարժեքի տատանողականությունը ստանդարտ շեղումն է՝ հարաբերած 2000-2015թթ. միջին փոխարժեքին:  
 Եվրոգոտին ներկայացված է կապույտ գույնով:

**85. Հիմնական ֆինանսական ակտիվներն հրապարակվում են տարբեր փաստաթղթերում, սակայն այդ ակտիվների վերաբերյալ հրապարակված չկա ռիսկերի վերլուծություն, և չկա ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համընդգրկուն փաստաթուղթ:** Ֆինանսական ակտիվները ներառում են արտաքին վարկերի և դրամաճնոքների ենթավարկավորումը, բյուջետային վարկավորումը, միջպետական վարկերը (Լեոնային Ղարաբաղին), ԳՄՆ-ում կառավարության կանխիկի մնացորդը, կառավարության բաժնետոմսերը բաժնետիրական ընկերություններում և այլ պետական ընկերություններում, ինչպես նաև նրա մասնակցությունը ՀՀ ԿԲ-ի կապիտալում: Պարտքի ամենամայա տեղեկագիրն ամփոփ տվյալներ է պարունակում ենթավարկավորման, միջպետական վարկերի և բյուջետային վարկերի մնացորդների մասին: Ենթավարկավորման և բյուջետային վարկավորման առանձին գործառնություններին առնչվող ստացումներն հրապարակվում են տարեկան բյուջեներում և առանձին որոշումներում, սակայն չկա այդ գործառնությունների համախմբված հաշվետվություն: ՀՀ ԿԲ-ի կապիտալը և ԳՄՆ-ի մնացորդն հրապարակվում են ՀՀ ԿԲ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունում: Բաժնետիրական ընկերություններում ունեցած բաժնետոմսերն հրապարակվում են ՊԳԿՎ-ի մոնիթորինգի ամենամայա հաշվետվությունում:

**86. Կառավարության ֆինանսական ակտիվների համար առկա են լուրջ ռիսկեր, մասնավորապես՝ գնահատման ռիսկեր:** Ենթավարկավորումը, միջպետական վարկերը և բյուջետային վարկերը, ինչպես նաև պետական ընկերություններում բաժնետոմսերն արտացոլված են անվանական արժեքով: Կախված վարկառուի մարելու կարողությունից՝ այս ակտիվների փաստացի արժեքը կարող է զգալիորեն պակաս լինել. հնարավոր է, որ դրանցից մի քանիսն ունենան գրոյական արժեք: Այդ ռիսկերի փաստացի արժեքներն անկախ մեծություններ չեն. բաժնետոմսերի անորոշ արժեքից գատ, պետական ընկերությունները նաև կառավարության ենթավարկավորման և բյուջետային վարկերի հիմնական ստացողների թվում են: ՀՀ ԿԲ-ի հաշվեկռումն ներառված է 95 միլիարդ դրամի կուտակված



պակասուրյը, որը մեծ մասամբ կապված է արժույթային գործառնությունների հետ: ՀՀ ԿԲ-ի մասին օրենքի 11-րդ հոդվածի համաձայն, կառավարությունը թողարկել է 73 միլիարդ դրամ ընդհանուր գումարի մուրհակներ՝ հատուցելու համար այդ կորուստները և ապահովելու համար ՀՀ ԿԲ-ի կապիտալի դրական մեծությունը:<sup>19</sup>

**87. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մասին համախմբված հաշվետվության բացակայության հետևանքով ավելի է դժվարանում կառավարության ընդհանուր ֆինանսական դիրքն հասկանալը և վերլուծելը:**

Տարբեր փաստաթղթերում հրապարակվող ֆինանսական ակտիվները գգալի են՝ պարտքի պաշարային մեծության համեմատությամբ, և կարող են լինել լրացուցիչ ակտիվներ, որոնք չեն հրապարակվում: Կառավարության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախմբված հաշվետվությունը (հաշվեկիտը) կարևոր էլակետ կլիներ հետագա գնահատման և վերլուծության համար, թեպետ լիարժեք պատկերացում չէր տա կառավարության ֆինանսական դիրքի մասին: Այդ հաշվետվությունը կօգներ նաև ֆինանսական հոսքերի և պաշարների համադրմանը, ինչպես նաև կառավարության հաշվետվությունների արժանահավատության բարելավմանը: Աղյուսակ 3.3-ում ներկայացված է ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների մասին առկա տեղեկատվությունը հաշվապահական հաշվեկշռում լրացնելու օրինակ:<sup>20</sup>

**Աղյուսակ 3.3. Հայաստան. կենտրոնական կառավարության ֆինանսական ակտիվները և պարտավորությունները (տոկոսը ՀՆԱ-ում)**

Ակտիվներ		Պարտավորություններ	
ԳՄՀ մնացորդ	3.6	Ներքին պարտք	10.8
Արտաֆին միջոցների ենթավարկավորում	9.4	Արտաֆին պարտք	45.8
Բյուջետային վարկեր	0.2	Այլ պարտավորություններ	-
Միջուկային վարկեր	9.3		
Բաժնետոմսեր ԲԸ-ներում	4.4		
ՀՀ ԿԲ-ի կապիտալ	0.1		
Այլ ակտիվներ	-		
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	27.1	Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	56.7
		Ֆինանսական գուտ ակտիվներ	-29.6

<sup>19</sup> Պարտամուրհակը ՀՀ ԿԲ-ի կապիտալի հաշվարկում ներառվում է որպես ակտիվ, սակայն կառավարության հաշիվներում դրան համապատասխանող պարտավորություն չկա: Պարտամուրհակն ավելի նման է երաշխիքի, քան՝ կապիտալի մեջ ներարկման: ՀՀ ԿԲ-ի կապիտալի իրական արժեքը, հետևաբար, անորոշ է: Պարտամուրհակը կա՛մ որպես կառավարության պարտավորություն ճանաչելու, կա՛մ ՀՀ ԿԲ-ի կապիտալից նվազեցնելու դեպքում ֆինանսական գուտ ակտիվները կնվազեն 85 միլիարդ դրամով:

<sup>20</sup> Այս աղյուսակում տվյալները վերցված են կառավարության տարբեր հաշվետվություններից, և գուտ ֆինանսական ակտիվների մեծությունը մնացորդային է: Այս թվային տվյալը տարբերվում է աղյուսակ 0.2-ում գուտ ֆինանսական ակտիվների մեծությունից, որը հաշվարկվել է առաքելության կողմից: Հարկ է նշել, որ աղյուսակ 0.2-ը նաև պարունակում է առաքելության հաշվարկները և ճշգրտումները:

Աղբյուրները՝ ՖՆ-ի պարտի ամսական տեղեկագիր 2016 թ., ՀՀ ԿԲ-ի ֆինանսական հաշվետվություն 2016 թ., ՊԳԿՎ-ի մոնիթորինգի հաշվետվություն 2016թ.:


### 3.2.3. Երաժիշիֆներ (լավ)

**88. Երաժիշիֆների պաշարը փոքր է՝ ՀՆԱ-ի 1.4 տոկոս, և հրապարակվում է պարտի ամսական և տարեկան հաշվետվություններում:** Գործող առանձին երաժիշիֆների և շահառուների մասին համախմբված տեղեկանքը ներկայացվում է պարտի տարեկան հաշվետվության հավելվածի տեւոքով: Երաժիշիֆների մեծ մասը թողարկվում են այն վարկերի համար, որոնք գարգացմանն օժանդակող գործընկեր կառույցները տրամադրել են ՀՀ ԿԲ-ին՝ վերջինիս կողմից գարգացման վարկային ծրագրերն ուղղակիորեն կամ ֆինանսական միջնորդների միջոցով ֆինանսավորելու նպատակով: 2016-ի տարեվերջին դրանք կազմել են ՀՆԱ-ի 1.35 տոկոսը: 2016-ի տարեվերջին ներպետական միակ վարկային երաժիշիֆը եղել է տեղական բանկի կողմից Ագարակի պղնձամուլիբդենային գործարանին տրամադրված վարկի գծով և կազմել է ՀՆԱ-ի 0.05 տոկոսը:

**89. Երաժիշիֆները սահմանափակված են օրենքով և ցածր են բազմաթիվ այլ պետությունների համեմատությամբ, սակայն չի իրականացվում երաժիշիֆների ներքո վնարման պահանջներ ներկայացնելու ռիսկերի գնահատում:** Կոնկրետ բյուջետային տարվա ընթացքում երաժիշիֆներում պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված երաժիշիֆների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը: Երաժիշիֆների այդ սահմանաչափը նախատեսված է ԲՀՕ-ի 11-րդ հոդվածով: Տրամադրված և դեռևս չվնարված պետական երաժիշիֆների ընդհանուր գումարը որոշակի պահին չպետք է գերազանցի նախորդ տարվա ՀՆԱ-ի 20 տոկոսը: Ավելին, Պետական պարտի մասին օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված է, որ ցանկացած պետական երաժիշիֆի գումար չի գերազանցելու երաժիշիֆ ստացողի ակտիվների 20 տոկոսը: Կառավարության 1998 թվականի հունիսի թիվ 380 որոշումը սահմանվում են երաժիշիֆների դիմելու, գնահատվելու և հաստատվելու ընթացակարգերը, և յուրաքանչյուր երաժիշիֆ տրամադրվում է կառավարության որոշումով:

### Գծապատկեր 3.9. Կառավարության երաժիշիֆները որոշ պետություններում (2014 թ.)

(ՀՆԱ-ի տոկոս)




Աղբյուրը՝ Եվրոտատ, անճնակազմի հասվարիներ:

### 3.2.4. Պետական-մասնավոր գործընկերությունները (բազային)

**90. Ռիսկերին վերաբերող զգալի ծավալի տեղեկություններ են հրապարակվում խոստացույց երեք ՊՄԳ-ներից երկուսի վերաբերյալ, սակայն ՊՄԳ պայմանագրերով նախատեսված պարտավորություններն համակարգված կերպով չեն հրապարակվում:** Երկու ՊՄԳ-ների դեպքում (Veolia՝ ջրմուղը և Հայկական երկաթուղու կոնցեսիան) 2018-ի տարեկան բյուջեի փաստաթղթերում ՖՌՏ-ում գնահատված են կոնցեսիոն ընկերությունների վերջին շրջանի ֆինանսական ցուցանիշները, ֆինանսական հզնաժամի հավանականությունը և կառավարությանը վճարվող կոնցեսիոն վճարների թերացման ռիսկերը, և եզրակացություն է հանգում կառավարության կողմից այդ ընկերություններին վերկելու հավանականության և ֆիսկալ ռիսկերի իրականացումը հավանականության մասին: Այնուհանդերձ, այդ հրապարակումը չի ներառել ՊՄԳ պայմանագրերով նախատեսված ընդհանուր իրավունքները, պարտավորությունները և ռիսկերը, կամ՝ տեղեկություններ երկու օդանավակայանների կոնցեսիաների մասին: Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (ՏԶՆՆ) հրապարակում է ՊՄԳ-ների համար սրամադրված ներդրումային հանձնառությունների մեծությունը:

**91. ՊՄԳ հանձնառությունները զգալի մասնաբաժին են կազմում ՀՆԱ-ի մեջ:** Ներկայումս չորս պետական-մասնավոր գործընկերություններ (ՊՄԳ-ներ) են գործում Հայաստանում (Աղյուսակ 3.4), որոնց նկատմամբ ներդրումային հանձնառությունները կազմում են ՀՆԱ-ի 10.2 տոկոսը (Գծապատկեր 3.10):

**Գծապատկեր 3.10. ՊՄԳ կապիտալի պաշարը տարբեր երկրներում (2014 թ.)**



Աղբյուրը՝ ԱՄՆ-ի պետական ներդրումների տվյալների շտեմարան, առափելուրջյան հաշվարկներ, Հայաստանի վերաբերյալ 2016 թ. տվյալներ:

**Աղյուսակ 3.4. Հայաստան. ՊՄԳ գործող պայմանագրերը**

Մրագիր	ՊՄԳ-ի տեսակ	Ընդհանուր ներդրումներ			Պայմանագրի ժամկետը (տարի)	Եկամտի հիմնական աղբյուրը	Կառավ. ուղղ. օժանդ. տեսակները
		Մասնավորի սովոր	(միլիոն դոլար)	Ֆինանսական գործարքի տարին			
Հայկական երկաթուղի	Կառուցել, վերականգնել, բարելավել և փոխանցել	100	575	2008	30	Օգտագործողի վճարներ	Եկամտ. Դատարան: 30% սպեց. ծառայ. կորուստ:
					(հնար.)	30 +	
Երևանի Զվարթնոց օդանավակ.	Կառուցել, վերականգնել, բարելավել և փոխանցել	100	294	2001	հարաբերակցում է 20%-ի համար	Օգտագործողի վճարներ	Զկա
					հարաբերակցում է 20%-ի համար		
Veolia ջուր/ջրմուղ	Կառավարել և վարձակալել	100	200	2016	15	Օգտագործողի վճարներ	Զկա
Շիրակ օդանավակ.	Վերականգնել, բարելավել և փոխանցել	100	10	2007	15	Օգտագործողի վճարներ	Զկա

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, ՆՆ՝ ներքին եկամտաբերություն:

- Հայկական երկաթուղու կոնցեսիան** (կամ Հարավկովկասյան երկաթուղի) ֆինանսական գործարքի հասավ 2008 թվականին, ընդ որում՝ ընդհանուր ներդրումները կազմում են 575 միլիոն ԱՄՆ դոլար: Դա կառուցելու, վերականգնելու, բարելավելու և փոխանցելու ծրագիր է՝ ոչ չ Հայաստանն ընդգրկող 805 կիլոմետր երկաթուղու համար, 30 տարի տևողությամբ, 10 տարով երկարացնելու հնարավորությամբ: Կառավարությունը տալիս է

էկամուտների երաշխիք, որը հավասար է որոշակիորեն սահմանված ծառայություններին առնչվող կորուստների 30 տոկոսին, սակայն նաև ստանում է կոնցեսիան վճար ծրագրից, որը կազմում է ընդհանուր հասույթի 2 տոկոսը: 2016 թվականին կառավարության օժանդակությունը կազմել է 350 միլիոն դրամ, իսկ կոնցեսիան վճարը՝ 377 միլիոն դրամ:

- 2001 թվականին կառավարությունը **Երևանի միջազգային օդանավակայանի համար 30** տարվա կոնցեսիան պայմանագիր բանակցեց Արգենտինայի **Corporacion America** ընկերության հետ՝ պայմանագրով նախատեսելով երկարաժամանակ հնարավորություն այնպես, որպեսզի ապահովվի ծրագրի 20 տոկոսի ներքին էկամտաբերությունը: **Corporacion America** ընկերությունը կոնցեսիան իրավունքները վախճանեց իր դուստր ընկերությանը՝ **AIA**-ին, որն հատուկ նպատակով ստեղծված հայաստանյան ընկերություն է: Այս կոնցեսիայի շրջանակում ընդհանուր ներդրումները կազմում են 294 միլիոն ԱՄՆ դոլար, և մասամբ ֆինանսավորվել են ԱԶԲ-ի վարկերով (40 միլիոն ԱՄՆ դոլար), ՎԶԵԲ-ի վարկերով (60 միլիոն ԱՄՆ դոլար) և **Deutsche Investitions-und Entwicklungsgesellschaft** կազմակերպության (DEG) վարկերով (10 միլիոն ԱՄՆ դոլար):
- 2016 թվականին Հայաստանի կառավարությունը 15-ամյա պայմանագիր կնքեց **Veolia ընկերության հետ ջրի և ջրմուղի համակարգի վարձակալության** վերաբերյալ՝ մարզային մի քանի ջրմուղի ընկերությունների մասով: Զբաղառատակարարման և ջրահեռացման սակագները կարգավորվելու և հաստատվելու են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից, իսկ **Veolia**-ն վճարելու է կիսամյակային վճարներ, որոնց ընդհանուր գումարը պայմանագրի ժամկետի ընթացքում ակնկալվում է 89.7 միլիարդ դրամ: Ակնկալվում է, որ ծրագիրը կներգրավի 200 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ՝ ՎԶԵԲ-ի, ԵՆԲ-ի և **KfW**-ի կողմից սրամադրվող վարկերով: Պայմանագիրը կնքվել է չորս մասնակիցների մրցութային հայտերի գնահատման արդյունքում:
- **Շիրակ օդանավակայանի կոնցեսիան** բանակցվել է 2007 թվականին: Կոնցեսիաները նույնն է, ինչ Զվարթնոց օդանավակայանում, և այս պայմանագիրը նույնպես հիմնված է եղել առանց մրցութային հրավեր ուղարկելու ստացված առաջարկի վրա: 15-ամյա պայմանագրով նախատեսվում է տարածաշրջանային օդանավակայանի վերականգնում, շահագործում և վախճանում, և ակնկալվում են 10 միլիոն ԱՄՆ դոլարի հասնող ներդրումներ:

**92. Ջանքեր են գործադրվում ՊՄԳ իրավական շրջանակը կատարելագործելու ուղղությամբ՝ ներառյալ ՊՄԳ-ների մասին նոր օրենքի մշակումը, որը կնպաստի նոր ՊՄԳ-ների կնքումը կուռ հիմքերով:** Դա հատկապես կարևոր է, քանի որ հյուսիսային նախարարություններն արդեն իսկ առանձնացրել են ՊՄԳ հնարավոր նոր ծրագրեր՝ հիմնականում առողջապահության և հանապարհային ուղորտում, կախված նոր կառավարության հաստատումից: ՊՄԳ-ների

անրապնդված համակարգում թափանցիկության հետ կապված հիմնական հարցերը ներառում են հետևյալը՝ ՊՄԳ-ների հստակ և համապարփակ սահմանում, ՊՄԳ-ների մասին տեղեկատվական բազայի ստեղծում, ՊՄԳ պայմանագրերի ներքո ընդհանուր իրավունքների և պարտավորությունների, ինչպես նաև այլ ուսկային գործոնների, պայմանագրերի հիման վրա սպասվող տարեկան մուտքերի և վճարումների մասին տեղեկատվության հրապարակում տարեկան կտրվածքով, և Հայաստանի ֆիսկալ կանոնին համապատասխան ՊՄԳ-ների կուտակված պարտավորությունների նկատմամբ օրենսդրորեն սահմանաչափի սահմանում:

### **3.2.5. Ֆինանսական հատված (լավ)**

**93. ՀՀ ԿԲ-ն կազմում է ֆինանսական կայունության կիսամյակային հաշվետվություն՝ ֆինանսական հատվածի ուսկերի խորը գնահատմամբ:** Ֆինանսական հատվածում գերակշիռ դերը կատարում են բանկերը: 17 առևտրային բանկեր վերահսկում են ֆինանսական շուկայի ակտիվների մոտ 90 տոկոսը: Բանկային ոլորտում չկա կառավարական սեփականություն: Կար 100 տոկոսով ՀՀ ԿԲ-ին պատկանող զարգացման բանկ, որը վերջերս վերափոխվել է ներդրումային հիմնադրամի:

**94. Բանկային համակարգի ֆինանսական ցուցանիշները վերջին տարիներին բարելավվել են:** Ֆինանսական հատվածը համեմատաբար փոքր է (2017թ. ՀՆԱ-ի 91 տոկոսը) և այլ երկրների համեմատ այն լավ կապիտալացված է (աղյուսակ 3.5): ՀՀ ԿԲ-ի գնահատմամբ, ուսկերը մնում են կառավարելի և չեն առաջացնում ֆինանսական կայունության էական խնդիրներ:<sup>21</sup> Գծապատկեր 3.12-ում ներկայացված է բանկային համակարգի կայունության բարտեզը: Երևում է, որ 2016-ի տարեվերջին ամենակարևորը եղել են կապիտալի համարժեքության և ակտիվների որակի ուսկերը: Գծապատկեր 3.13-ում ներկայացված է ակտիվների որակի խնդիրը: Նկարագրված է չափստող վարկերի մասնաբաժինը շուկայի տարբեր հատվածներում և դրանց մասնաբաժնի չափստող վարկերի ընդհանուր ծավալի մեջ: Երևում է, որ շուկայական որոշ հատվածներում չափստող վարկերի մեծությունը դեռևս զգալի է, թեպետ 2015 թվականից 2016 թվականը դրանք աստիճանաբար նվազեցվել են:


### **Աղյուսակ 3.5. Հայաստան. Ֆինանսական հատվածի ֆինանսական ցուցանիշները**

<sup>21</sup> ՀՀ ԿԲ-ի ֆինանսական կայունության հաշվետվություն, 2017-1:

	Capital		Loan Quality	Liquidity		Profitability
	Tier 1 Capital to Assets	Capital to Assets	NPL	Deposits to Loans	Liquid Assets	Return on Assets
<b>Armenia</b>	<b>20,0</b>	<b>16,2</b>	<b>6,7</b>	<b>115,0</b>	<b>32,5</b>	<b>1,1</b>
Austria	13,2	7,4	3,4	85,3	24,8	0,5
Georgia	11,7	3,6	8,1	96,3	24,9	3,1
Germany	15,7	5,9	n.a	85,0	42,8	0,4
Kazakhstan	13,1	10,5	8,0	100,5	21,2	1,6
Lithuania	24,3	13,0	5,8	110,9	n.a	1,2
Netherlands	16,2	5,6	2,7	n.a	22,8	0,6
Russia	8,5	8,9	8,3	76,2	26,5	0,2
Slovakia	16,5	11,1	4,9	111,0	34,2	1,3

Աղբյուրը՝ ԱՄՀ-ի ֆինանսական հուսալիության ցուցանիշներ (2016թ.)



**Գծապատկեր 3.11. Երկրների համեմատություն. ընտրված երկրների ֆինանսական հատվածի ոչ բաժնեմասային պարտավորությունները (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ Եվրոստատ, ֆինանսական հատվածի պարտավորությունների, ՀՀ ԿԲ:

**Գծապատկեր 3.12. Բանկային կայունության բարտեզ**

**Գծապատկեր 3.13. Զախտառոգ վարկերը բուկայի հատվածներում**



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ-ի ֆինանսական կայունության հաշվետվություն, 2017-1

**95. Ներկայումս կառավարության կողմից ֆինանսական հատվածին ցուցաբերվող օժանդակությունը**

**սահմանափակված է զարգացման վարկերի համար տրվող երաշխիքներով և հրապարակվում է պարտքի մասին**

**հաշվետվություններում:** Կառավարության կողմից ուղղակիորեն ֆինանսական հատվածին կատարվող վճարումներ

ներկայումս չկան, և նման վճարումների պատմություն ևս գոյություն չունի: Ոլորտին ցուցաբերվող կառավարական

միակ օժանդակությունն արտոնյալ վարկերի համար տրվող կառավարական երաշխիքներն են, որոնցով

ֆինանսավարվում են ՀՀ ԿԲ-ի կամ ֆինանսական միջնորդների կողմից որոշակի վարկառուների տրամադրվող

զարգացման վարկերը: 2009 թվականի բանկային հզգաժամի ընթացքում այդ երաշխիքներն ակտիվորեն կիրառվեցին

առևտրային բանկերի համարժեք իրացվելությունն ապահովելու համար: Բացի այդ, 2009թ. ՀՀ ԿԲ-ն տրամադրել է

երկու երկարաժամկետ վարկ՝ այս գործարքները սերտորեն համաձայնեցնելով կառավարության հետ.

- Հինգ տարվա մարման ժամկետով ստորադաս վարկեր են տրամադրվել այն բանկերին, որոնք համալրել են իրենց կապիտալը համապատասխան գումարով: 30.3 մլրդ դրամ ընդհանուր գումարի ստորադաս վարկեր են ստացել տաս բանկ:
- Երեք տարվա մարման ժամկետով 7.3 մլրդ դրամի վարկ է տրամադրվել այն բանկերին, որոնք ձեռք են բերել ֆինանսական ծանր վիճակում հայտնված մեկ բանկ:

**96. Բանկային ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը տրամադրում է երաժիքներ, որոնց ծավալը**

**2016-ի տարեվերջին կազմել է 522 միլիարդ դրամ, և այդ երաշխիքը երաշխավորողը կառավարությունն է:**

Հայաստանի ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը ստեղծվել է ՀՀ ԿԲ-ի կողմից 2005 թվականին՝



որպես շահույթի նպատակ չհետապնդվող իրավաբանական անձ: Նրա գործունեությունը կարգավորվում է օրենքով:<sup>22</sup> ԲՀՕ-ի 11.1 հոդվածի համաձայն, կառավարությունը կարող է երաշխիք տրամադրել Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ցանկացած պակաս հատուցելու համար, և այդ երաշխիքը չի կաշկանդվում նախորդ տարվա եկամուտների 10 տոկոսին համարժեք սահմանաչափով: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին օժանդակելու՝ կառավարության պատասխանատվությունը ֆորմալացված է նաև Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի, ՀՀ ԿԲ-ի և կառավարության միջև կնքված փոխըմբռնման հուշագրում:

**97. Որևէ պաշտոնական փաստաթղթում չկա ֆինանսական հատվածից բխող ֆիսկալ ռիսկերի անմիջական վերլուծություն, և կարծես հիմնում ընկած ենթադրությունն այն է, որ այդ ռիսկերն անհեռան են:** Անկախ ֆինանսական հատվածի ֆիսկալ ռիսկերի ընկալյալ մեծությունից, կարևոր է հստակորեն ներկայացնել այդ ռիսկերի գնահատումը և հիմնում ընկած վերլուծությունը: Միջազգային փորձը հստակորեն վկայում է այն մասին, որ ֆինանսական անկայունությունը կարող է լուրջ ֆիսկալ հետևանքներ ունենալ, և Հայաստանում այդ ռիսկերի ուժգնությունը հստակեցնելու միջոցով կարելի է բարելավել ֆիսկալ ֆազաֆականությունների արժանահավատությունը և ՀՀ ԿԲ-ի ֆինանսական կայունության ֆազաֆականությունների արժանահավատությունը: Այդ գնահատումը պետք է ներառել թե՛ ՀՀ ԿԲ-ի ֆինանսական կայունության հաշվետվությունում, թե՛ բյուջեի փաստաթղթերի մեջ մտնող ֆիսկալ ռիսկերի տեղեկանքներում:

### **3.2.6. Բնական պաշարներ (չի համապատասխանում)**

**98. Ձկան ընդերքի պաշարների կամ ակտիվների արժեքի վերաբերյալ կառավարական համակարգված հաշվետվություններ, թեպետ հանփարդյունաբերության ոլորտը ՀՆԱ-ի և արտահանման մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցողներից է:** 2016 թվականին հանփարդյունաբերության ոլորտին է բաժին ընկել ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 17.9 տոկոսը, իսկ նրա արտահանումը կազմել է 480 մլրդ ԱՄՆ դոլար՝ երկրի ընդհանուր արտահանման արժեքի 25 տոկոսը: Հայաստանի երկրաբանական ֆոնդը տվյալներ է տրամադրու առանձին պաշարների մասին, սակայն չկա պաշարների և արժեքների համախմբված գնահատում:

**99. Հանքային պաշարները 2016 թվականին կազմել են եկամուտների 2.5 տոկոսը՝ բյուջեի համար առաջացնելով համաշխարհային շուկաների գների և արտադրության ծավալների տատանումներով պայմանավորված որոշակի ռիսկեր:** Բյուջետային եկամուտների վրա ուղղակի ազդեցությունից գատ, այդ ռիսկերն ազդում են նաև օտարերկրյա ներդրումների, զբաղվածության և ՀՆԱ-ի աճի վրա: 2009 թվականի տնտեսական հիմնադրամի ընթացքում պղնձի և մոլիբդենի գներն ընկան երկու երրորդով, Հայաստանից արտահանումների արժեքը՝ 47

<sup>22</sup> Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենք:

տողոսով, իսկ օտարերկրյա ուղղակի ներդրումները՝ 250 միլիոն ԱՄՆ դոլարով: Նույնիսկ նորմալ ժամանակներում մետաղների գները ենթակա են լուրջ տատանումների:

### **100. Ակնկալվում է, որ Արդյունահանող նյութերի թափանցիկության նախաձեռնությունը (ԱՃԹՆ, EITI)**

**մասնակցելու վերաբերյալ Հայաստանի վերջերս ստանձնած հանձնառությունը կբարելավի հանֆարդյունաբերական ոլորտի թափանցիկությունը:**<sup>23</sup> ԱՃԹՆ-ի իրագործմամբ կառավարությունը հանձն է առնում թափանցիկ կերպով տեղեկություններ հրատարակել երկրի հանֆարդյունաբերության ոլորտի՝ ներառյալ իրավական դաշտի վերաբերյալ, արտադրության և արտահանման վիճակագրության, արտոնագրերի, ոլորտում պետական մասնակցության, հավաքագրված եկամուտների գումարի, ընկերությունների իրական շահառուների և հավաքագրված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Հրատարակումն օգնում է հասկանալ, թե ինչպես է ոլորտը կառավարվում, ինչպես նաև՝ կրճատել ապակառավարումը, կոռուպցիան և շահերի բախումները:

### **3.2.7. Շրջակա միջավայրի ռիսկեր (չի համապատասխանում)**

### **101. Բյուջետային փաստաթղթերում չկա բնագաղափարական ռիսկերի և դրանց հնարավոր ֆիսկալ հետևանքների վերլուծություն:**

ՄԺԾԾ-ի փաստաթղթերում մակրոտնտեսական ռիսկերի բննարկման մեջ որպես գյուղատնտեսական արտադրանքի նվազման պատճառ են նշվում անբարենպաստ եղանակային պայմանները, սակայն չկա հետևանքների որոշակի վերլուծություն կամ բանական գնահատական: Ձեն բննարկվում բնական այլ վտանգներին, օրինակ՝ երկրաշարժերին առնչվող ռիսկերը կամ տեխնոլոգիական ռիսկերը, օրինակ՝ խորհրդային դարաշրջանի ատոմային էներգակայանի շահագործմանն առնչվող ռիսկերը: Չկա չնախատեսված դեպքերի ֆունդ, որը նախատեսված կլիներ հատկապես բնական աղետների համար, և այս նպատակի համար հատուկ գումարներ չեն առանձնացվում ընդհանուր պահուստային ֆունդում:


**102. Բնական աղետների պատճառած միջին տարեկան կորուստը<sup>24</sup> չափավոր է:** Հաշվարկային տվյալներով՝ այն ՀՆԱ-ի 1.3 տոկոսն է, մինչդեռ խոշոր երկրաշարժից (որը կարող է տեղի ունենալ 50 տարին մեկ անգամ) հնարավոր

<sup>23</sup> EITI-ի խորհրդի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունը որպես EITI-ի րեկոնստրուկցիայի ընդունվել է 2017 թվականի մարտի 9-ին: Հայաստանը պարտավոր է հրատարակել EITI-ի իր առաջին զեկույցը նախքան 2018 թվականի սեպտեմբերի 9-ը: EITI-ի խորհուրդի ակնկալումն է, որ Հայաստանն իրական շահառուների մասին հանապարհային բարեկց կիրառարակի նախքան 2018 թվականի հունվարի 1-ը:

<sup>24</sup> Հայաստանը պատմականորեն խոցելի է եղել երկրաշարժերի նկատմամբ: Վերջին ավերիչ երկրաշարժը 1988 թվականին 25,000 մարդու կյանք խլեց և մարմնական վնասվածքներ պատճառեց 19,000 անձի, ծանր վնաս պատճառեց 517,000 տներին, և մոտ 15-20 միլիարդ ԱՄՆ դոլարի տնտեսական վնաս հասցրեց երկրի էյտախաչային շրջաններում: Երկրում լուրջ վտանգ են առաջացնում նաև հեղեղները: Օրինակ, 2010 թվականի հեղեղի պատճառով մոտ 10 միլիոն ԱՄՆ դոլարի վնաս հասցվեց: Հայաստանում կան նաև բնական այլ աղետներ, օրինակ՝ երաշտի, կարկուտի և սողանքի վտանգներ: Մեծամորի ԱԿԿ-ը, որը մոտ է շահագործման իր ժամկետի ավարտին, անգամ վերանորոգումներից և անվտանգության բարձրացման միջոցառումներից հետո, աշխարհում հանդիսանալով Չեռնոբիլի տիպի միակ ռեակտորը, որը դեռևս գործում է, ընդամենը 36 կիլոմետր է հեռու Երեւանից՝ գտնվելով սեյսմիկ բարձր ակտիվության գոտում, որը Թուրքիայից ձգվում է մինչև Արաբական ծով՝ Հնդկաստանի մոտ . (<https://www.unisdr.org/partners/countries/arm>). Նոր ատոմակայան կառուցելու և հինը շահագործումից հանելու համար կպահանջվի 5 մլրդ ԱՄՆ դոլար (<http://www.world-nuclear.org/information-library/country-profiles/countries-a-f/armenia.aspx>):

առավելագույն կորուստը հաշվարկվել է ՀՆԱ-ի մոտ 2.6 տոկոս (տե՛ս Գծագրեր 3.14): Այս հաշվարկային ցուցանիշներն արտացոլում են բնական մի շարք աղետների (երաժու, երկրաշարժ, ջերմաստիճանի կտրուկ տատանումներ, հեղեղներ և վտրոտիկներ) պատճառած կորուստների պատմական տվյալները: Դրանք չեն ներառում ատոմային էներգակայանին անչվող հնարավոր ծախսերը:

**Գծագրեր 3.14. Բնական աղետների պատճառած միջին տարեկան կորուստը (AAL) և հավանական առավելագույն կորուստը (PML) (ՀՆԱ-ի տոկոս)**



Աղբյուրը՝ UNISDR-ի աղետների տվյալներ և վիճակագրություն:

**103. Համաժառանգային բանկի Բնական աղետների ռիսկերի կառավարման ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի կառավարությանը՝ զարգացնելով աղետներին դիմագրավելու կարողությունը:**<sup>25</sup> Ծրագիրը ներառում է աղետների ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների բարելավումը, աղետների ռիսկերի նվազեցման ծրագրերի բարելավումը, աղետների պատրաստակաճանաչման բարելավումը և աղետների ֆիսկալ ռիսկերի ըմբռնման և ռիսկերի ֆինանսավորման տարբերակների բարելավումը: Վերջին բաղադրիչի նպատակն է բարելավել ֆինանսական կարողությունները և պատրաստակաճանաչումը՝ միաժամանակ պատշաճացնելով ֆիսկալ հաշվեկշիռը, օգնելով նվազեցնել աղետների տնտեսական բեռը կառավարության, տնտեսվարողների և սնային տնտեսությունների համար: Ծրագիրը կօգնի կառավարությանը՝ գնահատման իրականացման օգնելով ավելի լավ հասկանալ աղետների ֆիսկալ հետևանքները և կառավարությանը տրամադրելով աղետների ռիսկերի ֆինանսավորման և ապահովագրության վերլուծություններ և հայեցակարգային տարբերակներ՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա:

<sup>25</sup> <https://www.gfdr.org/sites/default/files/publication/armenia-national-disaster-risk-management-program.pdf>

### 3.3. Ֆիսկալ համակարգումը

#### 3.3.1. ՏԻՄ-եր (առաջադեմ)

**104. Գանձապետարանն հրապարակում է եռամսյակային և տարեկան հաշվետվություններ համայնքների համախմբված բյուջեի կատարման մասին:**<sup>26</sup> Տարեկան պետական բյուջեն ներառում է հավելված՝ համախմբված համայնքային բյուջեների մասին ընդհանրացված տվյալներով: Բացի դրանից, առանձին համայնքներ (2017 թվականի դրությամբ՝ 502-ը) հրապարակում են իրենց տարեկան բյուջեների և եռամսյակային բյուջեների կատարման հաշվետվությունները, իսկ Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն հրապարակում է համախմբված հաշվետվություն: Բյուջեի կատարումը դրամարկային սկզբունքով է, և չկան հրապարակված կամ առդիտի ենթարկված՝ հաշվեգրումային ֆինանսական հաշվետվություններ ըստ հաշվապահական հաշվառման ազգային համակարգի: Բյուջեի կատարման հաշվետվությունները չեն ներառում ՀՈԱԿ-ների կամ համայնքների կողմից վերահսկվող առևտրային ընկերությունների սեփական եկամուտները և համայնքների պարտքը, որը մտն է գրային: Համախմբված համայնքների բյուջեների ծախսերը 2016 թվականին կազմել են ընդհանուր կառավարության բյուջեստային ծախսերի 8.6 տոկոսը, որը համարժեք է ՀՆԱ-ի 2.6 տոկոսի:

**105. Համայնքների փոխառությունների սահմանաչափերը սահմանված են Բյուջեստային համակարգի մասին օրենքով:** Դա ներառում է.

- Համայնքների փոխառությունները, որոնք ընդհանուր կառավարությունից չեն, ենթակա են հաստատման ՖՆ-ի կողմից, և կարող են լինել միայն ենթակառուցվածքի զարգացման համար: Պարտքի սպասարկման ընդհանուր գումարը՝ ներառյալ մայր գումարը և տոկոսագումարները, չեն կարող գերազանցել կոնկրետ տարվա ընթացքում կապիտալ ծախսերի համար առանձնացված եկամուտների 20 տոկոսը:
- Ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար վերցվող փոխառությունները նույնպես ենթակա են հաստատման ՖՆ-ի կողմից, և սահմանափակվում են կենտրոնական կառավարությունից և այլ համայնքներից փոխառություններով, բյուջեի ժամանակին կատարումն ապահովելու նպատակով: Այդ փոխառությունները որպես կանոն մարվում են տարվա ընթացքում:

**106. ՏԻՄ մակարդակից ծագող ֆիսկալ ռիսկերը ներկայումս ըստ երևույթին ցածր են:** Համայնքների ծախսերը ՀՆԱ-ի 3 տոկոսից պակաս են, ինչը ընտրված այլ երկրների համեմատ ամենացածրներից մեկն է: ՏԻՄ-երը մեծապես կախված են կենտրոնական կառավարության տրանսֆերտներից, և սեփական աղբյուրներից համայնքների ստացած եկամուտները կազմում են նրանց ֆինանսավորման ընդամենը 20 տոկոսը (գծապատկեր 3.15): Համայնքների պարտքը


<sup>26</sup> Համայնքը տեղական ինքնակառավարման միավոր է, իսկ մարզը՝ կենտրոնական կառավարության տարածքային ներկայացուցիչ:

մատ է գրային և կազմված է միայն կենտրոնական կառավարությունից ստացված վարկերից և այլ պետությունների համեմատ ամենացածր ցուցանիշներից մեկն է: Այնուամենայնիվ, Երևանի ֆազաբալետարանը մտադիր է վախճանություն վերցնել և ՊՄԳ-ների մեջ մտնել, որոնցից կարող են ծագել պոստեցիվալ ֆիսկալ ռիսկեր:

**107. ՀՈԱԿ-ները ներկայումս ռիսկի լուրջ աղբյուր չեն:** Թեպետ չկա կենտրոնական վերահսկողություն, նրանց սերտորեն վերահսկվում են համայնքների կողմից: ՀՈԱԿ-ների կողմից օգտագործվող գույքը ներառված է ՏԻՄ-երի հաշվեկշիռներում, և որոշ եկամուտներ՝ ներառյալ մանկապարտեզների և աղբահեռացման մասով, ներառված է ՏԻՄ-երի բյուջեներում: ՀՈԱԿ-ների թիվը կրճատվում է, քանի որ համայնքները միացվում են, և ակնկալվում է, որ ՀՈԱԿ-ների բանկային հաշիվները կվախճանվեն Գանձապետարան՝ ինչպես սեզի է ունենում ՊՈԱԿ-ների պարագայում:

**Գծապատկեր 3.15. ՏԻՄ-երի չափերը և ֆինանսական ինֆուրմությունը ընտրված երկրներում**

(2014թ.)



**3.3.2. Պետական ընկերություններ (1սվ)**

**108. Պետական ընկերությունների ֆինանսական ցուցանիշների կիսամյակային մոնիթորինգային հաշվետվությունն ընդհանրացված և ընկերության մակարդակի տվյալներ է պարունակում պետական ընկերությունների մեծ մասի վերաբերյալ:** ՊԳԿՎ-ն տվյալներ է հավաքում բոլոր ընկերությունների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ, գնահատում է կառավարման որակը և հրապարակում է կիսամյակային հաշվետվություն: Այս հաշվետվությունը մանրակրկիտ տվյալներ է ներառում յուրաքանչյուր հյուղային նախարարության ուղջ պարտֆելի և նրա ներքո գործող ընկերությունների վերաբերյալ:

**109. Կառավարության և պետական ընկերությունների միջև անհատական տրանսֆերտներն առանձին են հրապարակվում բյուջետային տարբեր փաստաթղթերում, սակայն համախմբված չեն ներկայացվում պետական ընկերություններին կատարվող տրանսֆերտները և չեն հրապարակվում ֆյազի-ֆիսկալ գործադրությունները:**

Պետական ընկերություններին կատարվող տրանսֆերտները՝ ներառյալ թե՛ դատացիաները, թե՛ կապիտալի ներարկումները, վարկերը և վճարման այլ ձևերը, տեսանելի են պատասխանատու նախարարության բյուջետային սուղերի ներքո և բյուջետային փաստաթղթերում որևէ տեղ չեն համախմբվում: Պարտի կառավարման հաշվետվություններում կան վարկերի և երաժիշիֆների ամփոփ աղյուսակներ, սակայն դրանք չեն համեմատվում այլալ ընկերություններին կատարվող այլ տրանսֆերտների հետ: Պետական ընկերություններից շատերը գործում են կարգավորվող շուկաներում, և նրանցից կարող է պահանջվել ծառայություններ մատուցել ինֆրաբնակավայր չհատուցող գնով, սակայն պաշտոնական փաստաթղթերում տվյալներ չեն հրապարակվում փազիվիսկալ գործողությունների վերաբերյալ:

**110. Իրար հաջորդած մի քանի կառավարություններ հստակ ֆազաֆականություններ են ունեցել տարիների ընթացքում պետական ընկերությունների թիվն կրճատելու վերաբերյալ՝ մասնավորեցման, վերակառուցման և լուծարման ճանապարհով:**

Չկա սեփականության առանձին ֆազաֆականություն պետական ընկերությունների համար, սակայն ֆազաֆականություններն արտացոլվել են մասնավորեցմանը և վերակառուցմանը վերաբերող իրար հաջորդած մի քանի փաստաթղթերում: Կառավարության 2017-2022 թվականների ծրագիրը մի քանի նպատակներ է ներառում պետական գույքի կառավարման վերաբերյալ՝ ներառյալ 100 տոկոս պետական մասնակցությամբ և ոչ շահույթաբեր գործող առևտրային կազմակերպությունները ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու մտադրությունը:<sup>27</sup> 2017 թվականի տարեվերջին կառավարությանն էր պատկանում 211 բաժնետիրական ընկերությունների 50 կամ ավելի տոկոսը: Նրանցից 54-ը ներառված են մասնավորեցման ցուցակում, և դրանց նկատմամբ սեփականությունը փոխանցվել է ՊԳԿՎ-ին: Մնացյալ 157 ընկերությունները պատկանում են հյուղային նախարարություններին և կառավարվում են նրանց կողմից՝ ենթակա լինելով մոնիթորինգի ՊԳԿՎ-ի կողմից:

**111. Բյուջետային փաստաթղթերը ներառում են էներգետիկայի, տրանսպորտի և ջրի ոլորտների մասնավոր և պետական 20 խոչորագույն ընկերություններին առնչվող ֆիսկալ ռիսկերի գնահատականը:**

Գնահատականն ամբողջացված տվյալներ է պարունակում ընկերությունների ֆինանսական ցուցանիշների և դիրքի, ինչպես նաև միջին ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ՝ ըստ ոլորտների: Պետական ընկերությունների մի մասը նշված են տեխստում, սակայն թվարկված չեն ընդգրկված ընկերությունները, և չկան տվյալներ առանձին ընկերությունների վերաբերյալ: Բյուջեից ընկերություններին կատարված տրանսֆերտները նշված չեն, սակայն տեխստում բերված են ընկերություններից բյուջեին վճարված շահաբաժինների թվերը: Նաև նշված են որոշ համակարգային միջոցառումներ,


<sup>27</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-22թթ. ծրագիրը:

(continued...)


սրտն Խրականացվել են ուսրտի ֆիսկալ ռիսկերը գսպելու համար, և հանգուն այն եգրակացություն, թե համախտոն ֆիսկալ ռիսկը «միջին» է՝ չմանրամասներով դրա հետևանքները:<sup>28</sup>

**112. Շահութաբերությունը ուսրտում ցածր է: Ընդհանուր 12 միլիարդ դրամի գործառնական վնասները (ՀՆԱ-ի 0.24 տոկոս) շատ ավելի գերազանցել են շահութաբեր ընկերությունների վաստակած 2.3 միլիարդ դրամը (ՀՆԱ-ի 0.05 տոկոսը) (Գծապատկեր 3.16):** Շահույթի մեծ մասը երկու ընկերությունների (Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր և Երևանի ՋԷԿ) շնորհիվ է, մինչդեռ վեց ընկերություններ վնասով են աշխատում՝ յուրաքանչյուրը 500 միլիոնը գերազանցող վնասով (ՀՆԱ-ի 0.01 տոկոսը): Պետական ընկերություններից մեկը (Հայգազարդ) շատ մեծ չափի բացասական կապիտալ ունի: Գծապատկեր 3.17-ում նշված է, որ պետական ընկերություններին բյուջետային տարեկան օժանդակությունը բավական մեծ է՝ ներառյալ թե՛ կապիտալի մեջ ներարկումները, թե՛ դատացիաները: Գծապատկերներ 3.18-ում և 3.19-ում ներկայացված են Հայաստանում ամենամեծ պարտավորությունները և համապատասխանաբար ամենացածր շահութաբերությունն ունեցող պետական ընկերությունները: Գծապատկեր 3.20-ը ցույց է տալիս, որ պետական ընկերությունների պարտավորությունները Հայաստանում այլ պետությունների համեմատ միջին մեծության են:

**Գծապատկեր 3.16. Պետական ընկերությունների շահույթը (2016թ.) (մլրդ դրամ)**




**Գծապատկեր 3.17. Կառավարության օժանդակությունը պետական ընկերություններին (ՀՆԱ-ի տոկոս)**




Աղբյուրը՝ ՊԳԿՎ-ի 2016 թվականի մոնիթորինգի զեկույց, տարեկան բյուջեի հաշվետվություններ, անձնակազմի հաշվարկներ:

<sup>28</sup> Հաշվի առնելով, որ ռիսկերը տարբեր ընկերություններում տարբեր են, տարբեր ընկերությունների համակցված գնահատմամբ կիմնականում ստացվում է ընկերությունը ներհատակ ռիսկերի միջին գնահատական: Յուրաքանչյուր ընկերություն պետք է առանձին ենթարկել ռիսկի մանրակրկիտ գնահատման:

**Գծապատկեր 3.18. Հայաստանի պետական ընկերությունների պարտավորությունները (ՀՆԱ-ի տոկոս, 2016թ.)**



**Գծապատկեր 3.19. Որոշ երկրների պետական ընկերությունների պարտավորությունները (ՀՆԱ-ի տոկոս, 2016թ.)**



Աղբյուրը՝ ՊԳԿՎ-ի 2016 թվականի մոնիթորինգի զեկույց, ԱՄՇ-ի պետական ներդրումների տվյալների շտեմարան, անձնակազմի հաշվարկներ:

## Առաջարկություններ

**Հիմնախնդիրը.** Հայաստանը լուրջ առաջընթաց է արձանագրել որոշ ոլորտներում ֆինսկալ ռիսկերի թափանցիկ կառավարման առումով, սակայն ռիսկերի կառավարման մոտեցումն հաճախ հատվածական է՝ խթանելով ռիսկերի գերակայությունների սահմանումը և ռիսկերի հետևողական կառավարումը:

### Առաջարկություն 3.1. Բյուջեի փաստաթղթերում ներկայացնել ֆինսկալ ռիսկերի համախմբված ամփոփում.

- Ներառել ամփոփ աղյուսակ, որում ներկայացված կլինեն հիմնական ֆինսկալ ռիսկերը, պրանց հավանականությունը և պոտենցիալ ֆինսկալ ազդեցությունը,
- ՖՆ-ի ստորաբաժանումներից մեկին վերադասել ՖՈՏ-ն համակարգելու պատասխանատվությունը՝ ֆինսկալ ռիսկերի կառավարմամբ զբաղվող այլ վարչությունների մասնակցությամբ,
- Ապահովել, որպեսզի բոլոր ռիսկերն հետևողականորեն նկարագրված լինեն, որպեսզի հնարավոր լինի համեմատությունը եւ առաջնահերթությունների սահմանումը,



- Ստեղծել ՖՌՏ-ի ժամանակացույց, որով կապահովվի, որպեսզի ռիսկերի վերլուծություններն հաշվի առնվեն ՄԺԾՄ-ում և բյուջետային ֆազակառուցման մեջ, և
- ՄԺԾՄ-ի և բյուջետային փաստաթղթերի համապատասխան մասերում ներկայացնել ֆիսկալ ռիսկերի ավելի մանրակրկիտ վերլուծություն՝ ներառյալ ռիսկերի մեղմման ռազմավարությունները:
- Առողջապահության և կենսաբուժության ապագա ծախսերի կանխատեսումները ներառել Հայաստանի գարգացման նոր 2018-2030 թթ. ռազմավարությունում՝ երկարաժամկետ ֆիսկալ կայունության վերլուծությամբ հանդերձ,
- Գործող երաշխիքների մասին տեղեկություններ տրամադրել բյուջետային փաստաթղթերում՝ ներառելով տեղեկություններ յուրաքանչյուր երաշխիքի ռազմավարական հիմնավորման, այդ երաշխիքով պահանջների ներկայացման ռիսկի և վերջին հինգ տարիներին կառավարական երաշխիքների առնչությամբ կատարված վճարումների վերաբերյալ,
- Նմանաբնույթ տեղեկություններ ներկայացնել կառավարության ենթավարկավորման բոլոր գործողությունների վերաբերյալ,
- Նկարագրել վերջին 10 տարիներին կառավարության կողմից ֆինանսական հատվածին ցուցաբերված ցանկացած օժանդակություն՝ ներառյալ երաշխիքները, ինչպես նաև ուղղակի վճարումները,
- Նկարագրել բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգում կառավարության կրած պարտավորությունները, և
- Ներկայացնել ընդերքի առկա պաշարների ծավալի և արժեքի, ինչպես նաև՝ դրանում կառավարության ակնկալվող մասնաբաժնի հաշվարկային գնահատական: Նկարագրել հանփարդյունաբերությունից բյուջետի ստացած եկամուտների հոսքերի տատանումները վերջին 10 տարիներին:

**Հիմնախնդիրը. ներկայումս չկա ՊՄԳ-ներին վերաբերող հստակ իրավական դաշտ: Դա խթանում է ՊՄԳ-ների՝ որպեսզի հանրային ենթակառուցվածքի համար գնումների գործիքի հնարավոր օգտագործումը և ստեղծում հնարավոր ֆիսկալ ռիսկեր:**

### **Առաջարկություն 3.2. Ապահովել, որպեսզի ՊՄԳ-ներին վերաբերող իրավական դաշտով նախատեսվի.**

- ՊՄԳ-ների հստակ և համապարփակ սահմանում,
- ՊՄԳ-ների տվյալների շտեմարանի ստեղծում,

- ՊՄԳ-ներից ծագող ընդհանուր իրավունքների, պարտավորությունների և այլ մասնակցությունների ամենամյա հրապարակում,
- Պայմանագրերից ակնկալվող տարեկան մուտքերը և վճարումները, և
- Իրավական սահմանաչափ կիրառել կուտակված ՊՄԳ պարտավորությունների նկատմամբ՝ Հայաստանի ֆիսկալ կանոնին համահունչ:

**Հիմնախնդիրը.** պետական ընկերությունների մոնիթորինգը ոչ լիովին է համընդգրկում, քանի որ դրանում չեն նշվում յուրաքանչյուր ընկերության առնչությամբ կառավարության նպատակները, փոփոխմանակալան բաժնետերերը կամ ընկերությունների հարաբերությունները բյուջեի հետ: Դա խաթարում է պետական ընկերությունների արդյունավոր կառավարումը և ավելացնում է վնասով աշխատող պետական ընկերություններից բյուջեի համար ծագող ռիսկերը:

**Առաջարկություն 3.3.** ՊԳԿՎ-ի կողմից պետական ընկերությունների մասին հրապարակվող երկամյա մոնիթորինգային զեկույցի շրջանակն ընդլայնել՝ առավել լիարժեքորեն ներկայացնելով դրանց ֆինանսական ցուցանիշները, շահերի բախումները և բյուջետային ազդեցությունը.

- Նշել յուրաքանչյուր ընկերության մասով կառավարության նպատակը (հիմնականում ֆազաբակաևության նպատակ, հիմնականում ֆինանսական նպատակ, պետական սեփականության ներքո մնալը, մասնավորեցվելը, վերակառուցվելը կամ լուծարվելը),
- Նշել յուրաքանչյուր պետական ընկերությունում փոփոխմանակալան բաժնետերերին, պետական պատանյանների կամ ֆազաբակաև գործիչների բաժնեմասի առնչությամբ ապահովել թափանցիկությունը, և
- Ներկայացնել բյուջեի հետ բոլոր հարաբերությունները՝ ներառյալ կապիտալի ներարկումները, վարկերը, դոտացիաները, շահաբաժինները և երաշխիքները:

**Աղյուսակ 3.5. Հայաստանի գնահատման ամփոփում. ֆինակալ ռիսկերը**

	<b>Սկզբունք</b>	<b>Գնահատում</b>	<b>Կարևորություն</b>	<b>Առաջ.</b>
3.1.1	<b>Մակրոտնտեսական ռիսկ</b>	<b>Առաջադեմ.</b> բյուջեի փաստաբարդը պարունակում է մակրոտնտեսական և ֆինակալ տարբեր սցենարների զգայնության և հավանականային վերլուծություններ:	<b>Բարձր.</b> վերջին շրջանի արտաքին ցնցումների հետևանքով կորակումն առկա է պետական պարտք՝ 2008թ. 16 սոկոսի համեմատ 2017 թվականին հասնելով 59 սոկոսի (2008-ին՝ 16 սոկոս):	
3.1.2	<b>Ֆինակալ հատուկ ռիսկեր</b>	<b>Բազային.</b> ֆինակալ հատուկ ռիսկերի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկություններ են հրատարակվում, սակայն չկան ամփոփ հաշվետվություններ, և սահմանափակ են բանական գնահատականները:	<b>Բարձր.</b> ֆինակալ ռազմակի ռիսկերը կարող են հասնել ՀՆԱ-ի 70 սոկոսի:	<b>3.1</b>
3.1.3	<b>Ներքաթամիկետ ֆինակալ կայունություն</b>	<b>Բազային.</b> Հայաստանի գարգացման ռազմավարությունը ներառում է մակրոտնտեսական կանխատեսումներ, սակայն ոչ՝ առավել երկարաժամկետ ազդեցության վերլուծություն:	<b>Միջին.</b> առողջապահության և կենսաբուժականային երկարաժամկետ ծախսերը կարող են աճել՝ ՀՆԱ-ի մեջ 15-ից հասնելով 23 սոկոսի: Այս աճը կհանգեցնի տեղի կունենա 2030թ. հետո:	<b>3.4</b>
3.2.1	<b>Բյուջեով չհախատված ծախսեր</b>	<b>Բազային.</b> օրենքով պահանջվում է բյուջետային պահուստ, ինչպես նաև հաշվետվություններ, սակայն սահմանված չեն դրանցից օգտվելու չափորոշիչները:	<b>Միջին.</b> պահուստային ֆոնդը լավ է կառավարվում, սակայն ոչ չհախատված ծախսերի համար այն չափազանց շատ օգտագործելը կարող է խարսխել իրապես չհախատված դեպքերին արձագանքելու ունակությունը:	
3.2.2	<b>Ակտիվների և պարտավարությունների կառավարում</b>	<b>Բազային.</b> կառավարության պարտք և կանխական ֆինանսական ակտիվներն հրատարակվում են, սակայն չկա ռիսկերի համապարփակ վերլուծություն և հաշվեկշիռ:	<b>Բարձր.</b> գուտ ֆինանսական ակտիվները (կիմնվելով բացահայտված տեղեկատվության վրա)՝ ՀՆԱ-ի 30 սոկոս: Համախառն պարտավարությունները՝ ՀՆԱ-ի 57 սոկոս:	<b>1.2</b> <b>3.4</b>
3.2.3	<b>Երաշխիքներ</b>	<b>Լավ.</b> վարկային երաշխիքներն հրատարակվում են պարտքի հաշվետվությունում և հաստատվում կառավարության որոշումներով, տարեկան սահմանաչափի շրջանակում, սակայն այդ երաշխիքների ներքո պահանջներ կերկայացնելու հավանականությունը չի գնահատվում:	<b>Ցածր.</b> երաշխիքները սահմանափակված են (ՀՆԱ-ի 1.4 սոկոս) և կառավարվում են քափանցիկորեն:	<b>3.4</b>
3.2.4	<b>Պետական-մասնավոր գործընկերություններ</b>	<b>Բազային.</b> ՊՄԳ պայմանագրերից բխող ընդհանուր իրավունքները, պարտավարությունները և այլ	<b>Բարձր.</b> ՊՄԳ-ների կապիտալ պաշարը մեծ է՝ ՀՆԱ-ի 10.2 սոկոս, պլանավորվում են մի բանի ՊՄԳ-ներ:	<b>3.3</b>

		մանակցությունները չեն հրապարակվում, ֆիսկալ ռիսկերի գնահատումն համադրագային չէ, այլ կատարվում է ընդամենը 2 ծրագրերի մասով:		
3.2.5	<b>Ֆինանսական հատված</b>	<b>Լալ.</b> 2009թ. ի վեր չի ցուցաբերվում անմիջական ֆինանսական օժանդակություն և չկան կառավարական երաժիշիքներ բանկերին վարկերի համար: ՀՀ ԿԲ-ն պատրաստում է ֆինանսական կայունության հաշվետվություն, սակայն ֆիսկալ հնարավոր ռիսկերը դրանում բացահայտ կերպով չեն բնութագրվում:	<b>Միջին.</b> ֆինանսական հուսալիության ցուցանիշները կուռ են և դրանք բարելավվում են: Հստակ բացահայտումների չկատարումը կարող է անորոշություն առաջացնել:	<b>3.4</b>
3.2.6	<b>Բնական պաշարներ</b>	<b>Զի համապատասխանում.</b> կառավարության փաստաթղթերում չկան բնական պաշարների ակտիվների արժեքի համակարգված հաշվետվական տվյալներ:	<b>Միջին.</b> պաշարների գները սատունդական են, և ՀՆԱ-ն կարող է 2 տոկոսի չափով տատանվել: Ընթացիկ մեջ գտնվող EIT1 գործընթացը կբարելավի հրապարակումները:	<b>3.4</b>
3.2.7	<b>Շրջակա միջավայրի ռիսկեր</b>	<b>Զի համապատասխանում.</b> կառավարության փաստաթղթերում չկա բնագրահղմանական ռիսկերի անմիջական վերլուծություն և բացահայտում:	<b>Միջին.</b> բնական աղետների միջին ռիսկ կա, որից ակնկալվող միջին տարեկան կորուստն ՀՆԱ-ի 1.3 տոկոս է:	
3.3.1	<b>ՏԻՄ-եր</b>	<b>Առաջադեմ.</b> եռամսյակային հաշվետվություններ համախմբված համայնքների բյուջեի կատարման մասին, և համայնքների փոխտնտեսությունների սահմանաչափեր՝ ենթակա ՖՆ-ի կողմից հաստատման:	<b>Ցածր.</b> համայնքների ծախսերը կազմում են ընդհանուր կառավարության ծախսերի 8.6 տոկոսը, առկա են ստանճանափակ ծախսի վարկեր, այն էլ՝ միայն կենտրոնական կառավարությունից:	
3.3.2	<b>Պետական ընկերություններ</b>	<b>Լալ.</b> տրանսֆերտներն հրապարակվում են տարբեր փաստաթղթերում, և մոնիթորինգի գեկույցում ներկայացվում են կատարողականի որոշ ընդհանրացված տվյալներ, սակայն չկան ֆվազի-ֆիսկալ գործունեության վերլուծություններ:	<b>Բարձր.</b> պարտավորություններ ՀՆԱ-ի 15.4 տոկոսի չափով, և համախառն կորուստ ՀՆԱ-ի 0.2 տոկոսի չափով՝ արձանագրված 2016թ.:	<b>3.2</b>

Հավելված I. Հայաստան. կառավարության ֆինակալ թափանցիկության գործողությունների ծրագիր (2018–21թթ.)

I. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
<b>1.1. Ընդլայնել հաշվետվությունների ինստիտուցիոնալ ընդգրկումը</b>					
a. Բարելավել միավորների կողմից GFSM հաշվետվությունների կազմումն ու ներկայացումը		Պատրաստել և վարել ընդհանուր կառավարության միավորների և պետական կարպորացիաների համապարփակ ցանկ Պետական ՈԱԿ-ները ներառել կենտրոնական կառավարության բյուջեի կատարման համախմբված հաշվետվություններում:			ՖՆ, ԱՎԾ
			Ապահովել հանրային կառույցների պատճառ ուղարտայնացումն ըստ ընդհանուր կառավարության հատվածի կամ պետական կարպորացիաների հատվածի Ընդլայնել համախմբված		ՖՆ, ԱՎԾ

I. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
			<p>ընդհանուր կառավարության վիճակագրական հաշվետվությունները՝ ներառելով համայնֆային ՈԱԿ-ները և համապատասխան պետական կարգադրացիաները</p>		
<b>1.2. Հրապարակել կենտրոնական կառավարության հաշվապահական հաշվեկիտը</b>					
<p>б. Հրապարակել միջանկյալ հաշվապահական հաշվեկշռի տեղեկատվությունը</p>	<p>Հավաքել և համախմբել ընդհանուր կառավարության ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տվյալները, որոնք վարում են ՖՆ-ի տարբեր ստորաբաժանումները, Պետական գույքի կառավարման վարչությունը, ՊՈԱԿ-</p>	<p>Համապատասխան հաշվետվությունում կամ տեղեկագրում ամսական և տարեկան կտրվածքով հրապարակել պետության հաշվապահական հաշվեկիտը, որը կընդգրկի բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները</p>	<p>Օգտագործելով առկա տեղեկատվությունը՝ կազմել կենտրոնական կառավարության համախմբված հաշվեկիտը (ներառյալ ՊՈԱԿ-ները)՝ հիմնվելով GFSM 2014-ի մեթոդաբանության վրա</p>	<p>Ընդլայնել ծածկույթը՝ դրանում ներառելով ընդհանուր կառավարության հատվածը</p>	<p>Կառավարություն, ՖՆ</p>

I. ԲՅՈՒՋԵՏՍՅՒՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
	ները և նախարարությունները				
<b>1.3. Բարելավել բյուջետային հաշվետվությունների հետևողականությունը, համադրելիությունը և ամբողջականությունը</b>					
a. Բարելավել դասակարգումն ու համադրումը		Ապահովել, որ կառավարության էական գործառնությունները, օրինակ՝ վնասով աշխատող կորպորացիաներում կապիտալ ներարկումները, պատշաճ կերպով դասակարգվեն գծից վերև Կազմել և հրապարակել հետևյալ աղյուսակները, որոնցում համադրված կլինեն՝ I. պաշարների և հարակից հոսքերի փոփոխությունները՝ ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների առանձին խմբերի, II. պակասուրդը/ավելցուկը և պարտի փոփոխությունը, և			ՖՆ

I. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
		III. հիմնական ամփոփ տվյալների միջև առկա տարբերությունները՝ հիմնվելով GFSM 2014-ի և SNA 2008-ի մեթոդաբանության վրա (ներառելով բացատրագիր):			
<b>1.4. Ապահովել IPSAS-ների վրա հիմնված հաշվապահական հաշվառման լիարժեք ներդրումը</b>					
a. Ապահովել համապարփակ և միասնական հաշվապահական բարեփոխումը		Ապահովել այն, որ հաշվապահական տեղեկատվությունը պարունակի վիճակագրական միջազգային չափանիշներին (GFSM 2014 և SNA 2008) համապատասխանող տեղեկատվությունը Ապահովել պրամարիդային հիմունքով կազմվող բյուջեի կատարման հաշվետվությունների և հաշվեգրման հիմունքով կազմվող ֆինանսական հաշվետվությունների ինտեգրումը	Կիրարկել IPSAS-ների վրա հիմնված ազգային հաշվապահական հաշվառման ստանդարտները և հրապարակել ֆինանսական հաշվետվությունները	Ապահովել հաշվեկռային համապարփակ տվյալներ՝ ներառելով ընդհանուր կառավարության բոլոր ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև հոսքերի վերաբերյալ տվյալները	ՖՆ, Հաշվեհանիչ պալատ



I. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
		Ապահովել բյուջեի կատարման մասին ավյալների, բյուջետային վիճակագրության և ֆինանսական հաշվետվությունների միջև համաբերելիությունը			

II. ԿԱՆԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
<b>2.1 Կատարելագործել ՄԺԾՄ-ն և բյուջետային փաստաթղթերը</b>					
Օպտիմալացնել միջնաժամկետ և տարեկան բյուջետային գործընթացները	<p>2019-2021 ՄԺԾՄ-ում և 2019-ի տարեկան բյուջեում ներառել ֆինանսական համապատասխանության մասին հայտարարություն</p> <p>Համադրման աղյուսակներ ներառել 2019-ի տարեկան բյուջեում (տե՛ս ՖԹԳ գեկույցի Տեխնոլոգիաների 2.3), ինչպես նաև հետագա ՄԺԾՄ-ներում և տարեկան բյուջեներում</p>	<p>2019 թ. բյուջեի կատարման հաշվետվությունում ներառել ֆինանսական համապատասխանության մասին հայտարարություն</p> <p>Նկամուտների և ծախսերի՝ ըստ տնտեսական դասակարգման բարձր աստիճանների բացվածք ներառել 2020-2022 ՄԺԾՄ-ում</p> <p>Կազմել և հաստատել ՄԺԾՄ-ն և տարեկան բյուջեն հստակեցնելու և վերակառուցելու ծրագիր՝ որպես զբոսայգի էլակետային գործընթացի փուլեր</p> <p>Իրականացնել ՄԺԾՄ-ի և տարեկան բյուջեի նոր գործընթացներին նվիրված վերադատրաստում</p>	<p>Մեկնարկել ՄԺԾՄ-ի և տարեկան բյուջեի վերակառուցումը՝ որպես պարբերական էլակետային գործընթաց</p>		Կառավարություն, ՖՆ, ՊԵԿ
<b>2.2 Կատարելագործել անկախ գնահատումը</b>					

II. ԿԱՆԱՏԵՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՎԱՐՈՒՄ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
2. Հրապարակել այլընտրանքային կանխատեսումներ	2019-2021 ՄԺԾԾ-ում և 2019 թվականի բյուջեում ներառել պատժական կանխատեսումների և այլ կառույցների կանխատեսումների համեմատություններ				
<b>2.3 Բարելավել բյուջեի ընդգրկումը և նվազեցնել բյուջեի վերանայումները</b>					
a. Ապահովել, որպեսզի տարեկան և վերանայված բյուջեները լինեն արժանահավաստ	Ֆիսկալ նպատակների մասին հայտարարություն ներառել 2019-2022 ՄԺԾԾ-ի ուղղիչ գործադրությունների ծրագրում և 2019-ի բյուջեի մասին օրենքում՝ ապահովելու համար համապատասխանության առաջինը ՀՊ-ի կողմից	Արտաբյուջետային հաշիվների կանխատեսվող եկամուտը և ծախսերը ներառել 2020-ի բյուջեում  Իրականացնել համապատասխանության առաջինը	Փոփոխել ԲՀԾ-ի 11-րդ հոդվածը. (i) սահմանափակելով ծախսերի ավելացումները, և (ii) այդ սահմանը գերազանցող ավելացումների դեպքում պահանջելով խորհրդարանի հաստատումը:  Փոփոխել ԲՀԾ-ի 19-րդ հոդվածը՝ ներառելով կառավարության պահուստային ֆոնդի օգտագործման հստակ չափորոշիչներ, որպեսզի դա չիհի միայն իրապես չնախատեսված դեպքերի համար (տե՛ս Տեխստային ներդիր 3.1-ը ՖԹԳ զեկույցում, որտեղ բերված են որոշ պետությունների օրինակներ)		Խորհրդարան, կառավարություն, ՖՆ, ՀՊ

III. ՖԻՍԿԱԿ ՌԻՍԿԵՐ					
Առաջադրություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
<b>3.1. Ներկայացնել ֆիսկալ ռիսկերի համախմբված ամփոփում</b>					
<p><b>ա.</b> Ներառել ամփոփ աղյուսակ, որում ներկայացված կլինեն հիմնական ֆիսկալ ռիսկերը, դրանց հավանականությունը եւ պոտենցիալ ֆիսկալ ազդեցությունը</p>	<p>Աղյուսակը ներառել 2019-ի բյուջետային փաստաթղթերում՝ ներկայումս առկա տեղեկությունների հիման վրա</p>	<p>Ընդլայնել աղյուսակում ներառված ռիսկերի շրջանակը եւ դրանց բանական գնահատականները 2020-2022 ՄԺԾԾ-ում եւ 2020-ի բյուջետային փաստաթղթերում՝ նշելով ուղղակի ֆիսկալ ռիսկերը</p>	<p>Ընդլայնել աղյուսակում ներառված ռիսկերի շրջանակը եւ դրանց բանական գնահատականները 2021-2023 ՄԺԾԾ-ում եւ 2021-ի բյուջետային փաստաթղթերում՝ նշելով ուղղակի եւ անուղղակի ֆիսկալ ռիսկերը</p>		<p>ՖՆ-ում ֆիսկալ ռիսկերի համակարգման համար պատասխանատու ստորաբաժանում Այլ պետական մարմիններ</p>
<p><b>բ.</b> ՖՆ-ի ստորաբաժանումներից մեկին վերապահել ՖՌՏ-ն համակարգելու պատասխանատվությունը՝ ֆիսկալ ռիսկերի կառավարմամբ զբաղվող այլ վարչությունների մասնակցությամբ</p>	<p>Պատասխանատվությունը աահանող եւ վերապահող ՖՆ հրամանի հաստատում</p>				<p>Ֆինանսների նախարար</p>
<p><b>գ.</b> Ընդլայնել ՄԺԾԾ-ում եւ տարեկան բյուջեի փաստաթղթերում ներկայումս հրապարակվող կարեւորագույն ֆիսկալ ռիսկերի վերլուծության շրջանակը, որակը, բանակայնացումը եւ մեղմման գործողությունները</p>	<p>2019-ի տարեկան բյուջեի փաստաթղթերում ընդլայնել առանձին ֆիսկալ ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը՝ ներառյալ օրինակ ընդհանուր պարտավորությունների, իրավունքների արժեքը, ՊՄԳ</p>	<p>2020-2022 ՄԺԾԾ-ում եւ 2020-ի բյուջեի փաստաթղթերում ընդլայնել առանձին ֆիսկալ ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը՝ ի կատար ածելով ԱՄՀ-ի տեխնիկական աջակցության խորհուրդներն</p>	<p>2021-2023 ՄԺԾԾ-ում եւ 2021-ի բյուջետային փաստաթղթերում ընդլայնել առանձին ֆիսկալ ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը՝ ներառյալ ֆիսկալ ռիսկերի գնահատման</p>		<p>ՖՆ-ում ֆիսկալ ռիսկերի համակարգման համար պատասխանատու ստորաբաժանում, ՖՆ-ում առանձին ռիսկերի</p>

III. ՖԻՄԱՆ ՌԻՍԿԵՐ					
Առաջարկություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
	պայմանագրերը, ֆիսկալ կանխատեսումների վրա ֆինանսական տարբեր ռիսկերի հնարավոր ուղղակի ազդեցության ֆանկտական գնահատականը	էներգետիկայի, տրանսպորտի և ջրի ոլորտներում ֆիսկալ ռիսկերի գնահատման վերաբերյալ, ինչպես նաև մակրոտնտեսական ռիսկի գնահատման վերաբերյալ	ընդլայնումը և դրանում իրական սնուստության բոլոր ոլորտների ներառումը:		կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումներ Այլ պետական մարմիններ
Վ. Տեղեկություններ հրապարակել լրացուցիչ հասուկ ֆիսկալ ռիսկերի վերաբերյալ	2019 թվականի բյուջետային փաստաթղթերում որոշակի տեղեկություններ ներկայացնել գործող յարաբանչյուր երաշխիքի վերաբերյալ  2019 թվականի տարեկան բյուջետային փաստաթղթերում հրապարակել ընթացիկ վարկերի վերլուծություն	Տարեկան բյուջեի փաստաթղթերում նկարագրել վերջին 10 տարիներին կառավարության կողմից ֆինանսական հատվածին ցուցաբերված ուղջ ժամդակությունը  Տարեկան բյուջեի փաստաթղթերում նկարագրել բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգում կառավարության ունեցած պարտավարությունները	2020-22թթ. ՄԺԾԾ-ում ներկայացնել օգտակար հանաձոների առկա պաշարների ծավալի և արժեքի, ինչպես նաև՝ դրանում կառավարության ակնկալվող մասնաբաժնի հաշվարկային գնահատական	2022-24թթ. ՄԺԾԾ-ում ներառել կլիմայի փոփոխության և բնապահպանական այլ ֆիսկալ ռիսկերի գնահատականը  2021-23թթ. ՄԺԾԾ-ում ներառել բնական աղետների հետ կապված ֆիսկալ ռիսկերի գնահատականը	ՖՆ  Այլ պետական մարմիններ
<b>3.2 Բարելավել ՊՄԳ-ների իրավական դաշտը</b>					
ա. Ապահովել ՊՄԳ-ների հասակ և համապարփակ սահմանում, ստեղծել ՊՄԳ-ների տվյալների շտեմարան, ամեն տարի հրապարակել ՊՄԳ	Հաստատել ՊՄԳ-ի մասին օրենք, որում արտացոլված կլինեն նշված նորմերը	Հաստատել ՊՄԳ օրենքի կատարումն ապահովող՝ կառավարության որոշում	Մերողաբանական ուղեցույցի կիրառությանը նվիրված վերապատրաստում իրականացնել ՖՆ-ի, ՏԶՆՆ-ի, ՊՄԳ ստորաբաժանման և		Խորհրդարան, կառավարություն, ՖՆ, ՏԶՆՆ

III. ՖԻՍԿԱԼ ՌԻՍԿԵՐ					
Առաջադրություն	2018	2019	2020	2021	Պատասխանատու
<p>պայմանագրերից բխող ընդհանուր իրավունքները,</p> <p>պարտավորությունները եւ այլ մասնակցությունը, այդ պայմանագրերի մասով ակնկալվող տարեկան մուտքերը եւ կատարվելիք վճարումները,</p> <p>Հայաստանի ֆիսկալ կանոնին համապատասխանող իրավական սահմանաչափ նախատեսել ՊՄԳ կուտակված պարտավորությունների նկատմամբ</p>	<p>Հավաքել համապատասխան տվյալներ</p>	<p>Հաստատել մեթոդաբանական ուղեցույց, որը մանրակրկիտ ուղեցույցներ կպարունակի օրենքի կատարման վերաբերյալ</p>	<p>նյութային նախարարությունների համար</p>		
<b>3.3 Ընդլայնել ՊԳԿՎ-ի կողմից պետական ընկերությունների մասին հրապարակվող երկամյա մոնիթորինգային զեկույցի շրջանակը</b>					
<p>ա. Նշել յուրաքանչյուր ընկերության մասով կառավարության նպատակը, նշել յուրաքանչյուր պետական ընկերությունում վտերմամանական բաժնետերերին, ներկայացնել բյուջեի հետ յուրաքանչյուր ընկերության բույսը հարաբերությունները՝ ներառյալ կապիտալի ներարկումները, վարկերը, ցուցանիշները, շահաբաժինները եւ երաժիշկները:</p>	<p>Այս տեղեկությունները ներառել ՊԳԿՎ-ի զեկույցներում պետական ընկերությունների խոշորագույն մեկ երրորդի մասով</p>	<p>Այս տեղեկությունները ներառել ՊԳԿՎ-ի զեկույցներում պետական ընկերությունների հաջորդ խոշորագույն մեկ երրորդի մասով</p>	<p>Այս տեղեկությունները ներառել ՊԳԿՎ-ի զեկույցներում պետական ընկերությունների վերջին մեկ երրորդի մասով</p>		ՊԳԿՎ

## Հավելված II. Տեխնիկական տեղեկանք աղյուսակ 0.2-ի վերաբերյալ

### Մերոդաբանական շրջանակ

Աղյուսակ 0.2-ում ցույց են տրված «GFSM 2014»-ի համաձայն կատարված հաշվարկների արդյունքները: Այդ հաշվարկների միջոցով փորձ է արվել ներկայացնել Հայաստանի պետական հատվածի ֆինանսների լայն պատկերը՝ բյուջետային տարբեր հաշվետվություններում արտացոլված տվյալները փոխլրացնելով ԱՄՆ-ի անձնակազմի հաշվարկներով այն դեպքերում, երբ առկա են եղել «GFSM 2014»-ի շրջանակով նախատեսված տվյալների ամենաէական բացերը: Հաշվի առնելով տվյալների աղբյուրների և դրանց հաշվարկման համար պահանջվող ժամանակի սահմանափակությունը՝ այս վարժության արդյունքը պետք է դիտարկվի որպես Հայաստանի պետական հատվածի ֆինանսների մոտավոր պատկերը:

Ինչ վերաբերում է ինստիտուցիոնալ ծածկույթին, ապա «պետական հատվածը բաղկացած է կառավարության ղեկավարող միավորների կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվող բոլոր ղեկավարող ինստիտուցիոնալ միավորներից, այսինքն՝ ընդհանուր կառավարության հատվածի բոլոր միավորներից և ղեկավարող պետական կորպորացիաներից»<sup>29</sup>:

Պետական կորպորացիաները ներառում են և ֆինանսական, և ոչ ֆինանսական գործունեություն իրականացնող միավորները: Ստորև գծապատկեր A.1-ում ցույց է տրված ընդհանուր կառավարության հատվածի, պետական հատվածի և երկրի տնտեսության հիմնական ոլորտների միջև կապը:

**Գծապատկեր A.1 Պետական հատվածը և տնտեսության այլ ոլորտները**

General Government Sector	Nonfinancial Corporations Sector	Financial Corporations Sector	Households Sector	Nonprofit Institutions Serving Households Sector
Central government State governments Local governments	Public corporations	Public corporations	Private	Private
	Private corporations	Private corporations		

Public sector

«GFSM»-ի համաձայն, այն գործարկները, որոնց արդյունքում գուտ ակտիվներն աճում են, գրանցվում են որպես *էկամուտ*, իսկ գուտ ակտիվների նվազմանը հանգեցնող գործարկները գրանցվում են որպես *ծախ*: *Չուտ գործառնական մնացորդը*, որը ցույց է տալիս միավորների յուրաքանչյուր խմբի ֆազաբանությունների կայունությունը,

<sup>29</sup> «GFSM 2014», պարբերություն 2.63

համապատասխանում է եկամուտների ու ծախսերի միջև տարբերությանը, և որպես այդպիսին չի ներառում ոչ ֆինանսական ակտիվներով գործարքները:

Ընդհանուր ծախսերի տվյալը կարելի է ստանալ՝ ծախսերին գումարելով ոչ ֆինանսական ակտիվներում գուտ ներդրումը (ձեռքբերումներ՝ հանած օտարումներ, հանած հիմնական կապիտալի սպառում): *Ոչ ֆինանսական ակտիվներում գուտ ներդրումը* չի վտխում պետական հատվածի գուտ ակտիվների մեծությունը, բայց ազդում է պետական հատվածի առկա ֆինանսական միջոցների վրա: Ուստի, *գուտ վարկավորման/փոխառությունների* (որը նաև անվանվում է ֆիսկալ մնացորդ) հաշվարկման ժամանակ այն պետք է նվազեցվի գուտ գործառնական մնացորդից: Այս տվյալն արտացոլում է այն գումարը, որը հասանելի է պետական հատվածին վարկավորում տրամադրելու համար կամ որն անհրաժեշտ է փոխառել ծախսերը ֆինանսավորելու նպատակով:

## **Աղբյուրները և մեթոդները**

### *Ընդհանուր կառավարություն*

Որպես ընդհանուր կառավարության (ԸԿ) գործարքների վերաբերյալ տվյալների առաջնային աղբյուր են ծառայել ԱՄՆ-ի «GFS» տարեգրքի համար ՖՆ-ի կողմից դրամարկային հիմունքով կազմված «GFS»-ի տարեկան տվյալները: Միակ հեզրտումը, որ կատարվել է հեղած տվյալներում, ներկայումս որևէ բյուջետային հաշվետվությունում չներառված արտաբյուջետային միավորների (համայնֆային ոչ առևտրային կազմակերպությունների) գործառնությունների մոտավոր հաշվարկված արժեքի ավելացումն է ՏԻՄ-երի եկամուտներում ու ծախսերում: Համախմբումից հետո հոսքերի վտփախությունը նեանակալից չէ և չի ազդում ԸԿ-ի հատվածի գուտ վարկավորման/փոխառությունների վրա: ԱՄՆ-ի անձնակազմի կողմից հաշվարկը կատարվել է՝ հիմնվելով Տեղական ինֆնակառավարման մարմինների վարչության հետ անցկացված ֆննարկումների շրջանակում հավաքագրված տեղեկատվության վրա:

Ոչ ֆինանսական ակտիվների, ֆինանսական ակտիվների, պարտավորությունների մասով ԸԿ-ի պաշարների դիրքերի հաշվարկները հիմնված են հաշվապահական տվյալների վրա, որոնցից գատ օգտագործվել են պետական տարբեր մարմիններից ստացված, ինչպես նաև ԱՄՆ-ի Կապիտալի պաշարների տեղեկատվական բազայի լրացուցիչ տեղեկությունները: Ի լրումն, հիմնական միջոցների և ՊՄԳ-ներից բխող հարակից պարտավորությունների, զինծառայողների կենսաթոշակային սխեմայի պարտավորությունների մեծությունների արտացոլման նպատակով ավելացվել են ԱՄՆ-ի անձնակազմի հաշվարկները:



Ստորև աղյուսակ A.1-ում սահմանված են ընդհանուր կառավարության ակտիվների և պարտավորությունների պաշարների առանձին տարրերը՝ նպատակ ունենալով գնահատել աղյուսակ 0.2-ում ներկայացված և GFSM 2014-ին համապատասխանող պաշարների տվյալների մոտարկումը:

**Աղյուսակ A.2 Ընդհանուր կառավարության հաշվապահական հաշվեկշիռի տվյալների մոտավոր հաշվարկ**

Ենթահատված	Տեղեկատվության աղբյուր	Մլրդ ՀՀ դրամ
<i>Բյուջետային կենտրոնական կառավարություն</i>	<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>	1,609
	<ul style="list-style-type: none"> <li>Նախարարություններին պատկանող ակտիվներ, աղբյուրը՝ ՖՆ, նյութային նախարարությունների ամփոփ ֆինանսական հաշվետվություն / հաշվապահական հաշվեկշիռ</li> </ul>	886
	<ul style="list-style-type: none"> <li>Պետական ենթակառուցվածքային ակտիվներ և ռազմական տեխնիկա, աղբյուրը՝ Պետական գույքի կառավարման վարչություն և ՖՆ</li> </ul>	205
	<ul style="list-style-type: none"> <li>ՊՄԳ-ներ, աղբյուրը՝ ԱՄՇ սննդամթերքի հաշվարկներ՝ հիմնված ենթակառուցվածքներում մասնավոր մասնակցության (ԵՄՄ/PP1) ծրագրի տեղեկատվական բազայի վրա</li> </ul>	518
	<i>Ֆինանսական ակտիվներ</i>	1,279
	<ul style="list-style-type: none"> <li>Արժույթ և ավանդներ, աղբյուրը՝ Դրամական և ֆինանսական վիճակագրություն (ներառում է նաև ՏԻՄ-երը)</li> </ul>	184
	<ul style="list-style-type: none"> <li>Պարտքային արժեթղթեր և վարկեր, աղբյուրը՝ ՖՆ-ի տվյալներ և ԴՖՎ, Միջազգային ներդրումների դիրք (ՄՆԴ/ՈՐ), և պետական կորպորացիաներին տրված վարկերի վերաբերյալ հաշվապահական տվյալներ</li> </ul>	347
<ul style="list-style-type: none"> <li>Բաժնետոմսեր և բաժնեմասնակցություններ, աղբյուրը՝ Պետական գույքի կառավարման վարչություն և պարտքային պարտավորությունների վարչություն</li> </ul>	747	
<i>Պարտավորություններ</i>	3,460	

Ենթահատված	Տեղեկատվության աղբյուր	Մլրդ ՀՀ դրամ
	<ul style="list-style-type: none"> <li>• Պարտախնային արժեթղթեր և վարկեր, աղբյուրը՝ ՖՆ-ի տվյալներ</li> <li>• Վարկեր ՊՄԳ-ներից, աղբյուրը՝ ՖՆ-ի անձնակազմի հաշվարկներ, տես վերը</li> <li>• Աշխատանքի հետ կապված կենսաթոշակային իրավունքներ, աղբյուրը՝ զինծառայողների կենսաթոշակային սխեմայի գծով մինչ օրս հաշվեգրված կենսաթոշակային իրավունքներ<sup>30</sup>, վերաբերում է ապագա հոսքերի գուտ ներկա արժեքին և հաշվարկվել է էֆստրապոլացիայի միջոցով (կենսաթոշակների գծով 210 միլիարդի տարեկան դրամական հոսքեր, 20 տարի, 5 տոկոս տոկոսադրույք)</li> </ul>	<p style="text-align: right;">2,631</p> <p style="text-align: right;">518</p> <p style="text-align: right;">312</p>
<p><i>Ա.Բ.Ց-ներ</i> <i>(ՊՈԱԿ-ներ)</i></p>	<p><i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>, աղբյուրը՝ Գույքի կառավարման վարչության տվյալներ՝ հիմնված ֆինանսական հաշվետվությունների վրա</p> <p><i>Ֆինանսական ակտիվներ</i>, աղբյուրը՝ Գույքի կառավարման վարչության տվյալներ՝ հիմնված ֆինանսական հաշվետվությունների վրա</p> <p><i>Պարտավորություններ</i>, աղբյուրը՝ Գույքի կառավարման վարչության տվյալներ՝ հիմնված ֆինանսական հաշվետվությունների վրա (այս թվային տվյալը վերաբերում է միայն կապիտալի հետ չկապված պարտավորություններին, քանի որ սրանք պետական ոչ առևտրային կազմակերպություններ են)</p>	<p style="text-align: right;">130</p> <p style="text-align: right;">62</p> <p style="text-align: right;">150</p>
<p><i>Տեղական կառավարման մարմիններ</i></p>	<p><i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>, աղբյուրը՝ ԱՄՇ-ի անձնակազմի հաշվարկ՝ հիմնված ԱՄՇ-ի Կապիտալի պաշարների տեղեկատվական բազայի վրա</p>	<p style="text-align: right;">547</p>

Ինչ վերաբերում է բաշխողական կենսաթոշակային սխեմայից բխող անուշադակի կենսաթոշակային իրավունքներին, որոնք աղյուսակ 0.2-ում ցույց են տրված ծանոթագրության հոդվածի տեւում, ապա պարտավորությունների մասով հաշվարկված գուտ ներկա արժեքը հաշվարկվել է ԱՄՇ-ի անձնակազմի կազմից էֆստրապոլացիայի միջոցով, ինչպես դա արվել է

<sup>30</sup> Միջազգային վիճակագրական և հաշվապահական ստանդարտներով պահանջվում է կառավարության հաշվապահական հաշվեկշռում աշխատանքային կենսաթոշակային սխեմաների հետ կապված պարտավորության նախաձև: Հայաստանի դեպքում (տես ծանոթագրություն 5) սա ներառում է ոչ կուտակային սխեման, որում ընդգրկված են զինծառայողները (որոնց կենսաթոշակը վճարվում է ընդհանուր բյուջեի, այլ ոչ՝ կուտակված պահուստների հաշվին):

զինծառայողների կենսաթոշակային սխեմայի դեպքում: Այս հաշվարկում դիտարկված չեն ժողովրդագրական, ինչպես նաև ֆալսիֆիկացիաների հնարավոր փոփոխությունները: Ի տարբերություն աշխատանքի հետ կապված կենսաթոշակային սխեմաների, բաշխողական սխեմաներում կենսաթոշակային իրավունքները, «GFSM 2014»-ի մերոպորտանություն համաձայն, չեն ներառվում կառավարության հաշվապահական հաշվեկշռում և փոխարենը ճանաչվում են որպես արտահաշվեկշռային (ենթադրյալ) պարտավորություններ:

### ***Պետական կորպորացիաներ***

#### *Ոչ ֆինանսական կորպորացիաներ*

Հաշվարկներում օգտագործված տվյալների հիմնական աղբյուրը Պետական գույքի կառավարման վարչությունում առկա 188 ՊԶ-ների ֆինանսական հաշվետվություններն էին՝ կազմված հաշվեգրման հիմունքով: Եկամուտների ու ծախսերի տվյալները ստացվել են շահույթի ու վնասների հաշվից: Ոչ ֆինանսական ակտիվներում գուտ ներդրումը, որը արտացոլված չէ շահույթի և վնասների հաշվում, հաշվարկվել է՝ հիմնվելով չորս խճուղագույն կորպորացիաների (Բարձրավոլտ էլեկտրական ցանցերի, ԱԷԿ-ի, Երևանի ՋԷԿ-ի և Որոտանի ՋԷԿ-ի) դրամական հոսքերի մասին հաշվետվությունների վրա: Մնացած ՊԶ-ների հոսքերի մասին անմիջական տվյալների բացակայության պատճառով ոչ ֆինանսական ակտիվներում գուտ ներդրումը հաշվարկվել է որպես հաշվապահական հաշվեկշիռներում արտացոլված ոչ ֆինանսական ընդհանուր ակտիվների փոփոխություն: Վերջին հաշվարկը պետք է դիտարկվի որպես ոչ ֆինանսական ակտիվներով գործարքներին փոխարինող մեծություն, քանի որ այն կարող է ներառել հնարավոր այլ սնտեսագիտական հոսքերը (օր.՝ պաշարների փոփոխություն վերագնահատման արդյունքում, ակտիվների լուծարում և այլն): Ակտիվների և պարտավորությունների պաշարների մասին տվյալները բացառապես հիմնված են առաջնային աղբյուրի՝ հաշվապահական հաշվեկշիռների վրա:

#### *Ֆինանսական կորպորացիաներ*

Պետական ֆինանսական կորպորացիաների գործարքների և հաշվապահական հաշվեկշռի տվյալները հիմնվում են Կենտրոնական բանկի (ներառյալ նրա 10 մասնաճյուղերի) տարեկան հաշվետվության, Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիայի և Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա: Հայաստանի ավանդների վերադարձը երաշխավորող հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները հասանելի չէին առաջնային թիմին, և այդուսակ 0.2-ում որևէ հաշվարկներ ներառված չեն:

***Պետական հատվածի ներսում իրականացված գործարքների և պաշարների դիրքերի բացառում***

Հնդհանուր կառավարության և պետական հատվածի միջև իրականացված էական փոխադարձ գործարքները և պաշարների դիրքերը բացառվել են այնքանով, որքանով սա թույլ են տվել առկա տվյալների աղբյուրները:

Գործարքների բացառման հիմնական դեպքերը կապված են եղել սուբսիդիաների և շահաբաժինների հետ (տվյալները հասանելի են «GFS»-ի տարեկան հաշվետվությունում): Ինչ վերաբերում է պաշարներին, ապա հիմնական տարրը պետական կորպորացիաների սեփական կապիտալում կառավարության մասնակցությունն է (համապատասխանում է պետական կորպորացիաների հաշվետվություններում արտացոլված կապիտալի մեծությանը), պետության կողմից պետական կորպորացիաներին սրամադրված վարկերը և Կենտրոնական բանկում պահվող կառավարության ավանդները:

### Հավելված III. Հատուկ ֆինանսական ռիսկերի հաշվարկ

Մեծաբյան չափում		ՀՆԱ-ի %	Հաշվարկի մեթոդ	Աղբյուր
<b>Ուղղակի ռիսկեր</b>				
Երաշխիքներ	Պարտքի երաշխիքներ	1.4	-	2016թ. պարտքի տարեկ. հաշվետվ.
	Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի անդերոսյրինգ	5.8	-	ԿԲ-ի տրամադրած սեզեկաբյուջեներ
	Մուրհակ ԿԲ-ին	1.5	-	ԿԲ-ի 2017թ. ֆին.հաշվետվ.
ՊՄԳ-ներ	Ընդամենը ներդրումներ	10.2	Հրապարակված տվյալների հիման վրա	Էկոնոմիկայի նախարարության ինտերնետային կայք
	Ընդամենը ռիսկայնություն	9կտ		
Ֆինանսական հատված	ՖՊԿ-ների պարտավորություններ (ա.բ. ԿԲ)	32.6	Միավորների հաշվառման. հաշվեկշիռի տվյալների հիման վրա	Տարեկան ֆին. հաշվետվություններ և դրամական ֆինանսական վիճակագրություն
Պետ. կարգարգիսներ (հանած ԿԲ-ն)	Ոչ ֆին. պետ.կարգարգիսներ	15.4	Միավորների հաշվետու տվյալների հիման վրա	SPED-ի տարեկան մոնիտորինգի հաշվետվություն
Վերավարկված	Վարկեր՝ սրամադրված վերավարկ. միջ-ով	9.6	Հրապարակված տվյալների հիման վրա	Պետ.պարտքի ամսական սեզեկագիր
	Ֆին. հատված	Առևտր. բանկերի պարտավորություններ	66	
Բնական պաշարներ	Հանքարդյունաբերության ոլորտի ազդեցությունը ՀՆԱ-ի տատանդականության վրա	2?	Եկամուտների 2,5%-ը (2016) կազմում է ՀՆԱ-ի 0,5%-ը: 2016թ. գները 2012թ. գների կետից ցածր են:	Սկզբնաղբյուրային 2%
Բնական աղետներ	Միջին տարեկան վնաս	1.3	UNISDR-ի հաշվարկներ՝ հիմնված հաշվետվական տարեկան ծախսերի վրա	Սկզբնաղբյուրային գներ՝ Լոնդոնի մետաղների բորսայի վերկայք:
	Հավանական մաքսիմում վնասներ երկրաշարժից (50 տարի)	2.6	UNISDR-ի հաշվարկներ՝ հիմնված հաշվետվական տարեկան ծախսերի վրա	UNISDR
<b>Երկարաժամկետ ռիսկեր</b>				
Կենսաբուս. ծախսեր	Ոչ կուտակային կենսաբուս. պարտավորություններ	51.5	Հաշվարկվել է կենսաբուս. պարտավորությունների գուտ ներկա արժեքը (տես Հավելված II)	ԱՄՆ-ի անձնակազմի հաշվարկներ

Առաջադաս. ծախսեր	Առաջ. Տարեկան ծախսերի սպասվող աճ՝ ՀՆԱ-ի տոկոսի արտահայտությամբ (2020- 50թթ.)	3.7	ԱՄՆ Բյուջետային հարցերի գեղարտամենտի «Fiscal Policy: How to Assess Fiscal Implications of Demographic Shifts: A Granular Approach», 2016թ. փաստաթղթում նկարագրված մեթոդաբանություն	ԱՄՆ-ի անձնակազմի հաշվարկներ՝ հիմնված ՄԱԿ-ի ժողովրդագրական կանխատեսումների վրա
---------------------	--	-----	--	---

**Fiscal Affairs Department**

International Monetary Fund

700 19th Street NW

Washington, DC 20431

USA

<http://www.imf.org/capacitydevelopment>